ՍԻՎԻԼԻԹԱՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ



# ՀԱՅԱՍՏԱՆ 2008

# ՃԳՆԱԺԱՄ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Սիվիլիթաս հիմնադրամ
Երեւան, Հայաստան

ՍԻՎԻԼԻԹԱՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ
THE CIVILITAS FOUNDATION

# ՀԱՅԱՍՏԱՆ 2008

# ՃԳՆԱԺԱՄ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Սիվիլիթաս հիմնադրամ
Երեւան, Հայաստան

ՍԻՎԻԼԻԹԱՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ
THE CIVILITAS FOUNDATION

Հայաստան 2008. Ճգնաժամ և հնարավորություններ

Հեղինակային իրավունքները՝ Սիվիլիթաս հիմնադրամի:
© Սիվիլիթաս հիմնադրամ. 2008 թ.
Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Տպագրված է Հայաստանում:

Սիվիլիթաս հիմնադրամ
Հյուսիսային պողոտա 1, գրասենյակ 30
Երևան, Հայաստան
info@civilitasfoundation.org

ՀՏԴ 323(479.25):338(479.25)
ԳՄԴ 66.3(2Հ)+65.9(2Հ)30-1
Հ 247

Հ 247 Հայաստան 2008. Ճգնաժամ և հնարավորություններ. -Եր.: Սիվիլիթաս հիմնադրամ, 2008. –80 էջ:

ԳՄԴ 66.3(2Հ)+65.9(2Հ)30-1

ISBN 978-99941-2-209-7

Զեկույցը հրատարակվել է Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման վարչության աջակցությամբ: Միջազգային զարգացման վարչությունը պատասխանատու չէ զեկույցի բովանդակության համար:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ .......... 4

ՀԱՅԱՍՏԱՆ. ՃԳՆԱԺԱՄ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ .......... 6

ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ .......... 8

ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ .......... 39

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ .......... 53

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ .......... 73

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ՝ ԹՎԵՐՈՎ .......... 78

# ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի երիտասարդ անկախ հանրապետությունը շարունակում է փորձ կուտակել միջազգային հարյուրավոր մեծ թե փոքր կազմակերպությունների և հաստատությունների հետ համագործակցությունից և ներգրավվածությունից, սկսած Եվրոպայի համեստ կրոնական բարեգործական կազմակերպություններից մինչև միջազգային հսկաները՝ Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման վարչությունը, ՄԱԿ-ի Զարգացման գործակալությունը, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալությունը, Գերմանական զարգացման գործակալությունը և, իհարկե, Եվրոպական հանձնաժողովը: Հայաստանը, նաև Կովկասն ընդհանրապես, շահում են՝ օգտվելով ինչպես արտասահմանյան փորձագետների գործնական նախաձեռնություններից, այնպես էլ նրանց խորհրդատվությունից և հանձնարարականներից:

Հայաստանի և Կովկասի վերաբերյալ պարբերաբար հրապարակվում են զեկույցներ՝ միանգամյա կամ կանոնավոր: Դրանք թողարկվում են միջազգային գործակալությունների և կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր հաստատությունների կողմից՝ նպատակ ունենալով դառնալ ուղեցույցներ, որոնց օգնությամբ կարելի կլինի պատկերացնել Հայաստանը և հասկանալ նրա ներկայիս քաղաքական, տնտեսական, հասարակական իրավիճակը: Այդօրինակ ևս մեկ հրատարակության նախաձեռնությունը բնականաբար ունի մեկնաբանության կարիք:

«Սիվիլիթաս» հիմնադրամը կարծում է, որ արտասահմանյան փորձագետների առաջ քաշած ընկալումների հետ մեկտեղ, ժամանակն է նաև հայկական տեսանկյունից գնահատել Հայաստանի քաղաքական, տնտեսական և հասարակական զարգացումները և դրանց ներգրավվածությունը տարածաշրջանային և համաշխարհային գործընթացներին:

Սույն զեկույցը նպատակ ունի ներկայացնել Հայաստանի քաղաքական, տնտեսական, և հասարակական իրողությունների, ինչպես նաև երկրի տարածաշրջանային և համաշխարհային դերակատարության անկեղծ և անկողմնակալ գնահատականները, սակայն՝ ներսից հայացքով: Մենք կամենում ենք ներկայացնել, թե ինչպես են հայաստանցիներն իրենք սահմանում իրենց հիմնախնդիրների առաջնահերթությունը, և ինչպիսին են նրանց ներկայանում լուծումները: Ուզում ենք նաև դրվատել մեր ինստիտուտների զարգացումը, քանի որ դրանք

## ՆԱԽԱԲԱՆ

fաղաfական, sնsեսական և հասարակական պատասխանատվության, հաշվետու լինելու ունակության և կայունության ցուցիչներ են: Մենf ուզում ենf անաչառությամբ ցույց sալ, թե ինչն է արդեն արված, և nrը պեsf է լինի հաջոrդ fայլը:

Փասsցի, Հայաստանի fաղաfական և sնsեսական զարգացման նման պարբերական արժեվnrումնեrն ի վեrջո պեsf է nr հանգեն fաղաfական, sնsեսական, հասարակական ժողովrդավարացման nլnrsնեrում երկrի ձեռf բեrած առաջընթացի գնահաsման: Այդ պաsճառով է, nr Միացյալ Թագավnrության Միջազգային զարգացման վարչությունն աջակցություն է ցուցաբեrել այս առաջին զեկույցի hrապարակմանը: Հնարավnrինս ճշգrsnrեն և ազնվnrեն նկարագrելով Հայաստանի նեrկայիս իrավիճակը և մեկնաբանելով վեrջին ութ ամիսնեrի հնարավnrություննեrն ու մաrsահrավեrնեrը, ինչպես նաև հայացf նեsելով դեպի առաջիկա վեց ամիսնեrը, մենf փասsnrեն հավակնում ենf նեrկայացնելու «Դեպի ժողովrդավարություն Հայաստանի առաջընթացի նկարագիr-գնահաsականը»:

# ՀԱՅԱՍՏԱՆ. ՃԳՆԱԺԱՄ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Սույն տարեկան զեկույցը նախատեսում է անդրադառնալ Հայաստանի քաղաքական, տնտեսական, հանրային իրավիճակին՝ դիտարկված ներքին, տարածաշրջանային և համաշխարհային հատույթներում:

Տարին սկսվեց նախընտրական քարոզարշավով, ընթացավ դեպի փետրվարյան նախագահական ընտրությունները, ինչին հաջորդեցին ողբերգական սխալների հետևանք դարձած մարտյան իրադարձությունները, որոնք էլ պայմանավորեցին հետագա ներքին քաղաքական և սոցիալական գործընթացները մինչև տարեվերջ: Տնտեսական առումով, ակնկալիքներն այն էին, որ 2008-ը դժվարին տարի էր լինելու, երբ հարկ էր լինելու ջանքերը նպատակաուղղել անցած տարիներին ձեռք բերված տնտեսական երկնիշ աճի պահպանմանը և միաժամանակ գործնականում ձեռնամուխ լինել տնտեսական անհամամասնությունների վերացմանը, երկրորդ սերնդի բարեփոխումների մեկնարկին: Այդ ակնկալիքները մարմին էին առնում, բայց նաև բարդանում այն պայմաններում, երբ ԱՄՆ-ում ծայր առած վարկային ճգնաժամը ծավալվում էր՝ վերածվելով համաշխարհային տնտեսական աղետի, որն ազդեց նաև Հայաստանի վրա:

Տարածաշրջանային հատույթում, մեր հարևանների և մնացյալ աշխարհի միջև հարաբերությունները, տարվա ընթացքում բացասական ներգործություն ունեցան Հայաստանի տնտեսական և քաղաքական առաջընթացի վրա: Լարվածությունն Իրանի և Արևմուտքի միջև շարունակում էր եփ գալ: Տարեսկզբին վտանգ ծագեց, որ Լեռնային Ղարաբաղի նիրհող հակամարտությունը կարող է Ադրբեջանի հետ նոր բռնկումների տեղիք տալ: Օգոստոսին Ռուսաստանի և Վրաստանի միջև ռազմական բախումը անմիջական քաղաքական և տնտեսական հետևանքներ ունեցավ Հայաստանի համար:

Այս լույսի ներքո, հասկանալի կարող է լինել, թե ինչու ենք մենք այս ժամանակաշրջանը բնորոշում իբրև ճգնաժամային: Տարածաշրջանային թե ներքին առումներով, քաղաքականապես թե տնտեսապես, Հայաստանը ներքաշվեց ճգնաժամերի հորձանուտը:

Այդուհանդերձ, այս բոլոր ճգնաժամերը նշանակալի հնարավորություններ են ընձեռում բացահայտելու, հասկանալու դրանք խթանող ուժերը և գնահատելու ինստիտուցիոնալ այն վակուումը, որն այդ ճգնաժամերը հնարավոր դարձրեց: Դրանց հետևանք հանդիսացող տնտեսական և քաղաքական մռայլ իրավիճակը առաջ բերեց նաև վերափոխումների հրատապության մի զգացողություն, որը թելադրում էր հնարավորությունների որոնումներում ձեռնարկել քայլեր, որ նախկինում չէին ձեռնարկվի:

## ՃԳՆԱԺԱՄ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ուստի այնպիսի վարքագիծը, որ նախկինում թվում էր այլընտրանքային, վտանգալից, անընդունելի, հանկարծ սկսեց ընկալվել որպես արդարացված: Քայլերը, որ նախկինում կարվեին ծայրահեղ զգուշավորությամբ, կարճաժամկետ հեռանկարում սկսեցին ընկալվել որպես անհրաժեշտ և ցանկալի: Եվ եթե վատնենք այն հնարավորությունները, որ այս ճգնաժամերի հորձանուտից կարող են Հայաստանի զարգացումը դուրս բերել նոր հորիզոններ, և մեր գործերը վարենք ինչպես նախկինում, դժվարությունները չեն նահանջի և կշարունակեն ուղեկցել մեզ: Ընդ որում, այս ճշմարտությունը ակնհայտ է ինչպես տարածաշրջանում, այնպես էլ Հայաստանում: Ընդհանուր առմամբ, ժամանակի խորքային և անխուսափելի շաղկապվածություններում ի հայտ են եկել ինչպես հնարավորություններ, այնպես էլ մարտահրավերներ:

# ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Չափազանցություն չի լինի ասել, որ քաղաքական, տնտեսական և աշխարհա-ռազմավարական առումներով 2008 թվականը ջրբաժան դարձավ Հարավային Կովկասի համար:

*Թուրքիան, Եվրոպական միությանն անդամակցելու հեռանկարների անորոշությունից, սկսած 2005 թվականից, իր արտաքին քաղաքականության բևեռակետը արևմուտքից արևելք փոխանցելով, մարտավարական նպատակ էր հետապնդում որպես տարածաշրջանային կարևոր տերություն և էներգետիկ հանգույց քաղաքական կապիտալ կուտակելու:*

Անգամ մինչև այն պահը, երբ ամռան վերջին բռնկվեց համաշխարհային տնտեսական ճգնաժամը, բոլոր երեք երկրներն էլ պայքարում էին ակնկալվող սղաճի /ինֆլյացիայի/ դեմ: Սննդամթերքի գները բարձրանում էին՝ վտանգելով առավել աղքատ և խոցելի խավերի կենսամակարդակը: Իսկ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո արդեն, Ադրբեջանի համար առաջացավ նավթի համաշխարհային գների սրընթաց անկման խնդիրը:

Հարավկովկասյան բոլոր երեք երկրներում անցկացված խնդրահարույց ընտրությունները /Վրաստանում՝ հունվարին և մայիսին, Հայաստանում՝ փետրվարին, և Ադրբեջանում՝ հոկտեմբերին/ ևս մեկ անգամ եկան ապացուցելու, թե որքան հեռու են այս բոլոր երեք երկրները ազատ ու արդար քվեարկության միջազգային չափանիշներից:

Իսկ ռուս-վրացական օգոստոսյան հնգօրյա պատերազմը ոչ միայն ցուցահանեց երեք պետությունների խոցելիությունը անդրսահմանային բեռնափոխադրումների հարցերում, մասնավորապես հարցականի տակ առնելով Ադրբեջան-Վրաստան-Թուրքիա էներգետիկ միջանցքի կենսունակությունը, այլև ի հայտ բերեց Ռուսաստանի միջամտելու պատրաստակամությունը, երբ վտանգված են իր շահերը, նաև միջազգային մեխանիզմների անունակությունը՝ զսպելու ռազմական զարգացումները:

***Թուրքիան***, Եվրոպական միությանն անդամակցելու հեռանկարների անորոշությունից, սկսած 2005 թվականից, իր արտաքին քաղաքականության բևեռակետը արևմուտքից արևելք փոխանցելով, մարտավարական նպատակ էր հետապնդում որպես տարածաշրջանային կարևոր տերություն և էներգետիկ հանգույց քաղաքական կապիտալ կուտակելու: Վրաստանի և Ռուսաստանի միջև ռազմական գործողությունների սկզբից մի քանի օր անց, Անկարայում օգոստոսի 11-ին ունեցած իր ելույթում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ուրվագծեց Կովկասյան կայունության և համագործակցության հարթակի /պլատֆորմի/ գաղափարը, որի նախատիպը Բալկանյան կայունության դաշինքն էր՝ մշակված 1999 թվականին, Կոսովոյի հակամարտության նախաշեմին, և որը պետք է ի մի բերեր Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ռու-

# ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

սաստանի և Թուրքիայի ընդհանուր շահերն ու հեռանկարները:

Տարածաշրջանային այդ ձևաչափից դուրս մղված **Իրանի** գլխին կախվել է անդրտարածաշրջանային էներգետիկ ծրագրերից էլ ավելի մեկուսանալու սպառնալիքը՝ ի հանդիման Ադրբեջանի և Թուրքմենստանի միջև ընթացող հաստեցման գործընթացի և արագորեն հօդս ցնդող «Նաբուկո» գազատարի ծրագրի հեռանկարների: Նման մեկուսացումը Իրանին կարող է մղել էլ ավելի մերձենալու Ռուսաստանի հետ: ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովն արդեն հոկտեմբերին Մոսկվայում հայտարարեց, որ վերջերս ինքը իրանցի պաշտոնյաների հետ քննարկել է Թեհրանի ցանկությունը՝ ընդգրկվելու կովկասյան իրավիճակի շուրջ քննարկումներում:

2004 թ. Վրաստանի նախագահի պաշտոնում Միխեիլ Սաակաշվիլու ընտրությունից հետո **ռուս-վրացական** հարաբերությունները արընթաց վատթարանում էին՝ մասամբ Սաակաշվիլու միանշանակ արևմտամետ կեցվածքի, և մասնավորապես՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու Վրաստանի ձգտումների պատճառով: Իրենց դերն էին խաղում Ռուսաստանի աճող վրդովմունքն ու կասկածամտությունը՝ Ռուսաստանի համար ավանդաբար իր ազդեցության ոլորտը համարվող ռազմավարական կարևոր նշանակության տարածաշրջան ներթափանցելու ԱՄՆ-ի ծրագրերի նկատմամբ: Գործոնների թվում էին նաև Սաակաշվիլու և ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի միջև ձևավորված փոխադարձ ներքին խորը հակակրանքը, ինչպես նաև Ռուսաստանի դերակատարությունը Վրաստանի կենտրոնական իշխանություններ և երկրի անջատական շրջանների՝ Աբխազիայի և Հարավային Օսեթիայի միջև փակուղային հակամարտություններում: Ինչպես նաև՝ Աջարիայում կարծես ցանկալի արդյունքներ բերած նույն ագրեսիվ մեթոդները Հարավային Օսեթիայում և Աբխազիայում կիրառելու Սաակաշվիլու որոշումը:

Արդեն 2008 թվականի սկզբին նշված շրջանների բնակիչների մեծ մասին տրամադրվել էին ռուսական անձնագրեր, ինչով հետագայում մասամբ արդարացվեր Ռուսաստանի ռազմական միջամտությունը Հարավային Օսեթիայում, վերջինիս բնակչությունը վրացական ռազմական սպառնալիքից պաշտպանելու ենթատեքստով:

Ապրիլին Բուխարեստում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովում Վրաստանին և Ուկրաինային մերժվեց Անդամակցության գործողության ծրագրի տրամադրումը, ինչի հույսը վրացական ղեկավարությունը տեւնորեն փայփայում էր: Երեք շաբաթ անց, Ռուսաստանի այն ժամանակվա նախագահ Պուտինը պաշտոնապես ցուցում տվեց իր երկրի կառավարությանը՝ ակտիվացնելու Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հետ կապերն ու համագործակցությունը: Հուլիսին ձեռնարկված գերմանական նախաձեռնությունը՝ վանելու Վրաստանի և Աբխազիայի միջև նոր պատերազմի սպառնալիքը, անընդունելի եղավ երկու կողմերի համար էլ:

Օգոստոսի 7-ի լույս 8-ի գիշերը Ցխինվալիի դեմ ձեռնարկված **վրացական** հանկարծահաս հարձակումը, որը հաջորդել էր շուրջ երեք շաբաթ տևած տարբեր ուժգնության փոխհրաձգություններին, և ապա ռուսական հզոր պատասխանը զգալի հարված հասցրեցին Վրաստանի տնտեսությանը և Վրաստանի

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն ցուցաբերվող միջազգային և ներքին աջակցությունը: Մոտ 35.000 վրացիներ, որոնցից 20.000-ը Հարավային Օսեթիայից, ռազմական գործողությունների արդյունքում տեղահանվեցին և դեռևս չեն վերադարձել իրենց բնակավայրերը:

*Մարտական գործողությունների հինգ օրերի ընթացքում վրացական զինուժի ցուցաբերած թույլ կարողությունները էապես նվազեցրին առաջիկա մի քանի տարիներին ՆԱՏՕ-ին անդամակցելու այդ երկրի շանսերը:*

Ռազմական ուժ կիրառելու Վրաստանի դեռևս անհասկանալի դրդապատճառով որոշումը, ինչպես նաև մարտական գործողությունների հինգ օրերի ընթացքում վրացական զինուժի ցուցաբերած թույլ կարողությունները էապես նվազեցրին առաջիկա մի քանի տարիներին ՆԱՏՕ-ին անդամակցելու այդ երկրի շանսերը: Վրացական զինված ուժերը գտնվեցին բոլորովին անմարտունակ: Տանկային սպաներ ու զինվորներ դասալքեցին վրացական բանակի շարքերը կամ փախան: Վրաստանի ռազմական ենթակառուցվածքների մի զգալի մասը, այդ թվում Թբիլիսիից հարավ գտնվող Մառնեուլի ռազմաօդային հենակայանը, լրջորեն վնասվեցին, ոչնչացվեցին մեծ քանակությամբ տանկեր, հրետանի և այլ զինտեխնիկա:

Օգոստոսի 15-ին ԵՄ-ում նախագահող՝ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի միջնորդությամբ կնքված հրադադարի համաձայնագիրը և դրան հաջորդած՝ սեպտեմբերի 8-ի արձանագրությունը հնարավորություն ստեղծեցին Աբխազիայում և Հարավային Օսեթիայում ԵՄ-ի անզեն դիտորդների տեղակայման համար, սակայն գործնականում դիտորդների մուտքը նշված շրջաններ արգելափակվեց: Հարավային Օսեթիայից ռուսական զորքերի մասնակի դուրսբերումից հետո օսական ոչ կանոնավոր զինված խմբավորումները ազատություն ստացան հատվածայնորեն նշանառության տակ վերցնելու վրացաբնակ գյուղերը:

Օգոստոսի 26-ին Ռուսաստանի կողմից Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախության պաշտոնական ճանաչումը ձևափոխեց Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական բնապատկերը: Չնայած ԵՄ-ի կողմից միջնորդված բանակցություններին, որոնք հոկտեմբերի կեսին սկսվեցին Ժնևում, դժվար է պատկերացնել, որ այս երկու շրջանները կարող են մնալ Վրաստանի կենտրոնական իշխանության վերահսկողության ներքո: Մոսկվան արդեն երկուսի հետ էլ ստորագրել ու վավերացրել է բարեկամության, համագործակցության և փոխադարձ աջակցության պայմանագրեր, և հայտարարել է յուրաքանչյուրում առնվազն 3.700 զինծառայողներ տեղակայելու մասին: Ծրագրվում է նաև Օչամչիրում՝ Աբխազիայի սևծովյան ափեզրին, տեղակայել ռազմածովային հենակայան: Նման քայլերով Ռուսաստանը լրջորեն կխախտի Եվրոպայում սովորական սպառազինությունների վերաբերյալ համաձայնագիրը, որն արդեն միակողմանիորեն կասեցվել էր անցած տարի:

# ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Աբխազիան և Հարավային Օսեթիան ճանաչելով որպես անկախ պետություններ, Ռուսաստանը, հակառակ որոշ վերլուծաբանների սպասումների, երկու շրջանների նկատմամբ ցուցաբերեց հավասարարժեք մոտեցում: Նման մոտեցումը ոչ միայն անտեսում է երկու կազմավորումների տարածքի, բնակչության թվաքանակի և տնտեսական ներուժի տարբերությունները, այլև ուղղակիորեն ի դերև է հանում շատ օսերի ակնկալիքները՝ միավորվելու Ռուսաստանի կազմում գտնվող Հյուսիսային Օսեթիայի հետ: Ռուսաստանի ղեկավարությունն ըստ ամենայնի դժկամություն է հանդես բերում տարածքային նման միախառնումների նկատմամբ, քանի որ այդօրինակ քայլը կարող է յուղ լցնել ադիգեյների ու չերքեզների պահանջներին՝ վերաձևելու ներքին սահմանները Հյուսիսային Կովկասում և ստեղծելու առանձին հանրապետություն, որը կմիավորեր Ադիգեյան, Կարաչաևո-Չերքեզիան և Կաբարդինո-Բալկարիան, ուր նրանք բնակչության մեծամասնությունն են կազմում:

Առաջին հայացքից, հարավկովկասյան երեք հանրապետություններից ներքին խմորումների ամենից քիչ ենթակա է **Ադրբեջանը**: Հատվածայնացված ընդդիմությունն արտամղվել է ակտիվ պայքարից, ընտրական օրենսդրության ազատականացման արևմտյան պահանջներն անտեսված են այն աստիճանի, որ ընդդիմադիր հիմնական հավակնորդներն անգամ անիմաստ են համարում մասնակցությունը նախագահական ընտրություններին: Գործող նախագահ Իլհամ Ալիևը վերընտրվեց ձայների 88.7 տոկոսի մեծամասնությամբ, իսկ իշխող Ենի Ազերբայջան կուսակցությունը ուղիներ է մտմտում սահմանադրական փոփոխություններ անցկացնելու՝ վերացնելու համար նախագահի պաշտոնավարման ժամկետների սահմանափակումները: Կասպյան նավթի վաճառքից ստացված եկամուտները նպատակաուղղվում են ենթակառուցվածքների զարգացմանը և զգալիորեն՝ պաշտպանական կարիքներին, ակնկալելով հայերին հակելու նշանակալի զիջումների գնալու Լեռնային Ղարաբաղի հարցում:

*Կասպյան նավթի վաճառքից ստացված եկամուտները նպատակաուղղվում են ենթակառուցվածքների զարգացմանը և զգալիորեն՝ պաշտպանական կարիքներին, ակնկալելով հայերին հակելու նշանակալի զիջումների գնալու Լեռնային Ղարաբաղի հարցում:*

Այդուամենայնիվ, Ադրբեջանը նույնպես դիմակայում է ներքին սպառնալիքներին և, առաջին հերթին՝ աղքատությանը, մեծ քաղաքներում և գյուղերում կենսամակարդակների տարբերության անհագնացող աճին, միաժամանակ՝ կառավարության կոշտ և հակառակ արդյունքը տվող քաղաքականությանը, որը վարվում է ընդդեմ սպառնալիք ընկալվող իսլամական արմատականության: Սրա դրսևորումներից էին անցած մի քանի ամիսների երկրի հյուսիսային շրջաններ հարևան Դաղստանից զինյալ խմբավորումների ներթափանցումները: Ավար, լեզգի և ծախուր փոքրամասնությունների պահանջները, թե իրենց նկատմամբ վարվում է ձուլման բռնի քաղաքա-

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

կանություն, կարող են առաջ բերել դրսից նրանց օժանդակության ցուցաբերման նոր դրսևորումներ, ինչը կարող է ազգամիջյան հուզումներ բորբոքել հյուսիսային Ադրբեջանում:

Տնտեսական ոլորտում, նավթի համաշխարհային գների անկումը հազիվ թե չհարվածի Ադրբեջանի նշանակալի տնտեսական աճին: 2008թ. սեպտեմբերին ներկայացված 2009թ. պետբյուջեի նախագիծը կառուցված էր մեկ բարելի համար 70 դոլար արժեքի հաշվարկով:

*Պատերազմական գործողություններ սկսելու նախագահ Սաակաշվիլու հապճեպ որոշումը, որը հանգեցրեց նավթի արտահանման թեկուզև ժամանակավոր դադարեցման, չէր կարող բացասաբար չանդրադառնալ Սաակաշվիլու և Ալիևի հարաբերությունների վրա:*

Արդյոք մարդու իրավունքների ոտնահարման և ազատ մամուլի գրեթե իսպառ բացակայության հարցերում ԱՄՆ-ի քննադատությունից վրդովվածությունն էր պատճառը, թե ինքնապահպանման պարզ բնազդը, Ադրբեջանն ավելի ու ավելի շատ էր տարամիտվում Արևմուտքից ու հակվում դեպի Մոսկվան դեռևս մինչև ռուս-վրացական պատերազմը:

Սեպտեմբերի սկզբին Ադրբեջան կատարած կարճատև այցի ժամանակ ԱՄՆ-ի փոխնախագահ Դիք Չեյնիին ցույց տրված սառը ընդունելությունը, և դրան անմիջապես հաջորդած՝ Ալիևի այցը Մոսկվա՝ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի հետ խորհրդակցություններ անցկացնելու նպատակով, եկան ընդգծելու ԱՄՆ-ի ազդեցության նվազումը:

Միաժամանակ, պատերազմական գործողություններ սկսելու նախագահ Սաակաշվիլու հապճեպ որոշումը, որը հանգեցրեց նավթի արտահանման թեկուզև ժամանակավոր դադարեցման, չէր կարող բացասաբար չանդրադառնալ Սաակաշվիլու և Ալիևի հարաբերությունների և, առհասարակ, վրաց-ադրբեջանական առանց այդ էլ բարդ հարաբերությունների ամբողջ համալիրի վրա:

- Երկու երկրները Վրաստանի տարածքով Թուրքիա ադրբեջանական նավթի ու գազի արտահանումից առավելագույն օգուտներ քաղելու համատեղ շահեր ունեին: Թբիլիսիի և Բաքվի միջև 2000-ականների սկզբներին ծագած տարաձայնությունները Վրաստանով ադրբեջանական նավթի տարանցման սակագների հարցում ձգձգեցին Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարի կառուցման վերաբերյալ վերջնական համաձայնության կնքումը և հանգուցալուծվեցին միայն Ադրբեջանի այն ժամանակվա նախագահ Հեյդար Ալիևի նշանակալի զիջումներից հետո: Համանման հետագա համաձայնություններին նույնպես նախորդում էին երկարատև և բարդ սակարկությունները, որոնք ավելի էին

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

բարդանում Վրաստանի և Ադրբեջանի հակընդդեմ շահերի բախմամբ:

- Ադրբեջանի կասկածամտությունն ու անհանդուրժողությունը հայ-վրացական ցանկացած համագործակցության նկատմամբ, որից Հայաստանը կարող էր օգուտներ ունենալ:

- Ընդհանուր սահմանի հարցում, հատկապես Դավիթ Գարեջայի պատմական վանական համալիրի հետ կապված երկարատև վեճը:

- Երկու երկրներում համապատասխան փոքրամասնությունների առկայությունը, որոնցից յուրաքանչյուրը պնդում էր տասնամյակներ շարունակ իր նկատմամբ բռնաձուլման քաղաքականության վարումը, նույնպես երանգավորում են վրաց-ադրբեջանական հարաբերությունները: Գրեթե կես միլիոն ադրբեջանցիներ են բնակվում Թբիլիսիից հարավ, Ադրբեջանի սահմանի հարևանությամբ: Տասնամյակներ շարունակ նրանք պնդում էին, որ իրենց նկատմամբ իրականացվում է խտրականություն, իսկ 1980-ականների վերջերին առանձին հանրապետություն ստեղծելու անհաջող փորձ կատարեցին: Ադրբեջանում շատ ավելի սակավաքանակ վրացական փոքրամասնությունը երկար ժամանակ պայքարում էր վրացերենով կրթություն ստանալու իրավունքի և վրացական եկեղեցի բացելու համար:

- Վրաստանն ու Ադրբեջանը համերաշխություն են դրսևորում այն դեպքերում, երբ հարցը վերաբերում է իրենց երկրներում ազգային ինքնորոշման շարժումներին: Այս ընդհանուր կեցվածքը կարևոր պատճառ հանդիսացավ ՎՈՒԱՄԻ՝ Վրաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի և Մոլդովայի դաշինքի, կազմավորման համար և դարձավ դաշինքի օրակարգի առանցքներից մեկը:

- Վերջապես, 1990-ականներից սկսված՝ Թուրքիայի համագործակցությունը Վրաստանի և Ադրբեջանի հետ Վրաստանի տարածքով կասպյան ածխաջրածինների ներկրման շուրջ առաջ բերեց զգալի համագործակցություն տնտեսության այլ ոլորտներում ևս, ինչպես նաև արտահայտվեց Թուրքիայի կողմից երկու երկրներին տրամադրվող ռազմական նշանակալի օգնությամբ: Թուրքիան երկար ժամանակ հանդիսանում է Ռուսաստանից հետո Վրաստանի երկրորդ խոշոր առևտրային գործընկերը, իսկ 2008-ի նոյեմբերի 1-ին կնքվեց նաև ազատ առևտրի համաձայնագիր: Թուրքիան օժանդակություն է ցուցաբերում Վրաստանին և Ադրբեջանին վերջիններիս զինված ուժերի բարեփոխման և անձնակազմի որակավորման բարձրացման հարցերում, նպաստելով ՆԱՏՕ-ի չափորոշիչներին համապատասխանեցմանը, ինչպես նաև օգնություն է ցույց տալիս Վրաստանի ներքին և սահմանապահ զորքերին՝ տրամադրելով սարքավորումներ և նյութական

միջոցներ: Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության վերաբերյալ վերջին համաձայնագիրը կնքվել է 2007 թ. փետրվարին:

*Ռուս-վրացական բախումը Կովկասում առաջացրեց ևս մեկ բաժանարար գիծ՝ ի հավելումն առկա երկու բաժանարար գծերի, որոնցից մեկը Հայաստանի և Թուրքիայի միջև է, մյուսը, անցնելով Լեռնային Ղարաբաղով, բաժանում է Հայաստանն ու Ադրբեջանը:*

## ՀԱՅԱՍՏԱՆԸ, ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՆԴԻՆ

Այս ենթատեքստում է Հայաստանն իրականացնում իր երկկողմ հարաբերությունները: Իր չորս հարևանների՝ **Թուրքիայի, Վրաստանի, Իրանի ու Ադրբեջանի**, և երեք ուժային կենտրոնների՝ Մոսկվայի, Վաշինգտոնի և Բրյուսելի հետ Հայաստանի հարաբերությունները միշտ եղել են ամենակարևորը, և այս տարին բացառություն չէր: Հայաստանի (և անցումային այլ երկրների) փոփոխվող ընկալումներն ու աճող ակնկալիքներն ազդեցություն թողեցին, անգամ վերափոխեցին երեք հիմնական խաղացողների հետ Հայաստանի հարաբերությունները: Բացի այդ, ներքին և միջազգային ձևափոխություններն ազդեցություն թողեցին հարևան չորս պետությունների և, ըստ սահմանման, նրանցից յուրաքանչյուրի հետ Հայաստանի հարաբերությունների վրա:

Ռուս-վրացական բախումը Կովկասում առաջացրեց ևս մեկ բաժանարար գիծ՝ ի հավելումն առկա երկու բաժանարար գծերի, որոնցից մեկը Հայաստանի և Թուրքիայի միջև է, մյուսը, անցնելով Լեռնային Ղարաբաղով, բաժանում է Հայաստանն ու Ադրբեջանը: Ռուս-վրացական բախումը անգամ փոխեց հարևանների միջև երկկողմ, ինչպես նաև կովկասյան պետություններից յուրաքանչյուրի հետ Ռուսաստանի, Միացյալ Նահանգների և Եվրոպայի հարաբերությունների ենթատեքստը: Այդ երեք խաղացողներից յուրաքանչյուրը նորովի, որպես մի ամբողջականություն դիտեց տարածաշրջանը և նրանում ընդգրկված բոլոր երկրները, և վերանայեց քաղաքականությունն ու մոտեցումները:

Այնուամենայնիվ, ընդհանուր իրավիճակը՝ տարածաշրջանի իրական աշխարհաքաղաքականությունը, չի փոխվել: Այնպես որ, Հայաստանի արտաքին քաղաքականության ընտրությունը մնում է սահմանափակ: Այդուհանդերձ, ճգնաժամը նոր պատեհություններ բերեց ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի ու Ադրբեջանի համար: Մարտահրավերն այն է, թե այս երկրներից յուրաքանչյուրն ի վիճակի կլինի՞ վերանայել իր ազգային շահերին հասնելու ընտրած ճանապարհը՝ մի կողմ դնելով կարճաժամկետ, այսրոպեական օգուտները և տեսնել ստեղծվող ընդհանուր պատկերը և դրանից բխող լայն հնարավորությունները: Սա հատկապես ճիշտ է, երբ նկատի ունենք եվրոպական շահերը և տարածաշրջանում եվրոպական ձգտումները: Երկարատև կտրվածքով, այս երկուսը միասին կարող են

ավելի դրական ազդեցություն ունենալ յուրաքանչյուր երկրի վրա:

Իհարկե, յուրաքանչյուր երկրի հնարավորությունը՝ առիթը բաց չթողնելու, հեռուն մտածելու և ռիսկեր վերցնելու ունակությունները տարբերվում է ոչ միայն ազգային շահերի իրենց սահմանումից, այլ, հավանաբար, որ ավելի կարևոր է՝ ներքին քաղաքական իրավիճակից: Ներքին ամրությունը և կայունությունը միջազգային իմաստով կավելացնի կառավարության ընտրության հնարավորությունը: Միջազգային հանրությունը վերապահումներով ընդունեց հարավկովկասյան երեք երկրներում այս տարի անցկացված ընտրությունները: Այդ ընտրությունների արդյունքում ձևավորված իշխանությունները ստիպված են պայքարել ընդդիմության և սոցիալական դժգոհության դրսևորումների դեմ, ինչը ազդելու է հակամարտությունների և հարևանների հետ հարցերում խիզախ քայլեր կատարելու նրանց կարողության վրա:

## Հայաստան-Թուրքիա

Տարվա սկզբում թվում էր, որ Հայաստան-Թուրքիա հարաբերությունները փակուղու մեջ են: Երկու երկրների միջև սահմանը մնում էր փակ, պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ չկային՝ չնայած նախարարների միջև բարձր մակարդակի ոչ պարբերական և փոխարտգործնախարարների մակարդակով միջնորդավորված հանդիպումներին:

Հայկական կողմի մտադրությունը շարունակում էր մնալ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և սահմանի բացումը: Թուրքիան ևս արտահայտվում էր հարաբերությունները բնականոն դարձնելու օգտին և հստակ ներկայացնում էր այն խնդիրները, որոնք, իր կարծիքով, դրա համար խոչընդոտներ են հանդիսանում: Թուրքիայի համար գոյություն ունեն նմանօրինակ երկու մտահոգություններ. Հայաստանի և Թուրքիայի միջև երկկողմ ուղղակի հիմնախնդիրներ և հարցեր, որոնք անմիջական ազդեցություն են թողնում այդ հարաբերությունների վրա, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունների վրա ազդող անուղղակի խնդիրներ, ինչպիսին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացն է:

Ուղղակի, երկկողմ հարցերը պարունակում են չորս տարր.

- երկկողմ հարաբերություններ ստորագրելու արձանագրություն, որն, ըստ սահմանման, կընդգրկի.
- պետություններից յուրաքանչյուրի միջազգայնորեն ճանաչված ներկա սահմանների ամրագրումը,
- սահմանների բացումը և,
- երկու երկրների և ժողովուրդների միջև բոլոր խնդրահարույց, չլուծված հարցերը՝ ներառյալ 1915 թվականի դեպքերը, քննարկելու համար հանձնաժողովի ձևավորումը:

Անշուշտ, այս մոտեցումը կարող է աշխատել միայն այն դեպքում, եթե Թուրքիան ցանկանում է երկկողմ լուրջ առաջընթաց և պատրաստակամ է Հայաստան-Թուրքիա երկկողմ հարաբերությունները տարանջատել Ադրբեջանի ճնշումներից: Միջազգային, ինչպես նաև

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայաստանի և Թուրքիայի դիտորդները ասում են, որ Թուրքիայի մտադրությունը պարզ չէ:

Նախագահ Ռոբերտ Քոչարյանի վարչակազմը բանակցություններ վարելով՝ չէր ներգրավվում բարձր մակարդակի հրապարակային հանդիպումներում և գործողություններում: Դա ամենաբարձր մակարդակով պարզորոշ արտահայտվող այն մտահոգությունների արդյունքն էր, որ Հայաստանը չի ցանկանում ներգրավվել գործընթացի մեջ հանուն գործընթացի և չի ուզում պաշտպանել առանց արդյունքի հասնելու առաջընթաց ձևացնելու Թուրքիայի փորձերը:

Թուրքիայի համար, այդուհանդերձ, ցանկացած առաջընթաց, եթե նույնիսկ դա գործընթաց է հանուն գործընթացի, օգտակար է և անհրաժեշտ: Այլ խոսքերով, եթե Հայաստանի համար առաջընթաց է նշանակում բաց սահմանները ու բնականոն հարաբերությունները, ապա Թուրքիայի համար պարզապես առաջընթաց կարող են լինել պաշտոնական և ոչ պաշտոնական բնույթի հանդիպումները և իրադարձությունները:

Հաշվի առնելով Եվրոպական միության անդամակցության հարցերը և բոլոր հարևանների՝ ներառյալ Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու իր կարողությունը ցուցադրելու անհրաժեշտությունը, Հայաստանի և Թուրքիայի միջև գործունեության ցանկացած նշան կբավարարի Թուրքիային:

Շարունակվող գործընթացը վկայակոչելը Թուրքիայի առաջնորդներին հնարավորություն կտա ասելու, ինչպես դա արեցին վերջերս, որ հայ-թուրքական հարցերում երրորդ կողմի ներգրավման կարիք չկա, որովհետև Հայաստանը և Թուրքիան արդեն իսկ բանակցում են: Դա նրանց ցեղասպանության ավելի լայն ճանաչման միջազգային ջանքերի փաստացի ընթացքը փոխելու, թուլացնելու, ավելին՝ կասեցնելու փորձերի հնարավորություն կընձեռի: Հայաստանում շատերը կարծում են, որ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի նամակը, որով առաջարկում էր ձևավորել պատմաբանների հանձնաժողով, և հետագայում, ի պատասխան մերժում ստանալու փաստը չընդունելու նրա կեցվածքը, նման ռազմավարության ուղղակի մաս էին կազմում:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի մոտեցումը նկատելիորեն տարբեր է եղել: Նա չի խուսափում հրապարակային բարձր մակարդակի հանդիպումներից: Հակառակը, հունիսին Մոսկվայի հայ համայնքի հետ հանդիպման ընթացքում Սարգսյանը հրապարակավ հայտարարեց Թուրքիայի նախագահին Երևան հրավիրելու իր մտադրությունը, որպեսզի միասին դիտեն սեպտեմբերին Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումը: Դրան նախորդել էր նախագահ Աբդուլլահ Գյուլից Սերժ Սարգսյանին ուղղված ջերմ շնորհավորական նամակը:

Հայաստանի նախագահը մեկ այլ հայտարարություն արեց, որն արտաքին քաղաքականության փոփոխություն էր թվում: «Թուրքական կողմն առաջարկում է ձևավորել մի հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրի պատմական փաստերը: Մենք դեմ չենք այդպիսի հանձնաժողովի ստեղծմանը, բայց այն ժամանակ, երբ կբացվի սահմանը մեր պետությունների միջև: Այլապես, այն կարող է դառնալ հարցը տարիներով երկարաձգելու և շահարկելու միջոց», ասել էր նախագահ Սարգսյանը:

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Այս հայտարարությունը բառացիորեն որպես հակասություն հնչեց հայկական այն դիրքորոշման, որ միայն պատմությունը հետազոտող հանձնաժողովն անընդունելի է: Ոչ միայն այն պատճառով, որ դա համազոր է պատմական փաստերը հարցականի տակ դնելուն, այլ նաև՝ որ երկու երկրների միջև եղած հիմնախնդրում ուշադրությունը սևեռվում է պատմության, այլ ոչ՝ հարաբերությունների կարգավորման և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հրատապության վրա: Կանխամտածված էր կամ լեզվի սայթաքում, ճնշման տակ արված կամ իր կամքով՝ հաջորդ մի քանի շաբաթներին տերմինաբանությունը փոխվեց, և հայկական կողմը նորից սկսեց խոսել միջկառավարական երկկողմ հանձնաժողովի մասին, որը կանդրադառնար բոլոր հարցերին, բայց՝ սահմանի բացումից հետո:

Նույնիսկ երբ այս նուրբ տակտիկական տարբերության նշանակությունը վիճարկվեց՝ Գյուլին հրավեր ուղարկելը հայկական կողմին տվեց դիվանագիտական զգալի վարկ: Ազդարարվեց նոր հարաբերությունների, նոր ձնհալի մասին:

Օգոստոսին, երբ աշխարհաքաղաքական իրադրությունը Թուրքիայի հարևանությամբ փոխվեց, Թուրքիան առաջարկեց ձևավորել «Կովկասյան անվտանգության և համագործակցության պլատֆորմ», սա Թուրքիային տվեց «օրինականություն» Կովկասում, մասնավորապես Հայաստանում ակտիվանալու համար:

Աշխարհը նույնպես սկսեց տարածաշրջանին և հատկապես թուրք-հայկական փակ սահմանին և թուրք-հայկական սառեցված հարաբերություններին այլ կերպ նայել: Այսօր Ռուսաստանը սահմանը բաց տեսնելու հարցում ավելի շատ է հետաքրքրված վրացական տարանցման համակարգին այլընտրանք ապահովելու համար, այդպիսով նվազեցնելով Վրաստանի կարևորությունը: Ռուսաստանը հայկական երկաթուղային համակարգի կառավարողն է և հետևաբար՝ տրանսպորտային բաց միջանցքների, ներառյալ չգործող Կարս-Գյումրի երկաթուղու գործարկումից օգուտ կքաղի:

*Շարունակվող գործընթացը վկայակոչելը Թուրքիայի առաջնորդներին հնարավորություն կտա ասելու, ինչպես դա արեցին վերջերս, որ հայ-թուրքական հարցերում երրորդ կողմի ներգրավման կարիք չկա, որովհետև Հայաստանը և Թուրքիան արդեն իսկ բանակցում են:*

Միացյալ Նահանգները նույնպես շահեր ունի բաց սահմաններից, բարելավված հարաբերություններից և Ռուսաստանից Հայաստանի իրական կամ այդպես ընկալելի կախվածության նվազումից: Եվրոպական միությունը կիսում է այս հեռանկարը: Չնայած տարբեր պատճառներին և հետաքրքրություններին՝ Բրյուսելի, Մոսկվայի և Վաշինգտոնի դիրքորոշումների համընկնումը Թուրքիային հարաբերություններ բարելավելու առիթ տվեց, այն-

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

ղես, ինչղես ինfն էr ցանկանում սաhմանել դrանf: Նախագահ Սաrգսյանի hrավեrը նrանց sվեց այդ ղաsեhությունը:

Եrբ վեrջաղես Թուrfիայի նախագահն ընդունեց hrավեrը՝ նախաsեսված hանդիղումից բառացիոrեն մի fանի օr առաջ, գովասանfնեr hnղեցին: Միջազգային hանrությունը, nrը ցանկանում էr hաrաբեrություններում դrական sեղաշարժ sեսնել ինչղես նաև hամոզվել, nr Անկաrան ձեrբազաsվում է Հայաստանի և hայեrի hանդեղ իr անsrամաբանական մոsեցումից, ողջունեց այս fայլը:

*Օգոստոսին, երբ աշխարհաքաղաքական իրադրությունը Թուրքիայի հարևանությամբ փոխվեց, Թուրքիան առաջարկեց ձևավորել «Կովկասյան անվտանգության և համագործակցության պլատֆորմ», սա Թուրքիային սվեց «օրինականություն» Կովկասում, մասնավորապես Հայաստանում ակտիվանալու համար:*

Նախագահ Գյուլը Հայաստանում մնաց միայն վեց ժամ, իսկ նrան բեrած նախագահական ինfնաթիռի շաrժիչն այդ ընթացfում չանջաsվեց: Փակ դռնեrի hեsևում hանդիղումնեrում և լrագrողնեrի hեs hաrցազrույցնեrում եrկու նախագահնեrը զգn sղավnrություն էին թողնում:

Սակայն շուsով ակնհայs դաrձավ, nr hաճելի hանդիղմանը դrական fայլեr hաջnrդելու hամաr hիմfեr չէին դrվել: Նախագահ Գյուլի խոսfով՝ սաhմանի բացման, անգամ Կաrս-Գյումrի եrկաթգծի գոrծաrկման մասին խոսակցություն չի եղել: Փոխաrենը, շուsով Թուrfիայի աrsագոrծնախաrաrը hայsաrաrեց. «Եթե մեզ hաջողվի աrագ առաջընթաց աrձանագrել խնդիrնեrի լուծմանն ուղղված մեr նախաձեռնություններում, աղա կաrիf չի լինի, nrղեսզի այդ խնդիrնեrը fննաrկվի nrևէ եrrոrդ եrկrի խոrhrդաrան: Մենf կաrող ենf նrանց ասել. «Ձեr գոrծեrով զբաղվեf: Հայաստանը և Թուrfիան իrաr hեs լավ լեզու են գsնում»: Նախագահ Սաrգսյանը hայsաrաrեց, nr Հայաստանը Թուrfիայից sաrածfային ղաhանջնեr չունի: Չնայած Հայաստանի նախկին կառավաrությունները ինչ-nr ձևով hասկացնում էին, nr Հայաստանը չունի sաrածfային ղաhանջնեr, նrանf վաrանում էին նման բացաhայs, միակողմանի hայsաrաrություններից՝ առանց ssանալու nrոշակի ծանrակշիռ ժեss hակառակ կողմից:

Հայաստանյան շաs մեկնաբանություննեr hամաhունչ էին այս sեsակեsին: Կառավաrության fառակողմ կոալիցիայի կrsեr անդամ Հայ յեղափոխական դաշնակցությունը մեrժեց միակողմանի զիջումները և ղնդեց, nr եrկու եrկrնեrի միջև hաrցեrը fաղաfական են և ոչ թե ղաsմական բնույթի:

Մինչև նոյեմբեr նախագահ Սաrգսյանը ձևավոrում էr hայկական դիrfոrոշումը

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

վերոնշյալ չորս տարրերով: Անդրադառնալով պատմաբանների հանձնաժողովին, նա ասաց. «Դրա անհրաժեշտությունը բացարձակապես չկա: Մենք չենք կարծում, որ դրանով հնարավոր կլիներ որևէ բանի հասնել: Մենք ցանկանում ենք առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատել երկու երկրների միջև, բացել սահմանները, այնուհետև միջկառավարական գործընթացի մակարդակով կարող ենք քննարկել հարևան երկրներին վերաբերող բոլոր հարցերը: Թուրքիայի կողմից Ցեղասպանության ճանաչումը մենք նախապայման չենք համարում հարաբերությունների հաստատման համար: Մենք ցանկանում ենք հարաբերություններ, բայց ոչ՝ «ցանկացած գնով»:

Հետևաբար, Թուրքիայի նպատակներին վերաբերվող նույն հարցը շարունակվում է, կամ էլ Թուրքիան իրոք մտափոխվել է և որոշել տարանջատել Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունները Լեռնային Ղարաբաղի հիմնահարցից և ցանկանում է կարգավորել հարաբերությունները, բացել Հայաստանի հետ սահմանը և հաստատել պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ: Այդ դեպքում միակ խոչընդոտը մնում է պատմաբանների հանձնաժողով ձևավորելը: Կամ, Թուրքիան պահպանում է գործընթացից շահելու իր քաղաքականությունը, շարունակում Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունները կապել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի հետ, մտադրություն չունենալով բացել Հայաստանի հետ սահմանը նախքան ղարաբաղյան հակամարտության կարգավորումը հօգուտ Ադրբեջանի, նույնիսկ եթե գտնվում է այդ քայլը կատարելու համար հարմար դիրքում:

*Նախագահ Գյուլի խոսքով՝ սահմանի բացման, անգամ Կարս-Գյումրի երկաթգծի գործարկման մասին խոսակցություն չի եղել:*

### Լեռնային Ղարաբաղի հակամարտություն

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման բանակցությունները շարունակվում են Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) հովանու ներքո՝ Մինսկի խմբի եռանախագահող պետությունների՝ Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջնորդությամբ:

*Թուրքիայի կողմից Ցեղասպանության ճանաչումը մենք նախապայման չենք համարում հարաբերությունների հաստատման համար: Մենք ցանկանում ենք հարաբերություններ, բայց ոչ՝ «ցանկացած գնով»:*

Արտգործնախարարների մակարդակով չորս տարիների (2004-2007 թթ.) բանակցություններից հետո, որը հայտնի դարձավ Պրահյան

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

գործընթաց անունով, կողմերը ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Ռուսաստանի եռանախագահների հետ նախագծեցին «Հիմնարար սկզբունքներ» անունով մի փաստաթուղթ, որը ԵԱՀԿ Դեպոզիտարիա ներկայացվեց Մադրիդում 2007 թ. նոյեմբերին կայացած ԵԱՀԿ Նախարարների խորհրդի հանդիպմանը: Այս փաստաթուղթը, որը չի ստորագրվել և պարտադիր ուժ չունի, ըստ եռանախագահների՝ արտացոլում է հայերի ու ադրբեջանցիների մտահոգություններն ու առաջնահերթությունները:

*Խաղաղության ջատագովներն ընդունում են, որ խաղաղությունը հնարավոր կդառնա միայն այն դեպքում և այն ժամանակ, երբ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցում որոշ պարզություն լինի, և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջև աշխարհագրական կապի անհրաժեշտության և Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի շրջակա տարածքների վերադարձի հարցում համաձայնություն ձեռք բերվի:*

Փաստաթուղթը հիմնված է հիմնախնդրի չորս հիմնական բաղկացուցիչ մասերի վրա.

- Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակ,
- ներկայում հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքների վերադարձ,
- փախստականների վերադարձ և
- անվտանգության երաշխիքներ:

Հայկական կողմը հայտարարել է, որ այդ փաստաթուղթը ապահովում է համապարփակ մոտեցում բոլոր հիմնախնդիրներին՝ քայլ առ քայլ իրագործմամբ: Իր ընտրությունից հետո Հայաստանի նոր նախագահն ասաց, որ կշարունակի բանակցել այդ փաստաթղթի հիման վրա: Նույնը հայտարարեց Ադրբեջանը: Միևնույն ժամանակ և՛ ադրբեջանցիները, և՛ հայերը շարունակում են իրենց վերապահումներն արտահայտել փաստաթղթի որոշ դրույթների շուրջ: Եռանախագահները նույնպես պնդում են, որ փաստաթուղթը կատարյալ չէ:

Խաղաղության ջատագովներն ընդունում են, որ խաղաղությունը հնարավոր կդառնա միայն այն դեպքում և այն ժամանակ, երբ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցում պարզություն լինի, և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջև աշխարհագրական կապի անհրաժեշտության և Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի շրջակա տարածքների վերադարձի հարցում համաձայնություն ձեռք բերվի:

Ադրբեջանում կարծիքի գրեթե բացարձակ միասնություն կա առ այն, որ առնվազն բոլոր այդ տարածքները պետք է վերադարձվեն Ադրբեջանի իրավասությանը: Հայաստանում

# ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

սակայն չկա միասնական ըմբռնում այդ տարածքների ապագայի և դրանց վերադարձի հնարավորության վերաբերյալ: Այդուհանդերձ լուծումը կախված է կողմերի համաձայնությունից՝ տարածքների վերադարձի բնույթի, հաջորդականության և ժամանակացույցի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող միջանցքի բնույթի և կարգավիճակի շուրջ:

Ադրբեջանի դիրքորոշումը միջանցքի վերաբերյալ ենթադրում է, որ միջանցքը կարող է օգտագործվել հայերի կողմից՝ գտնվելով միջազգային հովանու ներքո: Հայկական կողմը պնդում է, որ միջանցքը պետք է նույն կարգավիճակն ունենա, ինչ որ Լեռնային Ղարաբաղը, թե՛ այժմ, թե՛ ապագայում: Տարածքների վերադարձի առումով կարծիքները բաժանվում են. հայերի մի մասը պնդում է, թե որևէ տարածք չպետք է վերադարձվի, մյուսները՝ որ միայն մասամբ վերադարձվի և վերադարձը կապվի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակն ավարտուն տեսքի բերելու հետ, մինչդեռ երրորդ խումբը կարծում է, որ բոլոր տարածքները պետք է անհապաղ վերադարձվեն, բայց ցամաքային միջանցքը պահպանվի:

Կարծիքների այսպիսի բազմազանությունը բացատրվում է անվստահության մտահոգությունների տարբեր աստիճաններով:

Մինչ բոլոր այս հարցերը մնում են չլուծված, Ռուսաստան-Վրաստան օգոստոսյան բախումն ամբողջովին փոխեց միջավայրը: Այն առաջ բերեց ողջ տարածաշրջանի նկատմամբ միջազգային հետաքրքրություն, այդ թվում և՝ դեպի այս թվացյալ լուռ և տեղից չշարժվող հակամարտությունը: Կողմերն իրենց վրա զգացին դեպի առաջ քայլեր կատարելու նոր ճնշում:

Ռուսաստանը զիջակցեց, որ Վրաստան ռազմական ներխուժումից հետո կարիք ունի ցույց տալու, որ կարող է Կովկասում նաև խաղաղ ներգրավվում ապահովել: Բացի այդ, որպես հավասարակշռում Հարավային Օսեթիան և Աբխազիան անկախ պետություններ ճանաչելուն, Ռուսաստանը կարիք ուներ ցուցաբերել ըմբռնում առ այն, որ ոչ բոլոր հակամարտությունները կարող են կամ պետք է լուծվեն այդ նույն ճանապարհով:

*Ռուսաստանը զիջակցեց, որ Վրաստան ռազմական ներխուժումից հետո կարիք ունի ցույց տալու, որ կարող է Կովկասում նաև խաղաղ ներգրավվում ապահովել:*

Միջազգային հանրության մեծ աղմուկը Ռուսաստանի կողմից Վրաստանի նկատմամբ ուժ գործադրելու հարցում նպաստեց Ադրբեջանի ռազմական հռետորությունը լռեցնելուն՝ համենայն դեպս ժամանակավորապես: Թուրքիա-Հայաստան հարաբերությունները ջերմացնելու հակումը, որն ինչ որ չափով բխում է Ռուսաստանի շահերից՝ Թուրքիայի միջոցով Հայաստան մուտք ապահովելու և Հայաստանի միջոցով՝ Թուրքիայի շուկա, նաև Ադրբեջանին դրդեց վերանայել իր վերաբերմունքը խնդրի կարգավորման նկատմամբ:

Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևի հրավերով Հայաստանի և Ադրբեջանի նախագահները նոյեմբերի սկզբին հանդիպեցին

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Մոսկվայում: Դա երկու նախագահների երկրորդ հանդիպումն էր փետրվարին Սարգսյանի ընտրվելուց և առաջինը՝ Իլհամ Ալիևի՝ երկրորդ ժամկետով հոկտեմբերի կեսին վերընտրվելուց հետո:

Երեք նախագահների ստորագրած հռչակագիրը նշանակալից էր մի շարք առումներով:

*Ադրբեջանը 2006-ից 2008 թվականների ընթացքում իր զինուժի կատարելագործման նպատակով ծախսել է մոտ 4.5 միլիարդ դոլար՝ ներառյալ տակտիկական հրթիռների, հրթիռային համակարգերի և գնդիկավոր ռազմամթերքի և ժամանակակից օդուժի ձեռքբերման համար:*

- Դա ստորագրված առաջին փաստաթուղթն էր 1994 թ. հրադադարի համաձայնագրից ի վեր:

- Ի տարբերություն այդ փաստաթղթի, Մոսկվայի հռչակագիրը չէր ներառել Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչի մասնակցությունը կամ ստորագրությունը:

- Հռչակագիրը վերահաստատում էր Մինսկի խմբի եռանախագահների հիմնական դերակատարությունը հակամարտության կարգավորման գործընթացում:

- Վրաստանում ռազմական դիմակայությունից և Ռուսաստանի տվյալ միջնորդությունից հետո դիտորդները փաստաթղթում ակնկալում էին «ուժի կիրառումից հրաժարում» հստակ ձևակերպման ներառումը, ինչը հռչակագրին կտար նշանակալի կշիռ և կարևորություն: Փոխարենը, փաստաթուղթը կրկնում էր կողմերի՝ «խաղաղ կարգավորման» հանձնառության մասին սովորական տերմինաբանությունը:

- Վերջապես, մինչ միջազգային նորմերն են վկայակոչվում, առաջին անգամ հղում կա նաև միջազգային որոշումներին:

Որոշ շրջանակներ մտահոգություն հայտնեցին, որ Ադրբեջանը պայմանագրի այս կետը շահարկելու է՝ բանակցային ուղուց և այնտեղ համաձայնեցված սկզբունքներից ուշադրությունը շեղելու և փոխարենը փորձելու է կենտրոնանալ ՄԱԿ-ի բանաձևերի վրա, որոնք արտացոլում են իրենց միակողմանի ձգտումները:

Իսկապես, նոյեմբերի վերջերին նախագահ Ալիևը հստակ կերպով վկայակոչեց Մոսկվայի հռչակագիրը՝ պաշտպանելու համար Ադրբեջանի դիրքորոշումը: Նա հրաժարվեց բացառել ուժի կիրառումը ևս: Հարկ է նշել, որ Ադրբեջանը 2006-ից 2008 թվականների ընթացքում իր զինուժի կատարելագործման նպատակով ծախսել է մոտ 4.5 միլիարդ դոլար՝ ներառյալ տակտիկական հրթիռների, հրթիռային համակարգերի և գնդիկավոր ռազմամթերքի և ժամանակակից օդուժի ձեռքբերման համար: Բոլորն էլ անտարակույս հարձակողական զենքի համակարգեր, որոնք Լեռնային Ղարա-

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

բաղի և Հայաստանի համար ներկայացնում են իրական լուրջ վտանգ: Այս տարի լարվածությունը շփման գծի երկայնքով ակնհայտորեն աճեց, և Ադրբեջանը բացահայտ կերպով ստուգում էր հայկական դիրքերը, ինչն ընկալվում է որպես պատերազմի նախերգանք:

Եթե Մոսկվայի հռչակագրի բովանդակության և հետևանքների վերաբերյալ կային տարբերվող մեկնաբանություններ, ապա դեկտեմբերի սկզբին Հելսինկիում կայացած ԵԱՀԿ Արտգործնախարարների խորհրդի հանդիպումը ցույց տվեց, որ Ադրբեջանը դեռ բավական հեռու է փոխզիջման պատրաստակամությունից և ցանկություն ունի հետ քաշվել Մադրիդի սկզբունքներից: Հակամարտության պատմության մեջ առաջին անգամ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորումն ամենաուղղակի կերպով ստանձնած կազմակերպության՝ ԵԱՀԿ-ի տարեկան կարևոր հանդիպմանը բանակցվող մադրիդյան սկզբունքները չերևացին, և փոխարենը, Ադրբեջանը տարածեց միակողմանի փաստաթուղթ, որտեղ համառոտ կրկնվում են նրանց ձգտումները:

Այսպիսով, տարին մոտենում է ավարտին, իսկ կողմերը շատ հեռու են համաձայնագրից, և Ադրբեջանը փորձում է ձախողել փաստաթուղթը, որի հիմքում առկա է Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման սկզբունքը:

## Հայաստանը և Վրաստանը

Վրաստան-Ռուսաստան բախումը Հայաստանի վրա զգալի և անմիջական տնտեսական ազդեցություն ունեցավ: Վրաստանը Հայաստանի միակ ելքն է դեպի ծով: Հայաստանը օգտվում է Փոթիի և Բաթումիի վրացական նավահանգիստներից, ինչպես նաև՝ վրացական երկաթուղուց: Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառության մոտ 70 տոկոսն իրականացվում է Վրաստանով:

Երբ Վրաստան-Հարավային Օսեթիա բախումը օգոստոսին վերածվեց ռուս-վրացական լայնածավալ ռազմական հակամարտության, Ռուսաստանը մտավ վրացական Գորի քաղաք, և հարձակման ենթարկեց արևելքը արևմուտքին կապող վրացական գլխավոր երկաթուղին: Արդյունքում, մի քանի օր Հայաստանը արտաքին աշխարհի հետ չուներ երկաթուղային հաղորդակցություն:

*Այսպիսով, տարին մոտենում է ավարտին, իսկ կողմերը շատ հեռու են համաձայնագրից, և Ադրբեջանը փորձում է ձախողել փաստաթուղթը, որի հիմքում առկա է Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման սկզբունքը:*

Չնայած ջերմ, բարեկամական, բարձր մակարդակի երկկողմ կապերին՝ հայ-վրացական հարաբերություններում առկա է արտաքուստ չերևացող անհանգստություն, որը դրսևորվում է երկու կողմից էլ ոչ բավարար և ոչ համարժեք ուշադրությամբ: Սա մասամբ այն պատճառով է, որ երկու երկրների միջև տարաձայնությունները շատ են և բարդ: Նման խորն արմատներ ունեցող հակասությունները առավել քան զգայուն և առանցքային են դառնում ռուս-վրացական բախման հետևանքով:

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

- Վրաստանը ակտիվորեն ձգտում է ՆԱՏՕ-ի անդամակցության, մինչդեռ Հայաստանը, չնայած ՆԱՏՕ-ի հետ իր բազմասպեկտ և բարձր մակարդակի համագործակցությանը, նման ձգտում չունի:

- Վրաստանն ունի երկու անջատողական շրջաններ ու հետևաբար ինքնորոշման սկզբունքի ջատագովը չէ: Հայաստանը պաշտպանում է Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը:

*Չնայած ջերմ, բարեկամական, բարձր մակարդակի երկկողմ կապերին՝ հայ-վրացական հարաբերություններում առկա է արտաքուստ չերևացող անհանգստություն, որը դրսևորվում է ոչ բավարար և ոչ համարժեք ուշադրությամբ երկու կողմից էլ:*

- Ռուսաստանը Հայաստանի ռազմավարական դաշնակիցն է: Վրաստանը և Ռուսաստանը չունեն դիվանագիտական հարաբերություններ:

- Վրաստանը զանազան տնտեսական հարաբերություններում մեծապես կախում ունի Ադրբեջանից և Թուրքիայից: Հայաստանը ոչ միայն պաշտոնական հարաբերություններ չունի այդ երկու երկրների հետ, այլ նրանք ակտիվորեն աշխատում են տնտեսապես մեկուսացնել Հայաստանը:

- Ազգային փոքրամասնությունների հարցում Վրաստանի քաղաքականությունը սահմանափակ է ու խտրական, և վիրահայ համայնքը Թբիլիսիի կառավարության հետ հաճախ տարակարծությունների մեջ է: Վրաց ուղղափառ եկեղեցին առաջնայնություն ունի մյուս եկեղեցիների համեմատ՝ ներառյալ հայկական եկեղեցին: Հայ առաքելական եկեղեցին, որ դարեր շարունակ ներկայություն է ունեցել Վրաստանում, որպես կրոնական կառույց դեռևս գրանցված չէ: Եկեղեցիները, հուշարձանները և Վրաստանի հայկական վիթխարի ժառանգության մյուս խորհրդանիշները բավարար չափով չեն պաշտպանվում: Սա Հայաստանի հետ լարվածության աղբյուր է:

Միևնույն ժամանակ, Հայաստանի համար Վրաստանի հետ հարաբերություններն անփոխարինելի են ու յուրահատուկ: Հայաստանը Վրաստանի կարիքն ավելի շատ ունի, քան Վրաստանը՝ Հայաստանի: Վերջապես, եթե Հայաստան-Վրաստան հարաբերությունները վնասվեն, դա կստեղծի նոր անթույլատրելի բաժանարար գծեր տարածաշրջանում:Ահա թե ինչու օգոստոսյան պատերազմի ընթացքում և դրանից հետո Հայաստանը շատ զգույշ էր: Չնայած Ռուսաստանը ճանաչեց Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անկախությունը, Հայաստանը նույնը չարեց և հազիվ թե անի մի քանի պատճառներով: Չնայած Լեռնային Ղարաբաղի հետ

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

զուգահեռներին՝ Հայաստանը շարունակում է պնդել, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը պետք է որոշվի բանակցությունների միջոցով, այլ ոչ միակողմանիորեն: Ահա թե ինչու Հայաստանը չի ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Այդ ենթատեքստում, ինչպես սեպտեմբերին ասաց նախագահ Սարգսյանը, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի անկախության ճանաչումը հավանական չէ: Երրորդ. Հայաստան-Վրաստան հարաբերություններին պետք է վերաբերել զգուշությամբ՝ ոչ միայն հանուն Հայաստանի, այլ նաև որովհետև Վրաստանում ապրում է մեծ թվով՝ ավելի քան 300 հազար հայ:

Աշնանը նախագահ Սարգսյանն այցելեց Թբիլիսի, որտեղ համաձայնություն ձեռք բերվեց ստեղծել կոնսորցիում՝ իրականություն դարձնելու ավելի քան մեկ տարի շրջանառվող գաղափարը՝ Երևան-Բաթումի մայրուղու համատեղ կառուցումը: Դա Հայաստանից մինչև Սև ծով հեռավորությունը էականորեն կկրճատի, հասցնելով հինգ ժամվա: Հայաստանի համար այս մայրուղու ակնհայտ կարևորությունից բացի՝ այն կօգնի Վրաստանի թերզարգացած այն տարածքների տնտեսական և սոցիալական բարելավմանը, որով անցնելու է: Վրաստանի կառավարության համաձայնությունը նման կոնսորցիում ստեղծելուն լավ նշան է և հակասում է այն մտահոգություններին, թե նախորդ նմանօրինակ ծրագրերը ձախողվել են, որովհետև այդ թերզարգացած տարածքները գերազանցապես բնակեցված են վիրահայերով: Հակառակը, նման ճանապարհը կծառայի որպես երկու երկրներին կապող բնական կամուրջ և կխթանի տնտեսական և սոցիալական այն զարգացումները, որոնք ստեղծվեցին, երբ ռուսական ռազմակայանը հեռացավ տարածաշրջանից:

### Հայաստանը և Իրանը

Հայաստանի համար Իրանի կարևորությունն առաջին պլան մղվեց 2008 թ. օգոստոսին, երբ Վրաստան-Ռուսաստան դիմակայությունը Հայաստանին ստիպեց հույս դնել գրեթե բացառապես միայն Իրանի վրա՝ որպես արտաքին աշխարհի հետ կապի ճանապարհ: Երկու երկրների համար սա վաղ 1990-ական թվականներից ծանոթ իրավիճակ էր, երբ Վրաստանի ներքին անկայունությունը փակել էր Հայաստանի հյուսիսային ելքը:

*Հայաստանի համար Վրաստանի հետ հարաբերությունները անփոխարինելի են ու յուրահատուկ: Հայաստանը Վրաստանի կարիքը ավելի շատ ունի, քան Վրաստանը՝ Հայաստանի:*

Օգոստոսյան պատերազմը առավել կարևորեց Հայաստան-Իրան երկաթուղու կառուցման ծրագրերը: Նախագահ Սարգսյանը հոկտեմբերին Ազգային ժողովին իր ուղերձում հայտարարեց, որ առաջիկա տարիներին սկսվելու է այդ երկաթուղու շինարարությունը: Իրանական բնական գազը Հայաստան հասցնող խողովակաշարի շինարարությունը ավարտվել է և անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել: Կառուցվել են նաև մի քանի բարձրավոլտ էլեկտրական գծեր: Քննարկվում

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

են Արաքս գետի վրա երկու համատեղ հիդրոէլեկտրակայանների, ինչպես նաև Իրանի սահմանին հարող Հայաստանի ծայրհարավային Մեղրիի շրջանում նավթազտարան կառուցելու հնարավորությունները:

*Իրանական բնական գազը Հայաստան հասցնող խողովակաշարի շինարարությունը ավարտվել է և անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել: Կառուցվել են նաև մի քանի բարձրավոլտ էլեկտրական գծեր:*

2008 թ. շարունակական եղավ քաղաքական հարաբերություններում նույնպես: Իրանը շարունակեց իր հավասարակշիռ դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում: Չնայած Ադրբեջանի հետ կրոնական և էթնիկ ընդհանրություններին և չնայած Ադրբեջանի ճնշումներին և պահանջներին, Իրանը հաջողությամբ շարունակեց անկողմնակալ և հավասարակշիռ հարաբերությունները և Հայաստանի, և Ադրբեջանի հետ: Հավասարակշռելու այդ ունակությունը բնութագրական է Իրանի արտաքին քաղաքականության համար հազարամյակներ ի վեր: Այս դեպքում այդ հավասարակշռված քաղաքականությունը բխում է հենց Իրանի շահերից:

Իրանում ազերի ստվար փոքրամասնության ներկայությունը կատարում է երկակի դեր. այն օգնում է ջերմ հարաբերություններ պահպանել ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի հետ: Երկու երկրների հետ էլ սա Իրանի՝ քաղցրաբլիթի ու մտրակի քաղաքականությունն է: Իրանի անկողմնակալ հարաբերությունները Հայաստանի և Ադրբեջանի հետ հեշտությամբ կարող են թեքվել դեպի հայկական կողմը, եթե Ադրբեջանը հրահրի Իրանում բնակվող ադրբեջանցիներին անջատողական գործողությունների: Մյուս կողմից, իր ազերի փոքրամասնության ներկայությունը սահմանափակում է հայերին հրապարակավ աջակցելու Իրանի կարողությունը:

Այդուհանդերձ, գործոնը, որ ամենաշատն է ազդում հայ-իրանական հարաբերությունների վրա, Իրանի հարաբերություններն են Արևմուտքի հետ: Իրանի նկատմամբ սանկցիաները մինչև օրս որոշիչ ազդեցություն չեն ունեցել Հայաստանի բիզնեսի և առևտրի վրա: Արևմուտքը, որպես կանոն, ըմբռնումով է վերաբերում Հայաստանի աշխարհագրական և քաղաքական իրավիճակին և հասկանում է Հայաստանի սահմանափակումները:

Վերջերս Միացյալ Նահանգների պետքարտուղարությունը աշխարհում ահաբեկչության դեմ պայքարի մասին տարեկան զեկույցում առանձնացրել է Իրանի առաջնորդների Հայաստան այցերը և նկատել, որ դրանք երկու երկրների միջև ամրապնդեցին էներգետիկ և տրանսպորտային համատեղ ծրագրերը, որի արդյունքում Հայաստանը միջազգային քվեարկություններում ձեռնպահ է մնում Իրանի հանդեպ քննադատական կեցվածքից: Մյուս կողմից, Իրանը նույնպես ընդունում է, որ Արևմուտքի ենթադրությունների և ռազմաշունչ հռետորության լույսի ներքո իր քրիստոնյա հարևան Հայաստանի հետ լավ հարաբերությունները աշխատում են իր օգտին:

ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

## ... ԵՎ ԱՆԴԻՆ

Այս ամենը ցուցահանում է համաշխարհային այն բաղկացվածությունը, որն առկա է Հայաստանի երկկողմ և միջազգային հարաբերությունների միջև: Հայաստանի երկկողմ հարաբերությունների բոլոր ասպեկտները ներազդված են ուժային երեք կենտրոնների՝ Վաշինգտոնի, Բրյուսելի և Մոսկվայի հետ երկրի հարաբերություններով, ինչպես նաև այդ կենտրոնների՝ կովկասյան տարածաշրջանի այլ երկրների հետ ունեցած առնչություններով: 2008 թվականի ընթացքում այդ հարաբերությունները նաև մեծապես նախադասյմանավորված էին ներքին, տարածաշրջանային և համաշխարհային ճգնաժամերով:

Հայաստանում փետրվարին անցկացված հակասական նախագահական ընտրությունները և դրանց հաջորդած բռնությունները ֆննարկումների առարկա դարձան բոլոր երեք մայրաքաղաքներում, ռուս-վրացական վասբարացող հարաբերությունների հետ մեկտեղ, նույնիսկ նախքան օգոստոսյան պատերազմի բռնկումը: Այս վերահաս ճգնաժամը ձևավորեցին և պայմանավորեցին Կովկասի վերաբերյալ եվրոպական, ամերիկյան և հատկապես ռուսական օրակարգերը:

Վերջապես, համաշխարհային ֆինանսական ճգնաժամը և նրա տնտեսական հետևանքները ներազդեցին այն հարաբերությունների վրա, որ կային ինչպես տարածաշրջանի ներսում, այնպես էլ տարածաշրջանի և երեք ուժային կենտրոնների միջև:

Նշված երեք իրադարձություններն էլ պայմանավորեցին Երևանի հարաբերությունները ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Եվրոպական միության հետ 2008 թվականին:

**Ռուսաստանի** դեպքում, երկկողմ հարաբերությունների օրակարգում շարունակեցին առաջնային մնալ չորս հարցեր՝ խորացող տնտեսական կապերն ու վաստացող բեռնափոխադրումները, Ռուսաստանի վերահառնումը որպես տարածաշրջանային գերտերություն, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում նրա առաջատար դերը և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրում նրա միջնորդությունը:

*Չնայած Ադրբեջանի հետ կրոնական և էթնիկ ընդհանրությունների և չնայած Ադրբեջանի ճնշումների և պահանջների, Իրանը հաջողությամբ շարունակեց անկողմնակալ և հավասարակշիռ հարաբերությունները և Հայաստանի, և Ադրբեջանի հետ:*

Իհարկե, Մոսկվայի ուշադրության կենտրոնում էին նաև Հայաստանի ներքին խնդիրները: Ռուսաստանը միանշանակորեն հասկացրել էր, որ նախագահական ընտրություններում ինքը նախապատվությունը տալիս է այն

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

ժամանակվա վարչապետ Սերժ Սարգսյանին, այլ ոչ թե վերջինիս հիմնական հակառակորդ, նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին: Ռուսաստանի մի քանի բարձրաստիճան պաշտոնյաներ՝ ներառյալ Պետդումայի խոսնակը և վարչապետը, այցեր կատարեցին Երևան՝ ցուցադրելով իրենց աջակցությունը Սարգսյանին, որն իր հերթին մեկնեց Մոսկվա՝ հետընտրական բռնություններից ընդամենը մի քանի օր անց: Ռուսաստանը շնորհավորեց Սարգսյանին ընտրություններում տարած հաղթանակի առթիվ և, ի տարբերություն Վաշինգտոնի, հրապարակայնորեն չքննադատեց Հայաստանի կառավարությանը հետընտրական զարգացումների կապակցությամբ:

*Պատերազմը դեմ-հանդիման կանգնեցրեց Հայաստանի պատմական հարևանին, որի տարածքը երկրի համար նաև ծառայում է որպես աշխարհի հետ հաղորդակցության ուղի, և ռազմավարական դաշնակցին, ուստի Հայաստանը չէր կարող և չպետք է որևէ մեկի կողմը բռներ:*

Ռուսաստանը Հայաստանի խոշորագույն առևտրային գործընկերն է և երկրին մատակարարում է ռազմավարական հումք՝ ներառյալ միջուկային վառելիք և բնական գազ, ինչպես նաև հայկական ապրանքների ամենամեծ և ամենամոտ շուկան է:

Տնտեսական վերելք ապրող Ռուսաստանը նաև Հայաստանում ամենախոշոր արտասահմանյան ներդրումներ կատարողն է: 2007-ին հայ-ռուսական առևտրաշրջանառությունը կազմում էր 750 միլիոն ամերիկյան դոլար, ինչը Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության 16 տոկոսն է: Նույն թվականին ռուսական ընկերությունները դարձան նաև Հայաստանում ամենախոշոր օտարերկրյա ներդրողները, որոնց մասնաբաժինը օտարերկրյա բոլոր ներդրումների հատույթում կազմեց ավելի քան 200 միլիոն դոլար, կամ արտասահմանյան բոլոր ներդրումների մեկ քառորդը:

Ռուսական ընկերությունները Հայաստան բերեցին բջջային հեռախոսակապի երկու օպերատորներին, իսկ Ռուսական երկաթուղիները ձեռք բերեցին Հայաստանի երկաթուղու հավատարմագրային կառավարման իրավունքը: Ռուսաստանի առանցքային ֆինանսական և ապահովագրական ընկերությունները մասնաճյուղեր բացեցին և ընդլայնեցին իրենց ներկայությունը Հայաստանում:

Ռուսաստանը նաև ֆինանսավորում և փորձագիտական օգնություն է առաջարկում Հայաստանին նոր ատոմակայանի կառուցման խնդրում, բազմամիլիոնանոց ներդրումային մի ձեռնարկ, որին Հայաստանի կառավարությունն առաջնահերթություն է տվել, միաժամանակ փնտրելով ծրագրում եվրոպական և ամերիկյան մասնակցության հնարավորությունները:

Ռուս-վրացական հակամարտությունը, որը օգոստոսին վերածվեց իսկական պատերազմի, Հայաստանին կանգնեցրեց բավականին սուր երկընտրանքի առջև: Պատերազմը դեմ-հանդիման կանգնեցրեց Հայաստանի պատմական հարևանին, որի տարածքը երկրի համար նաև

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

ծառայում է որպես աշխարհի հետ հաղորդակցության ուղի, և ռազմավարական դաշնակցին, ուստի Հայաստանը չէր կարող և չպետք է որևէ մեկի կողմն անցներ:

Հայաստանն ու Ռուսաստանը ունեն բազմաթիվ ընդհանուր ռազմավարական շահեր: Ռուսաստանի համար Կովկասն ունի ռազմավարական, պաշտպանական և տնտեսական կարևորություն: Այնինչ վերջին տարիներին Ռուսաստանն իր շահերը տարածաշրջանում վտանգված էր տեսնում Վրաստանի բացահայտ արևմտամետության պատճառով: Ռուս-ադրբեջանական հարաբերությունները զարգանում էին վայրիվերումներով: Մինչդեռ Հայաստանի հետ հարաբերությունները կայուն էին և վստահելի, հիմնված անվտանգության փոխադարձ նկատառումների, ընդհանուր տնտեսական և քաղաքական շատ շահերի վրա:

Բայցևայնպես, Ռուսաստանը մի համաշխարհային գերտերություն է, որի շահերը հաճախ հակասում են ԱՄՆ-ի և ԵՄ-ի շահերին: Մի շարք հարցերում Ռուսաստանը բազում պատճառներ ու հնարավորություններ ունի սակարկման առարկա դարձնելու իր դիրքորոշումներն ու քաղաքականությունը՝ անհրաժեշտության դեպքում անտեսելով Հայաստանն ու Հայաստանի շահերը, ինչպես դա արել է նախկինում: Վրացական ճգնաժամի արդյունքում ի հայտ եկած նոր իրողությունների ու հարաբերությունների շառավիղներում, երբ Վրաստանի ու Ադրբեջանի համագործակցությունը խորանում է՝ հիմնված երկու երկրների էներգետիկ քաղաքականության ընդհանրություններին, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շահերը կարող են ոտնահարվել:

Մյուս կողմից, թեև ռուս-վրացական պատերազմը մեծացրեց Ռուսաստանի ազդեցությունը Կովկասում, այն նաև ամրապնդեց Կովկասի նկատմամբ Ռուսաստանի ագրեսիվ, անզիջում, անհաշտ քաղաքականության վերաբերյալ արևմտյան տեսակետը: Այդ համատեքստում Ռուսաստանը կարիք ունի Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ վարելու հավասարակշիռ քաղաքականություն՝ փարատելու համար իր մտադրությունների նկատմամբ անվստահությունը: Ռուսաստանի մարտահրավերն է՝ հակադարձել նման կասկածամտությանը, միաժամանակ ամրապնդելով իր դիրքերը տարածաշրջանում:

*Ռուսաստանը կարիք ունի Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ վարելու հավասարակշիռ քաղաքականություն՝ փարատելու համար իր մտադրությունների նկատմամբ անվստահությունը:*

**Եվրոպական միությունը**, ռուս-վրացական հակամարտությունից հետո, ձգտում է Հարավային Կովկասի երեք երկրների հետ իր հարաբերությունները սերտացնելու ուղիներ որոնել, հատկապես նկատի ունենալով տրանսպորտային կապուղիների խիստ վնասվածությունը և անվտանգության լրջագույն մարտահրավերները: Եվրոպայի տեսանկյունից, կարևոր է ապահովել էներգիայի անխափան մատակարարումները, պաշտպանել Կենտրոնական Ասիայի հետ տրանսպորտային ուղիները, և կանխարգելել արտագաղթը, ինչն անխուսափելի է անկայուն կամ տնտեսապես հետամնաց տարածաշրջանից:

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

*Ռուս-վրացական հակամարտությունից հետո, չգտում է ուղիներ որոնել սերտացնելու իր հարաբերությունները Հարավային Կովկասի երեք երկրների հետ, հասկապես նկատի ունենալով տրանսպորտային կապուղիների խիստ վնասվածությունը և անվտանգության լրջագույն մարտահրավերները:*

Այս նոր մոտեցումը Բրյուսելում առաջ բերեց նոր և լուրջ քննարկումներ, որոնց նպատակն է ամրապնդել գոյություն ունեցող կառույցները և զարգացնել նորերը, որոնցում հնարավոր կլինի ներգրավել Հարավային Կովկասի երեք պետություններին: Որոշ շրջանակներում այն կարծիքին են, որ այդպիսով հնարավոր կլինի շեղել Վրաստանին ՆԱՏՕ-ին հնարավորինս արագ անդամակցելու սևեռումից, հարց, որի շուրջ ԵՄ-ի անդամ երկրների տեսակետները տարբերվում են: Մասամբ ի պատասխան Վրաստանի անհամբերության, և մասամբ արձագանքելով առավել կանխատեսելի հարաբերություններ ունենալու սեփական ցանկություններին, ԵՄ-ն ազդարարեց Արևելաեվրոպական գործընկերության ծրագիրը: Այս բարելավված գործիքը նախատեսում է ավելին, քան Եվրոպական հարևանության քաղաքականությունը՝ առաջարկելով ավելի ամուր ինստգրացիոն բաղադրիչներ, անգամ ազատ առևտրի հնարավորություն և մուտքի արտոնագրերի տրամադրման դյուրացում: Հայաստանի համար, ուր հաճախ գտնում են, որ Վրաստանն ավելի շատ դրվատանքի և ուշադրության է արժանանում, սա հենց այն անկողմնակալ մոտեցումն է, որին ձգտում էր:

Հասարակական կարծիքի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ հայերի գերակշիռ մեծամասնությունը պաշտպանում է ԵՄ-ին անդամակցության գաղափարը, թեև շատերը կարծում են, որ Հայաստանը պատրաստ չի լինի անդամակցելու ԵՄ-ին առնվազն մինչև 2015 թվականը: Առայժմ, Հայաստան-ԵՄ հարաբերությունները որոշարկվել են Գործընկերության և համագործակցության պայմանագրով և Եվրոպական հարևանության քաղաքականությամբ: Այս վերջինի շրջանակներում մշակվել է Գործողությունների ծրագիր, որն ուրվագծում է այն քայլերը, որոնք արդեն իսկ ձեռնարկվում են՝ ամրապնդելու համագործակցությունը և ապահովելու «ինստգրման նշանակալի աստիճան»:

Որպես Եվրոպական հարևանության քաղաքականության մաս, հայ-եվրոպական երկխոսությունը շարունակում է կենտրոնանալ ժողովրդավարության, մարդու իրավունքների, տնտեսական և վարչական բարեփոխումների, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման և տարածաշրջանային ինստգրման ջանքերի առաջմղման վրա:

Հայ-եվրոպական գործընկերությունը նաև առաջնորդվում է գործնական տնտեսական նկատառումներով, ինչպիսիք են եվրոպական շուկաների մատչելիությունը և ծավալները և Հայաստանում եվրոպական սպառողական ապրանքների պահանջարկի մակարդակը:

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Արդյունքում, եվրոպական երկրների հետ Հայաստանի առևտրային կապերը 1990-ականներից ի վեր շարունակում են ընդլայնվել: Արդեն մեկ տասնամյակ է, ինչ առևտուրը ԵՄ-ի անդամ-պետությունների հետ կազմում է Հայաստանի առևտրաշրջանառության ամենամեծ բաժնեմասը՝ ավելի քան մեկ երրորդը: Հայաստանի եվրոպական խոշորագույն առևտրային գործընկերներն են Գերմանիան, Նիդեռլանդները և Բելգիան:

ԵՄ-Հայաստան հարաբերություններում տարաձայնություններից մեկը ԵՄ-ի պնդումներն են՝ խորհրդային շրջանում կառուցված Մեծամորի ատոմակայանը հնարավորինս շուտափույթ փակելու անհրաժեշտության վերաբերյալ: Հայաստանն առարկում է, որ այդպես վարվելու հնարավորություն չունի, քանի դեռ չի տիրապետում էներգիայի այլընտրանքային աղբյուրների: Ուստի Հայաստանը դիմել է մի շարք երկրների, ներառյալ միջուկային էներգետիկայի բնագավառի եվրոպական խոշոր ընկերություններից մեկին՝ նոր ատոմակայան կառուցելու նպատակով: Թեև ներդրումների խոստումներ դեռևս չեն ստացվել, Հայաստանի իշխանությունները լիահույս են, որ ռուսական, եվրոպական և ամերիկյան մասնակցության համատեղ ձեռնարկը հնարավոր կլինի իրականացնել:

Այս տարի նաև Եվրոպայի հեռահաղորդակցության բնագավառի երկրորդ խոշոր ընկերությունը՝ Օրանժը /Ֆրանս Թելեքոմ/ շահել է Հայաստանում բջջային հեռախոսակապի երրորդ օպերատորի համար հայտարարված մրցույթը՝ արտոնագրի համար վճարելով 51 միլիոն եվրո: Ծառայությունը գործելու է 2009 թվականից:

Փետրվարյան նախագահական ընտրություններ և հատկապես հետընտրական բռնությունները շարունակում են սուր հարց մնալ հայ-եվրոպական հարաբերություններում:

*Հասարակական կարծիքի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ հայերի գերակշիռ մեծամասնությունը պաշտպանում է ԵՄ-ին անդամակցության գաղափարը, թեև շատերը կարծում են, որ Հայաստանը պատրաստ չի լինի անդամակցելու ԵՄ-ին առնվազն մինչև 2015 թվականը:*

Թե Եվրոպական միությունը և թե Եվրոպայի խորհուրդը շարունակում են մտահոգություն հայտնել Հայաստանում քաղաքական գործընթացի թերակատարության կապակցությամբ:

Նույնը վերաբերում է **Հայաստան-ԱՄՆ** հարաբերություններին: ԱՄՆ-ի ֆինանսական վերաբերմունքը Հայաստանում փետրվարին անցկացված նախագահական ընտրությունների և հաջորդած մարտյան իրադարձությունների նկատմամբ բարդություն մտցրեց հայ-ամերիկյան հարաբերություններում 2008-ի գրեթե ամբողջ ընթացքում: Թեև ընդդիմության գործելակերպը նույնպես հակասական բնույթ էր կրում, ԱՄՆ-ի պաշտոնատարները քննադատում էին գերազանցապես կառավարությանը:

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

*Թե Եվրոպական միությունը և թե Եվրոպայի խորհուրդը շարունակում են մտահոգություն հայտնել Հայաստանում քաղաքական գործընթացի թերակատարության կապակցությամբ:*

ԱՄՆ-ի խորը մտահոգությունները բխում են Կովկասում և, մասնավորապես, Հայաստանի հարցում եղած ամերիկյան շահերի բնույթից: Իսկապես, ԱՄՆ-ի կովկասյան շահերը տարբերակված են ըստ տարածաշրջանի առանձին երկրների, օրինակ, Ադրբեջանի պարագայում այդ շահերի հիմնառանցքում նավթն է, Վրաստանի դեպքում նկատառվում է այդ երկրի աշխարհաքաղաքական նշանակությունը, ինչպես նաև գնահատվում է Վրաստանի պատրաստակամությունը՝ ԱՄՆ-ին «տեղ տալու» Կովկասում: Հայաստանի դեպքում երկկողմ հետաքրքրությունները խարսխվում են տարածաշրջանային ընդհանուր շահերին, այն է՝ Կովկասում ԱՄՆ-ը առհասարակ նպատակ է հետապնդում ամրապնդել խաղաղությունն ու կայունությունը, ներառյալ հակամարտությունների կարգավորումը, նվազեցնել Ռուսաստանի ազդեցությունը և առաջ մղել ժողովրդավարացումն ու օրենքի գերակայության հաստատումը: Այսպիսով, Հայաստանի դեպքում ԱՄՆ-ը ուշադրությունը կենտրոնացնում է ժողովրդավարական և տնտեսական զարգացմանը: Հետևաբար, այդ զարգացումներից ցանկացած լուրջ նահանջներն առաջ են բերում սուր արձագանքներ և հակազդեցություններ:

Ամերիկացի և հայ պաշտոնյաները երկկողմ հարաբերությունները սովորաբար բնութագրում են որպես «գործընկերային» և «բարեկամական», հավելելով, որոշ դեպքերում, «դաշնակցային» որակումը, այն բանից հետո, երբ հայկական կողմը փոքրաթիվ քանակակազմերով միացավ Կոսովոյում և Իրաքում ԱՄՆ-ի առաջնորդությամբ իրականացվող խաղաղապահությանը: Սկսած 2001 թվականից, Հայաստանն ու ԱՄՆ-ը համատեղ աշխատում են նաև երկկողմ անվտանգության ոլորտում: Բացի այդ, Հայաստանն ավելի ու ավելի ակտիվորեն է ընդգրկվում ՆԱՏՕ-ի Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրում, և վերջինիս շրջանակներում իր մասնակցության մակարդակը բարձրացրել է մինչև Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի, ինչը միայն մեկ աստիճան է ցածր Անդամակցության գործողության ծրագրից և համաչափ է ՆԱՏՕ-ի հետ Վրաստանի և Ադրբեջանի հարաբերություններին:

2008 թվականի ապրիլին ստանձնելով իր պաշտոնը, նախագահ Սարգսյանը շեշտադրեց Հայաստանի խոր շահագրգռվածությունը՝ ամրապնդելու հայ-ամերիկյան հարաբերությունները: Սարգսյանն այդկերպ էր վարվում նաև Հայաստանի պաշտպանության նախարարի և վարչապետի պաշտոններում աշխատելիս՝ ձգտելով Վաշինգտոնի աչքում ամրապնդել թե իր, և թե Հայաստանի նկարագիրը:

Երկու երկրները 2008 թվականը դիմավորեցին արդեն վաղուց ձևավորված երկկողմ օրակարգով: Ինչպես և նախկինում, ԱՄՆ-ի ակնկալիքները բևեռված էին Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը, ժողովրդավարական գործընթացների և հաստատությունների կայացմանը, մասնավորապես ընտրական գործընթացների բարելավմանը, ինչպես նաև

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության նպատակներից սատարմանը՝ հատկապես միջազգային ահաբեկչության դեմ պայքարի և Իրանին մեկուսացնելու հարցերում: Իր հերթին, Հայաստանն ակնկալում էր ԱՄՆ-ի շարունակվող տնտեսական օժանդակությունը, տեխնիկական աջակցությունը, ժողովրդավարական գործընթացների խթանումը, ինչպես նաև Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավման հարցում ամերիկյան օգնությունը:

Արդեն իսկ սկսված մի քանի համատեղ ծրագրեր լուրջ հույսեր էին ներշնչում, մասնավորապես, ԱՄՆ-ը արդեն ֆինանսավորում էր Հայաստանում նոր ատոմակայանի կառուցման տեխնիկական հնարավորության ուսումնասիրումը և հեռանկարում նախատեսում էր գործնական մասնակցություն ունենալ կայանի կառուցմանը, նաև ընթացքում էր 235 միլիոն դոլար արժողությամբ Հազարամյակի մարտահրավեր ծրագիրը, որն ուղղված էր Հայաստանի գյուղական բնակավայրերում ենթակառուցվածքների զարգացմանը: Անշուշտ, դեռևս մինչև Հազարամյակի մարտահրավեր ծրագրի նախաձեռնումը, ԱՄՆ-ը դարձյալ տնտեսության և ժողովրդավարության ոլորտներում տեխնիկական և փորձագիտական աջակցության ծրագրերի ֆինանսավորման կարևոր աղբյուր էր:

Ամերիկահայ համայնքի քաղաքական ակտիվությունն, անշուշտ, նպաստում է Վաշինգտոնում Հայաստանի որոշակի ընկալումներին: Հայաստանին ամերիկյան օժանդակության տարեկան հատկացումները և Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ Ադրբեջանի հետ դիմակայության հարցում ԱՄՆ-ի հարաբերական չեզոքությունը շատ բանով նաև ԱՄՆ-ի ներքին քաղաքական նկատառումների արդյունք են, թեև ընդհանուր առմամբ գտնվում են ամերիկյան արտաքին քաղաքականության տրամաբանության շրջածիրում:

*Սկսած 2001 թվականից, Հայաստանն ու ԱՄՆ-ը համատեղ աշխատում են նաև երկկողմ անվտանգության ոլորտում:*

Ռուս-վրացական պատերազմի արդյունքում ԱՄՆ-ի կողմից կովկասյան տարածաշրջանի խոցելիության նորովի գիտակցումը, հնարավոր է, ապագայում ավելի հավասարարական վերաբերմունքի հանգեցնի: Մինչ այսօր, սակայն, Բուշի վարչակազմը Հայաստանին ամենաքիչն է ուշադրություն դարձրել: Թեև վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաները, այդ թվում փոխնախագահը և պետքարտուղարը, վերջին ամիսներին այցելել են կովկասյան տարածաշրջան, նրանք այդպես էլ չեն եղել Հայաստանում:

ԱՄՆ-ի Կոնգրեսի անդամներն ավանդաբար ավելի մեծ հետաքրքրություն են հանդես բերում հայկական խնդիրների նկատմամբ, քան գործադիրը: Կոնգրեսականները, ճիշտ է, այդպես էլ ի վիճակի չեղան վերանայման ենթարկելու Բուշի վարչակազմի քաղաքականությունը հայոց ցեղասպանության հարցում, սակայն առիթը բաց չեն թողնում մատնանշելու Հայաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության մեջ փոփոխություններ առաջ բերելու ԱՄՆ-ի ձախողումը, և դատապարտելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության կապակցությամբ Ադրբեջանից հնչող պատերազմի սպառնալիքները: Ադրբեջանին ցուցաբերվող ամերիկյան ռազմական օգնության

կրճատման վերաբերյալ օրենսդրական փոփոխության նախագիծը ձայների շատ փոքր տարբերությամբ ձախողվեց հուլիսին։

*Հայաստանի դեպքում ԱՄՆ-ը ուշադրությունը կենտրոնացնում է ժողովրդավարական և տնտեսական զարգացմանը։ Հետևաբար, այդ զարգացումներից ցանկացած լուրջ նահանջներն առաջ են բերում սուր արձագանքներ և հակազդեցություններ։*

Երբ ռուս-վրացական պատերազմից հետո՝ սեպտեմբերին, վարչակազմը ներկայացրեց Վրաստանին մեկ միլիարդ դոլարի օգնության հատկացման փաթեթը, Կոնգրեսի հայկական խմբի անդամներն ուշադրություն հրավիրեցին այն հանգամանքի վրա, որ պատերազմի հետևանքով կորուստներ է կրել նաև Հայաստանը, և առաջարկեցին օգնության մասնաբաժին տրամադրել նաև Հայաստանին, ինչպես նաև Վրաստանի հայաբնակ շրջաններին։ Թեև այս նախաձեռնությունների արդյունքում ծրագրից առանձնակի հատկացումներ չեղան, Կոնգրեսի կողմից ընդունված օրենսդրական նախագիծը ներառեց «տարածաշրջանային ասպեկտ», իսկ Բուշի վարչակազմը հանձն առավ ուսումնասիրել Հայաստանի կարիքները, որ առաջ էին եկել վրացական պատերազմի արդյունքում։

2008 թվականին Միացյալ Նահանգների և Հայաստանի միջև առևտրի կամ տնտեսության ոլորտներում նոր պայմանագրեր չեն կնքվել։ 2004-ից մինչև 2007 թվականը հայ-ամերիկյան առևտրային կապերը հարաբերականորեն կայուն են եղել, իսկ երկկողմ ընդհանուր առևտրաշրջանառությունը կազմել է մոտ 125 միլիոն դոլար։ ԱՄՆ-ի արտահանումները Հայաստան կազմել են նշված ընդհանուր ծավալի գերակշիռ մասը, իսկ ամերիկյան ներկրումները Հայաստանից 2004թ. 46 միլիոն դոլարից նվազել են մինչև 33 միլիոնի՝ 2007 թվականին։

Արդեն ընթացիկ տարվա հունիսին Միացյալ Նահանգները հետաձգել էին Հազարամյակի մարտահրավեր ծրագրի շրջանակներում միջոցների տրամադրումը՝ նման որոշումը նախապայմանավորելով այն պահանջների կատարմամբ, որոնք Հայաստանի կառավարության առջև դրել էին եվրոպական կառույցները։ Աշնանը տարածաշրջանային անվտանգության հարցերում ԱՄՆ-ի քաղաքականության մեջ տեղի ունեցած շեշտափոխումները, ինչպես նաև նախագահ Սարգսյանի կողմից հետընտրական բռնությունների փաստերի ուսումնասիրման և համապատասխան քայլեր ձեռնարկելու պատրաստակամության հայտարարությունները մեծացրել են ծրագրի վերսկսման հնարավորությունները։

Թեև ռուս-վրացական պատերազմը ժամանակավորապես վերարթնացրել է Հայաստանի և տարածաշրջանային այլ երկրների նկատմամբ ամերիկյան հետաքրքրությունը, որպեսզի ներկայում Վաշինգտոնում ընթացող քաղաքական անցումային շրջանը հանգեցնի հայ-ամերիկյան հարաբերությունների ավելի արդյունավետ փուլի, հարկ կլինի սպասել, մինչև նորընտիր նախագահ Բարաք Օբաման ստանձնի պաշտոնավարումը։

ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

## 2009թ. հեռանկար

- Ռուս-վրացական պատերազմից հետո թե Եվրոպական միությունը և թե Միացյալ Նահանգները հարավկովկասյան տարածաշրջանը դիտարկում են առավելապես ռուս-վրացական հարաբերությունների հասույթում: Նման մոտեցումը դժի է այն վտանգով, որ կարող են անտեսվել Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավման իմաստով երկրորդական համարվող խնդիրները, կամ այն գործողությունները, որոնք կարող են խոչընդոտել նշված նպատակի իրականացումը:
- Միաժամանակ, բացառությամբ Վրաստանում կամ Լեռնային Ղարաբաղում պատերազմական գործողությունների վերսկսման պարագայի, հարավկովկասյան տարածաշրջանը դեռևս չի համարվում արտաքին քաղաքականության հրատապ առաջնահերթությունների շրջույթ Եվրոպական միության համար, որի նախագահությունը 2009 թ. հունվարի 1-ից ստանձնում է Չեխիան: Նախագահ Վացլավ Կլաուսը և վարչապետ Միրոսլավ Թոփոլանեկը Լիսաբոնյան դաշինքի առնչությամբ դեռևս բախվում են տարաձայնությունների, ուստի ավելի հավանական է, որ Պրահան առավելապես կենտրոնանա ԵՄ-ի առևտրային և տնտեսական հարցերի վրա: Ռուս-չեխական հարաբերությունները առաջվա նման շարունակվելու են ստվերվել՝ պայմանավորված այն հակազդեցությամբ, որ Մոսկվան դրսևորում է ԱՄՆ-ի կողմից հակահրթիռային վահանի ծրագրված տեղակայման խնդրի առնչությամբ:
- ԱՄՆ-ի նոր վարչակազմը նույնպես հիմնականում ուշադրությունը սևեռելու է սեփական երկրի տնտեսության անկման խնդիրներին, ինչպես նաև աշխարհի այլ թեժ կետերին: Կովկասի հարցերով որոշում կայացնող քաղաքական գործիչներն առաջվա նման առավելաբար նկատի են առնելու նավթային գործոնը: Օբամայի վարչակազմն ավելի ուշադիր է գտնվելու Եվրոպայի մտահոգությունների նկատմամբ, և փորձ է կատարելու մի շարք հարցերում համագործակցության դաշտ բերել Ռուսաստանին, իսկ անվտանգության լուրջ մարտահրավերների նկատմամբ հանդես է բերելու նոր մոտեցումներ և բացորոշություն:
- Ռուս-վրացական լարվածությունը շարունակելու է պահպանվել՝ առանց հաստացման եզրերի հայտնաբերման, քանի որ Ռուսաստանը վճռական է նախագահ Սաակաշվիլու հետ բանակցությունների սեղանի շուրջ չնստելու իր որոշման մեջ: Բանակցությունները Հարավային Օսեթիայի և Աբխազիայի շուրջ շարունակվելու են անարդյունք:
- Ռուսաստանը շարունակելու է Կովկասում իր ակտիվ ներգրավվածության քաղաքականությունը:
- Կովկասում անվտանգության մեխանիզմ ստեղծելու Թուրքիայի առաջարկը, չնայած հնարավոր մասնակիցների նախնական վերապահումներին, շարունակելու է քննարկվել, ինչով Թուրքիան ստանում է Կովկասում

ներկայություն ունենալու իր սեփական հարթակը: Սակայն առաջարկի իրականանալու վերաբերյալ ակնկալիքներ չկան, քանի որ այն դեռևս զուրկ է իրական մեխանիզմներից, իսկ հնարավոր մասնակիցները շարունակում են չընդունել մլասֆորմի հիմնական սկզբունքները:

- Թուրքիան շարունակելու է Հայաստանի հետ բարձր մակարդակով երկխոսությունը, առանց, սակայն, հստակեցնելու իր խնդրական մտադրությունները: Բարձր մակարդակի շփումների տեսանելի գործընթացի հետնաբեմում այն շարունակելու է բանակցությունները, որոնց նպատակն է լինելու պարզել, թե ինչ է ուզում Հայաստանը հարաբերությունների կարգավորման դիմաց, իսկ այդ ընթացքում Թուրքիան փորձելու է բարելավել իր նկարագիրը` պահպանելով իր դիրքորոշումները և առանց քաղաքական լուրջ ռիսկերի դիմելու:

- Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում չի սպասվում ոչ քաղաքական կարգավորում, և ոչ էլ հավանական է դիտվում ռազմական գործողությունների վերսկսումը: Քաղաքական առումով, Ադրբեջանը ձգտելու է նվազեցնել Մադրիդյան սկզբունքների, հատկապես, ինքնորոշման գաղափարի նշանակությունը, ջանքերն ու եռանդը նպատակաուղղելու է խեղաթյուրմանն ու ձգձգմանը, ՄԱԿ-ին և Եվրոպայի խորհրդին նոր փաստաթղթերի ներկայացմանը, այդպիսով նորից ու նորից հաստատելով սեփական դիրքորոշումները: Հավանական չէ նաև ռազմական գործողությունների վերսկսումը, քանի որ Հայաստանը նման քայլի չի գնա, իսկ Ադրբեջանը, ռուս-վրացական պատերազմի թարմ դասերից խրատված, դժվար թե հանդգնի կանգնել ռազմական երրորդ պարտության և նավթային ներդրումների կորստի վտանգի առջև:

## Լուծման տարբերակներ

- Միջազգային տնտեսական ճգնաժամը չպետք է պատճառ հանդիսանա, որպեսզի բավարար և մտսական ուշադրություն չդարձվի Վրաստանին և, առհասարակ, տարածաշրջանին: Մասնավորապես, հոկտեմբերին դոնոր երկրների խորհրդաժողովի կողմից Վրաստանին խոստացված 4.5 միլիարդ դոլարի օգնությունը պետք է բծախնդրորեն վերահսկվի և համապատասխան բաժնեմաս հատկացվի հարևան Հայաստանին, որը տնտեսական կորուստները փոխհատուցելու այլ մեխանիզմներ չունի:

- Հարավային Օսեթիային և Աբխազիային առնչվող անվտանգության խնդիրները շարունակում են հրատապ մնալ, քանի որ այդ շրջանները դեռևս անհասանելի են մնում հոկտեմբերին ընդունված որոշման համաձայն այստեղ տեղակայվելիք ԵՄ-ի դիտորդների համար: Ավելին, պետք է քարմացվի նաև Վրաստանում ՄԱԿ-ի դիտորդական առաքելության մանդատը, որը լրանում է 2009 թ. փետրվարին, հատկապես նկատի ունենալով, որ աբխազական կողմն անհանգստություն ունի միջազգային խաղաղարարների հեռանալու հեռանկարի կապակցությամբ:

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

- Թբիլիսիին հարկավոր է քաջալերել՝ առավել լուրջ վերաբերվելու Վրաստանի ադրբեջանցի և հայ փոքրամասնությունների տագնապներին և մտահոգություններին: Հանրային լայն քննարկումներն այն հարցի շուրջ, թե ինչպիսի առավելություններ կամ թերություններ կունենա Վրաստանի վերածումը դաշնային պետության, այդ փոքրամասնություններին կօգնի հաղթահարելու այն պատկերացումները, որ իրենց վերաբերում են որպես երկրորդ կարգի քաղաքացիների:

- Աբխազիայի և Հարավային Օսեթիայի կարգավիճակների շուրջ անորոշությունը պահանջում են նորարարական մտածողություն և մոտեցումներ: Սահակաշվիլին չկարողացավ ըմբռնել Աբխազիային և Հարավային Օսեթիային պարտադրված և խորհրդային ժամանակաշրջանի վերջին տասնամյակներում վերջնականապես արժեզրկված ինքնավարությունների անհեթեթությունը և հետևաբար հասկանալու, թե ինչու էին այդ շրջանների ղեկավարները շարունակաբար մերժում իր կողմից արվող հաշտության առաջարկները: Եթե միջազգային հանրությունը պատրաստվում է այսուհետ ևս պաշտպանել Վրաստանի տարածքային ամբողջականությունը՝ չնայած Աբխազիայի և Հարավային Օսեթիայի փաստական անջատմանը, ապա այն նաև պետք է համոզի վրացական ղեկավարությանը՝ մշակելու այլընտրանքային մոտեցումների վրա կառուցված նորարարական առաջարկներ, որոնք կարող են հնարավորություն ընձեռել այդ երկու շրջանների վերընդգրկվելու Վրաստանի կազմում՝ այդ տարածքներում մեծամասնություն կազմող ժողովուրդների համար ընդունելի պայմաններով:

- Հայաստանը պետք է շարունակի պահպանել հավասարակշռված մոտեցումները Ռուսաստանի և Վրաստանի միջև: Թեև Հայաստանի նոր ղեկավարությունը չի օգտագործում փոխլրացման՝ կոմպլեմենտարության հասկացությունը, իրականում այդ քաղաքականությունը շարունակում է իրականացվել և պետք է ավելի ընդլայնվի ու ընդգծվի, հատկապես տարածաշրջանում առաջ եկած նոր լարվածությունների և Ռուսաստանի ու ԱՄՆ-ի միջև պահպանվող անորոշությունների լույսի ներքո:

- Հայաստանն ակտիվորեն պետք է էլ ավելի սերտացնի կապերը Վրաստանի հետ: Ջանքերի ու միջոցների համատեղումը, բարձր մակարդակի երկխոսության ակտիվացումը, Երևան-Բաթումի մայրուղու ծրագրի իրականացումը՝ բոլորն էլ հրատապ են և փոխադարձաբար շահավետ:

- Էներգետիկայի և տրանսպորտի բնագավառներում տարածաշրջանային ռազմավարական նշանակության համատեղ ծրագրերը պետք է առաջնահերթային ոլորտներ մնան Իրանի հետ համագործակցության տիրույթում:

- Եթե Թուրքիան շարունակի իր նախընթաց քաղաքական ուղեգիծը և երկկողմ հարաբերությունների նորմալացումն առաջվա պես

## ՃԳՆԱԺԱՄԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

նախապայմանավորի Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմամբ, այդպիսով նախապատվությունը տալով ոչ թե քաղաքական համաձայն լուծումներին, այլ երկկողմ շփումների զուտ ցուցադրական կողմին, ապա Հայաստանը կարող է կամ սառեցնել այդ շփումները, կամ իջեցնել դրանց մակարդակը, սակայն չի կարող վերջնականորեն հրաժարվել գործընթացից: Այդ պարագայում, թեև, սահմանը հազիվ թե բացվի:

- Եթե սակայն Թուրքիան իրապես փոխել է իր քաղաքականությունը և պատրաստ է հայ-թուրքական երկկողմ հարաբերությունների հաստատումը չշաղկապել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին, ապա միակ խոչընդոտը մնում է հանձնաժողովի հարցը: Հայաստանի համար պատմաբանների հանձնաժողովի ստեղծումն անընդունելի է: Ուստի Հայաստանը պետք է առաջարկի ճշգրտորեն հաշվարկված դիվանագիտական փաթեթ, հանձնաժողովի մի այնպիսի բնորոշմամբ, որի շրջանակներում հանձնաժողովը կարող է նաև զբաղվել 1915 թ. իրադարձությունների ուսումնասիրմամբ, սակայն ոչ թե ցեղասպանության փաստն ուսումնասիրելու, այլ խնդիրը հաղթահարելու նպատակով: Ավելին, նման հանձնաժողովի ձևավորումը պետք է լինի ոչ թե սահմանների բացման նախապայման, այլ` զուգահեռ քայլ: Այս պարագայում սահմանը կարող է բացվել արդեն 2009 թվականին:

- Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը սպասում է ինքնորոշման իր իրավունքի ճանաչմանը, ինչպես նաև Ադրբեջանի սանձարձակած պատերազմին հաջողությամբ դիմագրավելու փաստի ընդունմանը: Նավթադոլարներից ոգևորված Ադրբեջանը ակնկալում է նոր` քաղաքական կամ ռազմական արդյունք: Վերջապես, անհրաժեշտ է ակտիվացնել հասարակական շրջանակների և դիվանագիտական ջանքերը` բացատրելու համար միջազգային հանրությանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության էությունը և կողմերի ակնկալիքները` մադրիդյան սկզբունքների հիման վրա համապարփակ երկարատև և արդար լուծման հասնելու համար: Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի շուրջ հստակությունը պետք է լինի արդարացի լուծման հիմքում և ապահովի Ղարաբաղի ժողովրդի քաղաքական անվտանգությունը:

- Հաշվի առնելով մադրիդյան փաստաթուղթը և բանակցային գործընթացը ԵԱՀԿ-ից հեռացնելու Ադրբեջանի փորձերը, Հայաստանը պետք է կարողանա ապահովել Մինսկի խմբի գործընթացի շարունակականությունը և պահպանել մադրիդյան սկզբունքները բանակցային սեղանի վրա: Հայաստանը կարող է մասնանշել ռուս-վրացական հակամարտությունը, և դրա հետևանքով` Ռուսաստանի կողմից Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անկախության ճանաչումը, բացատրելու համար, որ չի բացառում Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումը, բայց դա չի անում միայն այն պատճառով, որ ինքնորոշման սկզբունքն արդեն իսկ բանակցային փաթեթի մաս է:

# ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Հայաստանի համար 2008թ. նախագահական ընտրությունների տարի էր: Փետրվարի 19-ի Հայաստանյան նախագահական ընտրությունները, ըստ նախնական գնահատականի, մեծապես անցկացվել էին ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի նկատմամբ ստանձնած պարտավորությունների և չափանիշների համաձայն , չնայած քվեարկության և քվեների հաշվարկի ընթացքում արձանագրված անճշտություններին: Թերվստահությունն ընտրական գործընթացի հանդեպ, իշխանությունների կողմից քաղաքացիական իրավունքների հարգանքի բացակայությունից առաջացող ցինիզմը և խաղաղ միջոցներով քաղաքական փոփոխություններ իրականացնելու թվացյալ անհնարինությունից բխող հուսահատությունը ստիպեց հանրության լայն շրջանակներին խաղաղ բողոքի դուրս գալ ընտրությունների արդյունքների դեմ, որին հետևեցին մարտի 1-ին ոստիկանության և ցուցարարների միջև տեղի ունեցած ընդհարումները, հանգեցնելով 10 հոգու մահվան:

Մարտի 1-ի իրադարձությունները կարելի է համարել 1999 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում տեղի ունեցած ահաբեկչությունից հետո ամենաողբերգական իրադարձությունը: Մարտի 1-ի արդյունքում երկիրը ոչ միայն սուզվեց վերջին տասնամյակի վատագույն քաղաքական ճգնաժամի մեջ. այն նաև լրջագույն հարված հասցրեց Հայաստանի ժողովրդավարության կայուն, սակայն անհամաչափ առաջընթացին: Երբևէ մինչև այդ հայաստանյան հետընտրական զարգացումները չէին հանգեցրել մարդկային զոհերի:

Երբևէ հայաստանյան քաղաքականությունը և հասարակությունն այդչափ բևեռացված չեն եղել: Հայաստանի ղեկավարությանը հաջողվեց զսպել առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի առաջնորդած քաղաքական ընդդիմախոսների լրջագույն մարտահրավերն՝ ուղղված իշխանությանն ու դրա կայունությանը, սակայն իշխանությունը դեռևս քիչ բան է արել հասարակությանը հասցված վերքերն ապաքինելու համար:

*Երբևէ մինչև այդ հայաստանյան հետընտրական զարգացումները չէին հանգեցրել մարդկային զոհերի: Երբևէ հայաստանյան քաղաքականությունը և հասարակությունն այդչափ բևեռացված չեն եղել:*

Ճակատագրի հեգնանքով Հայաստանի ղեկավարության ամենախաղաղ և արժանապատիվ փոփոխությունը տեղի է ունեցել 1998 թ., երբ Տեր-Պետրոսյանը, խստագույն ճնշման ենթարկվելով, հրաժարական տվեց: Վարչապետ Ռոբերտ Քոչարյանը դարձավ նախագահ, իսկ Տեր-Պետրոսյանը, ում հրաժարականը հակասական մեկնաբանությունների տեղիք էր տվել, անգամ ներկա գտնվեց նոր նախագահի պաշտոնամուտի արարողությանը: Դա իր տեսակի մեջ ԱՊՀ-ում իշխանության խաղաղ փոխանցման առաջին օրինակն էր:

Տեր-Պետրոսյանը վերադարձավ քաղաքական բեմ 2007թ. աշնանը՝ ցասումնալից բողոք բարձրացնելով երկրում առկա դրության դեմ և հավաքագրելով բոլոր նրանց, ովքեր դժգոհ էին և հիասթափված, և իրենց քաղաքացիա-

## ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

կան իրավունքներից զրկված էին զգում: Նախագահական ճամբարում, որտեղ որոշվել էր, որ վարչապետ Սերժ Սարգսյանն էր լինելու Քոչարյանի ժառանգորդը, ոչ միայն չէին ըմբռնում և համակերպվում, այլև փորձում էին հերքել ժողովրդական հիասթափությունը և դժգոհությունը. նրանք շատ ուշ հասկացան, թե իշխանության համար ինչպիսի հետևանքների կարող է հանգեցնել Տեր-Պետրոսյանի օգտին կուտակվող անսպասելի աջակցությունը:

*Մեկը մյուսին հաջորդած այդ վարչակազմերը դիմում էին նույնանման միջոցների, որպեսզի պահպանեին իրենց իշխանությունը:*

Սարգսյանի նախընտրական արշավը հագեցած էր երկրի և հասարակության զարգացման վերաբերյալ հաշտարար, դեպի ապագան ուղղված, ազատականությամբ տոգորված և բոլոր դերակատարներին գործընթացների մեջ ներգրավելու կոչերով: Միևնույն ժամանակ, Սարգսյանի ճամբարն ընտրությունների մեջ մուտք գործեց խոշոր վարչական ռեսուրսներով և դրանից բխող սեփական ուժի և իրավացիության զգացումով:

Արդյունքում՝ ընտրությունները վերածվեցին առճակատման, որի մեջ կողմերից մեկը պետք է կատարյալ պարտություն կրեր: Դա հիմնավորապես բացառեց հետընտրական շրջանում փոխզիջումային լուծումների հնարավորությունը, որի շնորհիվ երկու հիմնական հակադիր թեկնածուները կարող էին շահագրգռված լինել գոյություն ունեցող քաղաքական համակարգի պահպանման մեջ:

Առկա քաղաքական համակարգի սերմերը, արմատավորվել էին 1991-1998 թթ.՝ Տեր-Պետրոսյանի կառավարման շրջանում: 1996 թ. նրա վարչակազմը ստեղծեց ոչ այնքան ժողովրդավարական և խստագույնս վիճարկված ընտրությունների մի նախադեպ, որի պատճառով ընդդիմությունը գրոհեց խորհրդարանը: Այդ նույն ժամանակներից ի վեր դատավճիռները պարտադրվում էին իշխանության գործադիր թևի կողմից, կառավարության բարձրաստիճան պաշտոնյաները վայելում էին տնտեսության եկամտաբեր մասնաբաժինների մենաշնորհները, անողոքաբար հետապնդվում էր ընդդիմությունը, և փակվում էին կառավարությանը քննադատող լրատվամիջոցները: Այդպիսով, հայաստանցիների համար ոչ թափանցիկ ընտրությունները դարձան սովորական երևույթ, ինչպես և անխուսափելի դարձան ընտրություններին հաջորդող իրադրությունն արդար միջոցներով շտկելու կոչերը:

Մեկը մյուսին հաջորդած այդ վարչակազմերը դիմում էին նույնանման միջոցների, որպեսզի պահպանեին իրենց իշխանությունը: Այդ վարչակազմերից յուրաքանչյուրը վստահ էր, որ պարտությունն ընտրություններում համազոր է իշխանությունը մի այնպիսի ուժին հանձնելուն, որի մոտեցումները հիմնարար քաղաքական խնդիրների շուրջ առնվազն սխալ են: Դրանցից յուրաքանչյուրը վախենում էր, որ այլ կողմում գտնվողները «ծախելու են» Լեռնային Ղարաբաղը, խախտելու են հավասարակշռությունը Ռուսաստանի և Միացյալ Նահանգների հետ հարաբերություններում, անտեղի զիջումներով խաղաղեցնելու են Թուրքիան և նույնիսկ վտանգելու են տնտեսական աճը: Յուրաքանչյուրը վստահ էր, որ այլ

## ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

կողմում գտնվողների հայացքները ոչ միայն տրամագծորեն տարբեր են իրենց մոտեցումներից, այլև պարզապես վտանգավոր են:

Բացի այդ, նորանկախ երկրում նախկին նախագահի կամ կառավարության այլ բարձրաստիճան նախկին պաշտոնյայի ինստիտուտ և ավանդույթ դեռևս չի ձևավորվել: Պաշտոնից հեռանալով՝ նման պաշտոնյային հանրային ընկալման մեջ որևէ դերակատարում չի վերապահվում: Այդպիսով, պարտությունն ընտրություններում կարող է առնվազն հանգեցնել քաղաքական կարիերայի ավարտին: Այն նաև կարող է հանգեցնել քաղաքական իշխանության կորստի, ինչն, իր հերթին, առանցքային է անձնական իշխանության և կարողության համար: Վերջապես, 2008 թ., ինչպես և նախորդ այլ ընտրություններում, սկսած 1995 թվականից կողմերը փոխադարձաբար սպառնում էին իրենց ընդդիմախոսների ազատությանը և անձնական անվտանգությանը: Ակնհայտ է, որ դրանից դրդված՝ յուրաքանչյուր թեկնածու ցանկանալու էր հաղթել ամեն գնով: Հայաստանում, ինչպես և մի շարք այլ նախկին խորհրդային հանրապետություններում, ընտրությունները ոչ միայն քաղաքական մրցակցություն են, այլև սեփական ապագան ապահովելու միջոց:

Այդպիսով, վիճարկելի ընտրությունները և դրանից բխող հիմնական քաղաքական դերակատարների շրջանակում ժողովրդավարական մեխանիզմների միջոցով միմյանց իշխանությունը փոխանցելու հնարավորության հանդեպ վստահության պակասն անկախության ձեռքբերումից ի վեր դարձել են Հայաստանի քաղաքական անկայունության հիմնական աղբյուրը:

Քաղաքական ճգնաժամը սկսվեց ծայրահեղ և անձնական մեղադրանքներից, որոնք հնչեցին նախընտրական արշավի ընթացքում: Ընտրությունների պաշտոնական արդյունքների համաձայն, վարչապետ Սարգսյանը ստացավ քվեների 53 տոկոսը, իսկ Տեր-Պետրոսյանը՝ քվեների 22 տոկոսը: Խորհրդարանի նախկին խոսնակ Արթուր Բաղդասարյանը երրորդն էր՝ քվեների 17 տոկոսով, իսկ Հայ յեղափոխական դաշնակցության թեկնածու Վահան Հովհաննիսյանը՝ չորրորդը՝ 6 տոկոսով:

Ընտրությունները տանուլ տված երեք թեկնածուներն էլ վիճարկեցին դրանց պաշտոնական արդյունքների ճշգրտությունը: Ընտրություններին հաջորդած շաբաթվա ընթացքում և ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի հետընտրական առաջին զեկույցից հետո, Տեր-Պետրոսյանի ճամբարը՝ պահանջելով նոր ընտրություններ, Ազատության հրապարակում կազմակերպեց հանրահավաք, որը վերածվեց շուրջօրյա նստացույցի: Իշխանությունները ցույցերի կազմակերպիչներին մեղադրում էին հանրային ժողովների ու հասարակական կարգուկանոնի վերաբերյալ օրենքները խախտելու համար: Ի վերջո, մարտի 1-ի վաղ առավոտյան իրավապահ մարմինները ներթափանցեցին հրապարակ, ըստ պաշտոնական բացատրության՝ հրապարակում ցուցարարների մոտ զենքի առկայության մասին օպերատիվ տեղեկության հիման վրա տեղազննություն կատարելու, իսկ ցույցերի կազմակերպիչների պնդմամբ՝ Ազատության հրապարակի խաղաղ ցույցը բռնությամբ ցրելու նպատակով: Մինչև մարտի 1-ի երեկո, Ազատության հրապարակը ոստիկանների գործողության արդյունքում ցուցարարներից ազատելուց հետո, բազմահազարանոց ամբոխ էր հավաքվել Ֆրանսիայի դեսպանության հարող տարածքում: Այն, ինչ սկսել էր որպես դժգոհության ցույց, վերածվեց արյունոտ ու բռնարարքներով զուգորդված առճակատման:

## ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Մարտի 1-ի երեկոյան ժամը 22-ի սահմաններում նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրամանագրով հայտարարվեց արտակարգ դրություն, իսկ մարտի 2-ի առավոտյան հայաստանցիները տեղեկացան, որ հայտարարվել է արտակարգ իրավիճակ, իսկ նախորդ գիշերվա ընթացքում առնվազն ութ մարդ մահացել է (ևս երկու հոգի մահացան ավելի ուշ հիվանդանոցում) և ավելի քան հարյուրը՝ վիրավորվել: Զոհվածներից ութը քաղաքացիական անձինք էին, երկուսը՝ ոստիկաններ: Քիչ ժամանակ անց շրջանառության մեջ դրվեցին սիրողական նկարահանումներ, որոնց մեջ տեսագրված էին քաղաքացիական անձանց հրացաններից թիրախի տակ առնող և հետապնդող ոստիկաններ: Իշխանությունները, վկաները և փորձագետները ասում էին, որ նրանք կրակում էին ռետինե գնդակներով կամ էլ օդ հետագծող գնդակներով: Սակայն դա որևէ մեկին չհանգստացրեց: Նրանք, ովքեր ընդդիմացել էին իշխանություններին, շարունակեցին հավատալ, որ իսկական գնդակներ էին օգտագործվել, և որ ամեն դեպքում նման մոտ հեռավորության վրա կրակված ռետինե գնդակները նույն վնասն էին կարող հասցնել, ինչ իսկական գնդակները: Այդուհանդերձ, ինչ էլ որ լիներ առճակատման բնույթը, փաստ է, որ ոստիկանությունը քաղաքացիների վրա կրակ է բացել: Ութ ամիս անց, երկու կողմերը շարունակում են կտրականապես մերժել հակառակ կողմի վարկածն առ այն, թե ինչ է իրականում տեղի ունեցել:

Ավելի քան 100 ընդդիմության ակտիվիստներ ու աջակիցներ ձերբակալվել էին մարտի 1-ին անմիջապես հաջորդած օրերի և շաբաթների ընթացքում:

Եվրոպական միությունը և Միացյալ Նահանգները անմիջապես արտահայտեցին իրենց լուրջ մտահոգությունները հետընտրական իրադարձությունների կապակցությամբ՝ կոչ անելով Հայաստանի իշխանություններին վերացնել արտակարգ իրավիճակը Երևանում, ազատ արձակել ձերբակալված քաղաքական գործիչներին և թույլատրել այդ իրադարձությունների անկախ հետաքննություն: Այդ պահանջներից և ոչ մեկը կյանքի չկոչվեց՝ արտակարգ իրավիճակի վերացման բացառությամբ: Այն էլ, որովհետև սպառվել էր 20-օրյա ժամկետը, որն այլևս չերկարացվեց:

Հայաստանի իշխանությունները շարունակում են պնդել, որ բողոքի ցույցերը Տեր-Պետրոսյանի առաջնորդած ընդդիմության նյութած դավադրությունն էր, որի նպատակն էր օգտագործել ընտրությունների առիթը պետական հեղաշրջում իրականացնելու համար: Ընդդիմությունը պնդում է, որ դա մտացածին մեղադրանք է, որի տակ իրականացվում է ընդդիմության քաղաքական հետապնդում:

Եվրոպայի Խորհուրդը ներգրավվեց գործընթացին՝ ապրիլին իր Խորհրդարանական Վեհաժողովի (ԵԽԽՎ) միջոցով արտահայտելով այդ նույն մտահոգությունները: Հունիսին այն ևս պահանջեց անմիջապես դադարեցնել տեղական մակարդակի դատարանների կողմից բացառապես ոստիկանների մեղադրական ցուցմունքների վրա հիմնված դատավճիռների կայացումը: Մարտի 1-ի իրադարձությունների հետևանքով ձերբակալված գրեթե 70 անձինք շարունակում են գտնվել անազատության մեջ: Նրանց մի մասի հանդեպ դեռևս դատավճիռ չի կայացվել: Միացյալ Նահանգները, Եվրոպայի խորհուրդը և այլ միջազգային կառույցներ շարունակում են ձերբակալվածների խնդրի առնչությամբ

մտահոգություններ արտահայտել: Միջազգային կառույցները բազմիցս համոզմունք են հայտնել, որ անազատության մեջ գտնվողների գոնե մի մասը քաղաքական պատճառներով են ձերբակալվել:

Ձերբակալվածների մեծ մասն արդեն դատապարտվել է մարտի 1-ի բախումների հետ կապված մեղադրանքներով: Ամենատարածված մեղադրանքը ոստիկանությանը դիմադրություն ցուցաբերելն ու զանգվածային անկարգություններին մասնակցելն է: Սակայն դատավճիռները կայացվել են միայն ոստիկանների ցուցմունքների հիման վրա: Լևոն Տեր-Պետրոսյանին մեղադրանք չի ներկայացվել: Իրավապահ մարմինները ցարդ նաև չեն ձերբակալել կամ էլ մեղադրանք ներկայացրել որևէ մեկին այդ բախումների ընթացքում ութ քաղաքացիական անձանց և ներքին զորքերի երկու զինծառայողների մահվան կապակցությամբ: Ըստ նրանց, այդ սպանությունների ճշգրիտ հանգամանքները դեռևս պարզված չեն:

Ինն ամիս անց, քաղաքական իրավիճակը շարունակում է թելադրված լինել փոխադարձ անվստահությամբ, քամահրանքով և ապատեղեկատվությամբ: Եվրոպայի Խորհրդի սպասելիքներն իրականություն չեն դարձել: Խորհրդարանի երեք պատգամավորներն ու չորս այլ ընդդիմադիր առաջնորդներն այժմ պատրաստվում են դատավարության, որի ընթացքում մեղադրվելու են մարտի 1-ի բռնությունները կատարելու և իշխանությունը բռնազավթելու փորձի մեջ: Շուրջ 30 հոգի արդեն պայմանական դատապարտման են ենթարկվել, կամ գործերի կարճման հիմնավորմամբ ազատ արձակվել:

*Պարտությունն ընտրություններում կարող է առնվազն հանգեցնել քաղաքական կարիերայի ավարտին: Այն նաև կարող է հանգեցնել քաղաքական իշխանության կորստին, ինչն, իր հերթին, առանցքային է անձնական իշխանության և կարողության համար:*

Տարաձայնությունները և փոխադարձ անվստահությունն էլ ավելի են խորանում, քանի որ պարզ չէ, թե ինչ է իրականում կատարվում երկրի բևեռացված և լարված քաղաքական դաշտում, բացակայում է արդար, վստահելի և օբյեկտիվ տեղեկատվությունն այդ մասին: Մարտի 1-ի դեպքերի պարագայում ի հայտ են եկել ծայրահեղ անհամապատասխանություն և հակասություններ մարդկանց ընկալումներում. մի մասը համարում է, որ ցուցարարները սադրիչ հարձակումներ են գործել, մյուսներն էլ կարծում են, որ այդ ամենի համար պատասխանատու են թերի պատրաստված իրավապահ մարմինների ստորաբաժանումները, որոնք հարձակվել էին ցուցարարների վրա: Մեծամասնության կարծիքով, սակայն, պատասխանատվությունն ի վերջո ընկնում է երկրի իշխանությունների վրա: Այս հարցի շուրջ հանրությանը մատչելի տեղեկատվությունը բաղկացած է ականատեսների վկայություններից, ինչպես նաև երկրորդ և երրորդ ձեռք անցած տեղեկություններից ու ասեկոսեներից, որոնք միախառնվել են և խոր արմատներ են գցել մարդկանց ուղեղներում: ԵԽԽՎ-ը և այլ

միջազգային մարմիններն իրենց կասկածներն են հայտնել իրադարձությունների պաշտոնական վարկածի շուրջ՝ կոչ անելով ձեռնարկել անկախ հետաքննություն: Հունիսին իշխանությունները ձևավորեցին խորհրդարանի ժամանակավոր հանձնաժողով՝ բռնությունները հետաքննելու նպատակով: Խորհրդարանում ներկայացված միակ ընդդիմադիր կուսակցությունը՝ Ժառանգությունը, և Տեր-Պետրոսյանի ղեկավարած ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսը հրավիրվել էին ներկայացուցիչներ ուղարկելու այդ հանձնաժողով: Սակայն երկուսն էլ մերժեցին այդ առաջարկը, քանի որ այդ մարմնում գերակշռելու էին իշխանամետ օրենսդիրները:

Հուլիսին, Մարդու Իրավունքների հարցերով Եվրոպայի Խորհրդի Հանձնակատարն առաջարկեց ստեղծել նոր ձևաչափ՝ փաստահավաք մարմին, որի կազմում իշխանությունը և ընդդիմությունը կունենային համաչափ ներկայացվածություն: Իսկ խորհրդարանի հանձնաժողովն էլ կգնահատի այդ մարմնի ուսումնասիրության արդյունքները:

Հայաստանի իշխանություններն ընդունեցին այդ առաջարկը: Հոկտեմբերին նախագահ Սարգսյանը ստորագրեց Փորձագետների փաստահավաք խումբ ձևավորելու մասին կարգադրությունը: Խումբը բաղկացած է հինգ անդամներից, որոնցից երկուսը նշանակվում են Հայ ազգային կոնգրեսի և Ժառանգության կողմից, երկուսն էլ՝ չորս կուսակցությունից բաղկացած իշխող կոալիցիայի կողմից, իսկ հինգերորդը՝ Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի կողմից: Վերջինս առանց հապաղելու առաջ քաշեց իր ներկայացուցչին այդ խմբում և ողջունեց նախագահի կարգադրությունը: Սակայն երկու ընդդիմադիրներն առաջ քաշեցին մի շարք նախապայմաններ այդ նոր հետաքննությանն իրենց մասնակցելու դիմաց: Այդ պայմաններից ամենակարևորն էր արտասահմանցի փորձագետների ներգրավումը փաստահավաք խմբի աշխատանքներին:

Հոկտեմբերին Տեր-Պետրոսյանը ժամանակավորապես կասեցրեց իր կազմակերպած պարբերական ցույցերն ու բողոքի միջոցառումները, որոնք տեղի էին ունենում հունիսից ի վեր և ընդհանուր առմամբ ավելի փոքրաթիվ էին քան նախընտրական և հետընտրական շրջանի հանրահավաքները: Տեր-Պետրոսյանն իր որոշումը բացատրեց նրանով, որ ցանկանում է խուսափել Հայաստանի ղեկավարության թուլացումից Լեռնային Ղարաբաղի խաղաղ գործընթացի այս կարևորագույն փուլում: Նա նաև մեղադրեց Սարգսյանին Ադրբեջանին ավելի մեծ զիջումների գնալու պատրաստակամության մեջ, որի փոխարեն նա իբր փորձելու է ապահովել իր իշխանության Արևմուտքի շարունակական աջակցությունը: Տեր-Պետրոսյանը նաև հայտարարեց, որ ինքը չի ցանկանում առիթ տալ, որպեսզի իրեն մեղադրեն այդ զիջումների բուն պատճառը լինելու մեջ:

Հակադրությունը շարունակվում է: Իշխանություններին դժվար է լինելու առաջ տանել բարեփոխումների օրակարգը՝ ներառյալ անձամբ նախագահի կողմից հայտարարված բարեփոխումները, քանի որ դա կարող է մեկնաբանվել իբրև անտեղի զիջում, կամ էլ իշխանության վերահսկողության կորուստ: Հանրության հիասթափված ու դժգոհ հատվածը կառավարության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությունը և բոլոր գործողությունները կասկածամտությամբ է ընկալում:

## ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՃԳՆԱԺԱՄ

2008 թ. նախագահական ընտրությունները, ինչպես և դրան նախորդած ու հետևած քաղաքական ու հասարակական անկայունությունն ապացուցեցին, որ Հայաստանի քաղաքացիական հասարակությունը, ինչպես և երկրի քաղաքական ու սոցիալական ինստիտուտները չեն հասունացել: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները թույլ տվեցին իրենց դարձնել կուսակցական շահերի ֆինանսավորվող գործիքներ ու խոսնակներ՝ չդառնալով բաց, հանրային, հանդուրժող բանավեճի հարթակ: Չնայած այն հանգամանքին, որ այդ կազմակերպություններն անցյալում ևս ակտիվ էին, ներկայիս քաղաքական շրջանում դրանք ակնհայտորեն բևեռացան: Կառուցողական երկխոսության այն գոտին, որը շատ երկրներում պահպանվում է և ձևավորվում քաղաքացիական հասարակության կողմից, գոյություն չուներ Հայաստանում 2008 թ. գարնան և ամռան ընթացքում:

Շարունակվող անկայունությունն ու գերիշխող անհանգստությունը և թերվստահությունը բխում են այն հանգամանքից, որ ինստիտուտներն առաջին հերթին կրում են ձևական, այլ ոչ թե բովանդակային բնույթ՝ թույլ չտալով, փաստորեն, հենվել դրանց վրա: Իրականում ընդդիմության բռնկման ցնցումը, զարգացումների բռնությամբ հանգուցալուծվելը և դեռևս չբացահայտված ու չպարզաբանված այդ իրադարձությունները հստակորեն ցույց են տալիս, որ այդ ինստիտուտներն արդյունավետ չեն:

Հանրային այն ինստիտուտները, որոնք կարևոր դերակատարում ունեն ինչպես կառավարման, այնպես էլ հանրության կյանքում, առաջնորդվում են առկա խնդիրների մուտքագրումն օրակարգ և դրանց հանգուցալուծումը, չկարողացան համաչափորեն և համարժեքորեն կառավարել տեղի ունեցող գործընթացները. ավելին, տեղի ունեցավ հակառակը: Այդ գործընթացներն էին մղում ինստիտուտները, ստիպելով դրանց ձեռնարկել ոչ ռացիոնալ, հետադիմական գործողություններ, որոնք հանգեցրեցին կառավարության կողմից՝ հանրության հանդեպ և հանրության կողմից՝ հենց կառավարության հանդեպ էլ ավելի մեծ թերվստահության: Ազգային ժողովը, քաղաքական կուսակցությունները՝ որպես ինստիտուտներ, լրատվամիջոցները, դատական համակարգը և իրավապահ մարմինները չկարողացան ապահովել արդյունավետ և հուսալի ելքեր դեպի երկխոսություն և համագործակցություն՝ անհամաձայնությունից և անբավարարվածությունից խուսափելու նպատակով:

*Շարունակվող անկայունությունն ու գերիշխող անհանգստությունը և թերվստահությունը բխում են այն հանգամանքից, որ ինստիտուտներն առաջին հերթին կրում են ձևական, այլ ոչ թե բովանդակային բնույթ:*

Նոր ինստիտուտ՝ Հանրային խորհուրդ ստեղծելու վերաբերյալ իշխանությունների առաջարկը, որի նպատակն է ամրապնդել կապը իշխանության և հանրության միջև, ինչպես նաև հանրության մտահոգություններն ուղղորդել և ներկայացնել կառավարությանը, ապացուցում է, որ առկա ինստիտուտները բավարար չեն: Այդ մեկը ևս կարող է չաշխատել: Ընդդիմության մասնակցությունն առանցքային է այդ խորհրդի հաջողության համար, սակայն այն ակնհայտորեն չի

## ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

վստահում իշխանությանը և արդեն մերժել է այդ խորհրդում որևէ լուրջ մասնակցություն ունենալու հնարավորությունը:

Կարևորագույն հետևանքներ ունի Ազգային ժողովի անարդյունավետությունը: Այն իշխանության ճյուղերից մեկն է, և ըստ սահմանման ու կառուցվածքի պետք է լինի ներկայացուցչական: Չնայած այն հանգամանքին, որ 2007 թ. Հայաստանի խորհրդարանական ընտրությունների արդյունքում հինգ կուսակցություններ հաղթահարեցին նվազագույն պատնեշը և մուտք գործեցին խորհրդարան, նախագահական ընտրություններից հետո այդ հինգ կուսակցություններից չորսը ձևավորեցին կոալիցիա և միայն մեկը՝ Ժառանգություն -ը մնաց ընդդիմության շարքերում: Այդպիսով, երկու ընտրությունների միջև ընկած այդ մեկ տարում Ազգային ժողովը, կարելի է ասել, դարձավ պակաս ներկայացուցչական մարմին:

Չնայած այն հանգամանքին, որ Դաշնակցությունը և Օրինաց երկիր կուսակցությունը նախընտրական շրջանում խիստ քննադատության էին ենթարկում Սարգսյան թեկնածուին, այդ երկու կուսակցությունները ու նրանց թեկնածուները հայտարարեցին, որ ընդդիմադիր դիրքերում մնալը Տեր-Պետրոսյանի արմատական մոտեցումներին աջակցելուն համազոր կլինեն, ուստի և միացան իշխող կոալիցիային: Այդպիսով, Ազգային ժողովը սկսեց գործել որպես իշխանության գործադիր ճյուղի շարունակություն, այլ ոչ թե որպես դրա հանդեպ հավասարակշռություն ապահովող ինստիտուտ: Այդ դրությունն էլ ավելի ամրագրվեց աշնանը, երբ նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար և նախկին փոխվարչապետ Հովիկ Աբրահամյանը ձայների ճնշող մեծամասնությամբ ընտրվեց Ազգային ժողովի նոր նախագահ: ԱԺ նախորդ նախագահ Տիգրան Թորոսյանը նախագահ Սարգսյանի իշխող Հանրապետական կուսակցության կողմից բանեցված խիստ ճնշման ներքո սեպտեմբերին ներկայացրեց իր հրաժարականը:

Արդյունքում, բնակչության այն գրեթե 50 տոկոսը, որն, ըստ քվեարկության պաշտոնական արդյունքների, ընտրել է նախագահի մեկ այլ թեկնածու, զրկված է լեգիտիմ քաղաքական հարթակից: Հայ ազգային կոնգրեսը և Ժառանգություն կուսակցությունը մասնակցեցին մի շարք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, որոնք անցկացվեցին երկրի տարբեր շրջաններում օգոստոսից մինչև հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում: Սակայն իշխող Հանրապետական կուսակցությունը շահեց այդ քվեարկությունների ճնշող մեծամասնությունը ևս:

Բոլոր այդ՝ լինեն դրանք նախագահական, խորհրդարանական, թե տեղական ինքնակառավարման մարմինների, ընտրությունների արդյունքները ցույց են տալիս, որ մի կարևորագույն քաղաքական ինստիտուտ, որ պետք է լինեն կենսունակ քաղաքական կուսակցությունները, դեռևս չի կայացել և զարգացել: Քաղաքական կուսակցությունները չեն գործում որպես գաղափարախոսությամբ տոգորված ընդդիմություն: Փոխարենը, գուցե Հայ յեղափոխական դաշնակցության բացառությամբ, դրանք ստեղծվել են որպես կոնկրետ անհատների հարթակներ և շարունակում են այդպիսին լինել: Իսկ նրանք, ովքեր զբաղեցրել են քաղաքական իշխանությունը բոլոր մակարդակներում՝ լինի դա ազգային, թե տեղական, նրա փոխարեն, որ սնուցեն, խրախուսեն կամ գոնե թույլատրեն գաղափարների և ռեսուրսների առողջ հոսքը, բոլոր ընտրություններին, 1991 թ. սեպտեմբերի առաջին քվեարկության բացառությամբ, ձգտել են սահմանափակել և վերահսկել ժողովրդական ազդեցության երեք շերտերը՝ գաղափարախոսությունը, դրամը և

## ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

լրատվամիջոցները: Անձնավորված, քերի զարգացած և լուրջ գաղափարախոսական հիմքից, մարդկային և ֆինանսական ռեսուրսներից զրկված քաղաքական կուսակցությունները չէին կարող դիմադրել այդ տեսակի վերահսկողությանը:

2008 թ. Հայաստանի քաղաքական կյանքը լուսաբանելիս՝ լրատվամիջոցները ցույց տվեցին իրենց ծայրահեղ բևեռացված լինելը: Հեռարձակող ընկերությունները ցուցաբերեցին մեծագույն ինքնագրաքննություն (եթե չասենք՝ ինքնագրաքննություն) և շատ զգուշավոր էին, որպեսզի չբարկացնեն իշխանություններին, ինչպես նաև դրանցից շատերի պարագայում իրենց իշխանամետ սեփականատերերին: Արդյունքում, եթերում բացակայում էր բազմազանությունը: Իրավիճակն ավելի էր վատթարանում այն պատճառով, որ լրատվամիջոցները չեն վայելում բնակչության վստահությունը: Փողոցը, կրկին, դարձավ լուրերի, տեղեկատվության և նույնիսկ վերլուծության նախընտրելի աղբյուրը:

Իրենց ընդդիմադիր հայացքներով հայտնի լրատվամիջոցները դարձան հարկահավաք մարմինների ստուգումների թիրախ: Գյումրիի «Գալա» հեռուստաընկերությունը կազմակերպեց դրամահավաք և հանրության աջակցությամբ վճարեց հարկահավաքների գնահատման համաձայն չվճարված հարկերը: Հարկային տեսուչները նմանապես այցելություններ կատարեցին նաև չորս օրաթերթերի խմբագրություններ:

Կառավարությունը հանդես եկավ օրենսդրական նախաձեռնությամբ՝ առաջարկելով խորհրդարանին մի օրինագիծ, համաձայն որի հեռուստաալիքների համար հայտերը հետաձգվում են երկու տարով՝ 2009 թ. մինչև 2011թ.: Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը փոփոխվեց մինչև 2012 թ. հեռարձակման համակարգի թվայնացման հիմնավորմամբ: Լրատվամիջոցները և այդ ոլորտի փորձագետները խիստ քննադատության ենթարկեցին այդ որոշումը, քանի որ այն հետաձգեց նոր մրցույթների միջոցով հեռուստաեթեր ստանալու հնարավորությունները: Նրանց քննադատությունը նաև բխում էր այն հանգամանքից, որ թվայնացումը շատ թանկարժեք հաճույք է և, հենց այդ պատճառով էլ, թվայնացման չափանիշներին համապատասխանելը շատ բարդ գործընթաց է, որին համապատասխանելու հարցում հեռարձակող ընկերությունները կարող են լուրջ խնդիրներ ունենալ: Իսկ դրանով ևս կրկին կսահմանափակվեն տեղեկատվություն ստանալու և տարածելու հնարավորությունները: Նմանապես թանկարժեք գործընթացներն այլ երկրներում սուբսիդավորվել էին իրենց կառավարությունների կողմից:

2008թ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ընդունեց և պաշտպանեց Ա1+ հեռուստաընկերության բողոքը, որը 2002 թ. զրկվել էր իր հեռարձակման իրավունքից՝ այն հիմնավորմամբ, որ այդ քայլով սահմանափակվել էր Ա1+ -ի խոսքի ազատության իրավունքը: Հայաստանի կառավարությունը տուգանվեց 30 000 եվրոյով, ինչպես նաև ստացավ խիստ հանձնարարական, որպեսզի Ա1+ -ին հնարավորություն ընձեռվի ի վերջո ստանալ հեռարձակման ազգային ալիք:

Նոյեմբերի սկզբին կառավարությունը որոշեց ստեղծել լրատվամիջոցների և հանրային տեղեկատվության կենտրոն, որն ուսումնասիրությունններ կանցկացնի այդ բնագավառում, կպահովի մեդիական ինստիտուտների գործունեության թափանցիկությունը, տեղեկատվություն կհավաքի և կտարածի, կուսումնասիրի լրատվամիջոցների շուկան, կիրականացնի

## ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ծրագրային դիտարկումներ և եզրակացություն-ներ: Այդ կենտրոնի կառավարումն իրականաց-վելու է նախագահի աշխատակազմից: Լրատ-վամիջոցների ներկայացուցիչները երկյուղում են, որ այդ գործակալությունը փորձելու է սանձել անցանկալի լրատվամիջոցները և կարգուկանոն հաստատել մամուլի շուկայում և պայքարել դեղին մամուլի դեմ, ինչպես որ վարչապետն էր հորդորում լրագրողներին, որ իրենք հենց լուծեն իրենց խնդիրները:

*Բոլոր այդ՝ լինեն դրանք նախագահական, խորհրդարանական, թե տեղական ինքնակառավարման մարմինների, ընտրությունների արդյունքները ցույց են տալիս, որ մի կարևորագույն քաղաքական ինստիտուտ, որը պետք է լինեն կենսունակ քաղաքական կուսակցությունները, դեռևս չի կայացել և զարգացել:*

Մամուլի բևեռացման մասին արտահայտվող տեսակետներն էլ, իրենց հերթին, բևեռացված են: Քաղաքական շրջանակի երկու կողմում էլ գտնվող մամուլի բովանդակությունը տատան-վում է հակասականից մինչև վիրավորական: Լուրը և մեկնաբանությունը հստակորեն տարանջատված չեն միմյանցից: Մամուլի՝ որպես ամբողջություն, ինչպես նաև անհատ լրագրողների համար արդեն սովորական է դարձել այն, որ իրենք լարված քաղաքական մարտերի գործիք ու զենք են: Արդյունքում, որոշ լրագրողներ ենթարկվել են բանավոր հարձա-կումների և վիրավորանքների և նույնիսկ ֆիզիկական բռնության:

Մամուլի, հասարակական կազմակերպություն-ների և իշխանության գործադիր և օրենսդիր ճյուղերի գործողությունների և որոշումների արդյունավետությունը, օրինականությունը և իրավաչափությունը որոշելու նպատակով՝ դատական համակարգը պետք է գործի որպես թափանցիկ և կանխատեսելի ինստիտուտ:

Մինչև այս տարին արդեն իսկ դատական համակարգի հանդեպ վստահությունը շատ ցածր էր, իսկ անցած տարվա ընթացքում իրավիճակն էլ ավելի վատթարացավ: Տեղի ունեցան ընդդիմության ներկայացուցիչների մի քանի տասնյակ դատավարություններ, որոնք հաճախ պսակվեցին միայն ոստիկանների ցուցմունքների վրա հիմնված դատավճիռնե-րով. դա պարզապես հաստատում էր այն տեսակետը, որ դատարաններն անում են այն, ինչ իրենց հանձնարարում են իշխանություն-ները: Այդ ընթացակարգի շուրջ իրենց մտահո-գություններն են հայտնել ՀՀ ԱԺ մի շարք պատգամավորներ, ինչպես նաև ԵԽԽՎ՝ նշելով, որ Վճռաբեկ դատարանը կարող է ուսումնասիրել այդ ընթացակարգը և որոշել, թե որ պարագաներում է ոստիկանության ներկայացուցչի վկայությունը իրավաչափ գործ հարուցելու համար:

Պետք չէ բացառել, որ այդ իրավիճակը շտկելու համար կարող է նաև օգտագործվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ուր հայաստանցիները կարող են ներկայացնել այն գործերը, որոնք սպառել են Հայաստանի ազգային դատական բոլոր ընթացակարգերը:

Ընդդիմությունը խոստացել է մարտի 1-ի իրադարձությունների հետ կապված գործերով

## ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

և դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Ըստ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի, այդ դեպքում կրկին Հայաստանը ստանալու է իր համար շատ դատավճիռներ: Իրականում, այն գործը, որի մեջ ներգրավված են ընդդիմադիր շարժման յոթ առաջատար ներկայացուցիչների անունները, որոնց թվում է նաև Տեր-Պետրոսյանի նախընտրական շտաբի ղեկավար, ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Ալեքսանդր Արզումանյանը, ամենայն ուշադրությամբ ուսումնասիրվելու է ազգային և միջազգային մակարդակներում:

Այնուամենայնիվ, արդարադատության համակարգի արդյունավետությունը կախված է իրավապահ մարմիններում բանիմաց և ազնիվ մասնագետների ներկայությունից: Իսկ ներկայում, Գլխավոր դատախազն ու Ոստիկանության ուժերն ընկալվում են որպես կառավարության շարունակությունը: Հատկապես մարտի 1-ի դեպքերից հետո, հանրության ընկալմամբ ոստիկանությունն անհամաչափ ուժ է կիրառել՝ առանց որևէ իրավական հիմնավորման, իսկ Գլխավոր դատախազությունն էլ հետապնդում է ընդդիմության առաջնորդներին և ակտիվիստներին՝ նրանց ներկայացնելով արհեստական մեղադրանքներ, նրանց ձերբակալությունները իրականացնելով և առանձնահատուկ դաժանությամբ անցկացնելով այն դատաիրավական գործընթացը, որի ընթացքում նրանք կարող են ելքեր գտնել առկա իրավիճակից:

Կոռուպցիայի դեմ պայքարն ամբողջ իրավապահ համակարգի հիմնական մարտահրավերն է: Այս տարվա ընթացքում եղան մի շարք դեպքեր, երբ միջին կամ ստորին օղակի պաշտոնյաների դեմ գործեր հարուցվեցին: Ոստիկանապետը ևս փոփոխվեց, ինչպես նաև նշանակալից փոփոխություններ արձանագրվեցին մի շարք այլ կարևոր մարմիններում, օրինակ, ոչ այդքան ճկուն անձնագրերի և վիզաների վարչությունում, որի մատուցած ծառայությունները տեսանելի են յուրաքանչյուր քաղաքացու և ոչ քաղաքացու համար:

> *Քաղաքական շրջանակի երկու կողմում էլ գտնվող մամուլի բովանդակությունը տատանվում է հակասականից մինչև վիրավորական: Լուրը և մեկնաբանությունը հստակորեն տարանջատված չեն միմյանցից:*

Մի շարք բարեփոխումներ իրականացնելու հանրային փորձեր կատարվեցին նաև հարկային ու մաքսային վարչարարության բնագավառում: Նախագահը պարբերաբար հայտարարում էր, որ կոռուպցիան Հայաստանի թիվ մեկ խնդիրն է: Նա նաև հայտարարեց, որ անկոտրում պայքար է տանելու հարկերի վճարումից լայնատարած խուսափումների և կամայական հարկահավաքության դեմ: Հունիսի վերջին կառավարությունը հաստատեց մի լայնածավալ ծրագիր, որի նպատակն է բարելավել երկրի ընդհանուր գործարար միջավայրը, որը շատերի կարծիքով խոչընդոտում է արագ տնտեսական զարգացումը:

Մինչև 2008 թ. վերջը կառավարությունը նաև պատրաստվում է հրապարակել նոր հակակոռուպցիոն ռազմավարություն: Նախագահ Սարգսյանը, հուլիսի 3-ին հանդիպելով Հայաստանի Ազգային Անվտանգության Ծառայության ղեկավարության հետ, հայտարարեց, որ կառավարության նախորդ՝ 2003 թ. հակակոռուպցիոն ծրագիրը չհանգեցրեց

## ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ցանկալի արդյունքի, քանի որ դրա հիմնական շեշտը դրված էր օրենսդրական փոփոխությունների վրա: Նա նշեց, որ իրավիճակը չի փոխվի լրջորեն, քանի դեռ քիչ են այն պետական պաշտոնյաները, ում հանդեպ քրեական գործեր են հարուցվել և հաջողությամբ իրականացվել, նրանք աշխատանքից հեռացվել և պատժվել են: Հոկտեմբերին՝ խորհրդարանում ելույթ ունենալիս նա խոստացավ լրջագույն միջոցներ ձեռնարկել կոռուպցիայի դեմ: Շոշափելի արդյունքներ են արձանագրվել մաքսային ծառայությունում. ըստ առկա լուրերի, զգալիորեն պակասել են կաշառակերությունը, հովանավորչությունը և այլ արատավոր երևույթները:

Վերջապես, այլ ինստիտուտները, որոնք ևս պետք է ավելի արագ ու համաչափ զարգանան, ներառում են կրթության, սոցիալական ծառայությունների, մշակույթի և առողջապահության ոլորտները: Թեև 2009 թ. բյուջեն արտացոլում է այդ բնագավառներում ավելի համարձակ ներդրումների անհրաժեշտությունը, այդ ոլորտներից յուրաքանչյուրի ֆինանսավորումն աճել է 15 տոկոսով՝ նախորդ տարվա համեմատությամբ:

Բյուջեում բացակայում են հստակ ռազմավարությունները առ այն, թե ինչպես է կարելի ավելի արդյունավետ օգտագործել լրացուցիչ ֆինանսավորումն իրական փոփոխություններ և բարելավումներ կյանքի կոչելու համար: Նաև բացակայում է համագործակցությունը կառավարության և քաղաքացիական հասարակության միջև, որի միջոցով կարելի է որոշել՝ ինչպես օգտագործել սահմանափակ ռեսուրսները և ինչ ռազմավարություն ընդունել յուրաքանչյուր կարևոր ոլորտի համար: Չնայած այն փաստին, որ ամեն տարի ֆինանսավորման աճ է արձանագրվում, կարիքավոր խավերը չեն զգում իրենց վրա համապատասխան բարելավումներն այս կամ այն բնագավառում: Կամ հասարակությունն է անհամբեր՝ ակնկալելով առաջընթաց այն ոլորտներում, որտեղ շատ բան պետք է դեռ արվի, կամ իրականում գոյություն չունի դեպի ապագան միտված համակարգված ռազմավարական ծրագիր:

## 2009 թ. հեռանկար

- Թերվստահության և դժգոհության տրամադրությունները էլ ավելի են խորանալու տնտեսական անկանխատեսելիության պատճառով: Զայրույթը, որին փոխարինելու եկավ անտարբերությունը, լավագույն դեպքում կշարունակվի, իսկ վատագույն դեպքում նոր թափ կստանա, եթե երկխոսության և ներգրավվածության նոր ուղիներ չստեղծվեն:
- Կառավարությունը կշարունակի իր պաշտպանողական գործունեությունը, որպեսզի վերահսկի դժգոհության աղբյուրները և արտահայտությունները: Ընդդիմությունը կշարունակի դիմադրել և բողոքել կառավարության ներքին և միջազգային նախաձեռնությունների դեմ, բայց ոչ թե դրանց բուն բովանդակության, այլ իշխանությունների հանդեպ իրենց վերաբերմունքի պատճառով:
- Մարտի 1-ի իրադարձությունների անդրադարձները շարունակվելու են և իրենց գագաթնակետին կհասնեն, երբ լրանա դրանց մեկ տարին: Շարունակվող անորոշությունն այն հարցի շուրջ, թե ինչ է տեղի ունեցել և ինչպես, ինչպես նաև անկողմնակալ մոտեցման բացակայությունն այն մարդկանց հանդեպ, ում գործողությունները հանգեցրեցին այդ իրադար-

## ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ձություններից, կշարունակի կանխել հասարակության ապաքինումը: Մարտի 1-ն ուսումնասիրող հանձնաժողով(ներ)ի գործունեության արդյունքները կարող է(են) էլ ավելի բարդացնել և խորացնել ներքին հակադրությունն ու թշնամանքը:

- Տեր-Պետրոսյանական ընդդիմությունն այժմ ժամանակավորապես դադարեցրել է իր պաշտոնական զանգվածային միջոցառումները: Դրանք շարունակելու են տեղի ունենալ 2009 թ.: Նրանք հավանաբար կկարողանան պահպանել իրենց համախոհների ներգրավվածության մակարդակն ու խորությունը: Սակայն, միևնույն ժամանակ, ընդդիմությունը կարող է վտանգել այդ ամենը, եթե հաշվի չառնի իր կողմնակիցների մի զգալի հատվածի հուսահատությունը և դժգոհությունը:
- Սոցիալական անբավարարվածությունը կխորանա, եթե տնտեսական ճգնաժամի արձագանքները չներառեն հստակ ջանքեր՝ միտված տնտեսության հիմքերի առողջացմանը:
- Նոր ընտրությունները հավանական չեն, իսկ քաղաքական և մասնագիտական ընտրախավը կշարունակի մեկուսացված մնալ (ոմանք ստիպողաբար, այլք՝ իրենց անձնական որոշմամբ) որոշումներ կայացնելու գործընթացներից:
- Միջազգային կազմակերպությունները կշարունակեն ուսումնասիրել իրավիճակը և այն գնահատելու են բացասաբար՝ հաշվի առնելով ընդդիմության հիմնական առաջնորդների ձերբակալված լինելու, լրատվամիջոցների և հանրային ժողովների սահմանափակումների հանգամանքների շուրջ պարզաբանումների բացակայությունը:
- ԵԽԽՎ-ն ուսումնասիրելու է քաղաքական իրավիճակը հունվարին: Այն կառավարության առջև կդնի ավելի խիստ պահանջներ, և հնարավոր է, որ իրոք կասեցնի Հայաստանի քվեարկության իրավունքը, ինչպես և նախազգուշացրել է:

## Լուծումների տարբերակներ

- Իշխանությունների ազդեցությունից զերծ լրատվամիջոցների ազատ գործունեությունը թույլատրելու դեպքում տեղեկատվական դաշտը կդառնա ավելի վստահելի, իսկ չափազանցված և խեղաթյուրված տարբերությունները և բևեռացումը մարդկանց, խմբերի և գաղափարների միջև կսկսի նվազել:
- Այլընտրանքային քաղաքական ուժերի բնական զարգացման խափանումը դաշտը կբացի ամենածայրահեղական, հուսալքված և մաքսիմալիստ խմբերի համար:
- Նկատի ունենալով այն, որ Ազգային ժողովը չի ներկայացնում Հայաստանի քաղաքական շրջանակը, բայց և այնպես ընդունելով, որ նոր ընտրությունները կարող են ստեղծել նոր քաղաքական ցնցումներ ու անկայունություն, անհրաժեշտ է աշխատել քաղաքական կուսակցությունների հետ, որպեսզի մյուս ընտրություններում բոլորի համար ապահովվի առավելագույն հնարավոր մասնակցության հնարավորությունը՝ նույնիսկ տրամադ-

## ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

րելով նրանց հնարավորություն ռեսուրսներից օգտվելու, ընտրական օրենսգիրքը բարեփոխելու, ինչպես նաև դրանց հանրային վերահսկողության մեխանիզմներ ստեղծելու: Միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և կրթական հաստատություններին հետ աշխատանքի միջոցով անհրաժեշտ է սերմանել հանրության հնարավորինս լայն շրջանակներում իրենց ֆլեարկելու անկապտելի իրավունքի կարևորությունը:

- Գիտակցաբար և հրապարակավ սկսելով քաղաքական համակարգերի և իշխանությունների հանդեպ անվստահության և ինքնակառավարման ավանդույթի բացակայության խորհրդային ժառանգությանը հակազդելու դժվար աշխատանքը՝ Հայաստանի իշխանությունները և հասարակությունը կարող են շարունակել իրենց երկար ճանապարհը պետականությունն ամրապնդելու ուղղությամբ: Առողջ քաղաքական դաշտ ստեղծելու համար կատարվելիք աշխատանքն արդեն ուշացված է:
- Այդ ջանքերը կարող են հաջողությամբ պսակվել, եթե ուղեկցվեն քաղաքացիական հասարակության և դրա ինստիտուտների ամրապնդմամբ, այլ ոչ թե քաղաքական շահերի համար դրանք կլանելու ավանդույթով: Ուժեղ քաղաքացիական հասարակությունն ընդունակ է մարտել քաղաքական, ցանցերն ազդման և կամավոր կերպով մասնակցել իշխանություններից դուրս հավաքական հանրային կյանքին, որտեղ քաղաքացիների խմբեր են ձևավորվում գաղափարների, նպատակների և արժեքների շուրջ, և պատասխանատվություն ստանձնեն այն դժվար որոշումների հարցում, որ իշխանությունները պետք է ընդունեն առկա սահմանափակ տնտեսական և քաղաքական տարբերակներից:
- Քաղաքականություն իրականացնող և հասարակական կարծիք ձևավորող անձանց սոցիալական դիվիդենտներ քաղելու հնարավորություն է ընձեռված՝ խրախուսելով հանրային միջոցների ներդրումը ոչ միայն շինարարության, այլև հանրային ինստիտուտների կատարելագործման մեջ՝ առկա ծանր և խորացող տնտեսական ճգնաժամին ի պատասխան:
- Ներդրումները կրթության, առողջապահության և մշակույթի բնագավառներում կծառայեն տնտեսության խրախուսմանը և աղքատության նվազեցմանը, ինչպես նաև միևնույն ժամանակ կօժանդակեն սոցիալական կարգի ու հոգևոր և ֆիզիկական առողջության վերականգնման նպատակներին:
- Իշխանությունների և քաղաքացիների փոխադարձ շփումները փոխակերպելու ջանքերը, լինեն դրանք ազգային բյուջեի որոշումների, օրենսդրության ընդունման կամ կարգավորման վերաբերյալ, դրանց և հայցվորի, տիրոջ և սորողասի հարաբերություններից՝ դեպի մի քիչ, որը համատեղ հետազոտում, փաստարկում, քննարկում, բանավիճում և հիմնավորում է քաղաքականությունը, և դրանով ավելի հեշտ դարձնում կառավարության համար որոշումները կյանքի կոչելն ու իրականացնելը:

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

## Գլոբալ ճգնաժամի ազդեցությունը

Ամառվա վերջերին գլոբալ ֆինանսական ճգնաժամը հարված հասցրեց հայրենի տնտեսությանը: Մինչ համաշխարհային տնտեսության առաջատարները փնտրում են ճգնաժամի խորացումը կանխելու և համաշխարհային տնտեսությունը կրկին զարգացման հուն դնելու ճանապարհները, փոքր և անցումային փուլում գտնվող, կամ այդ փուլը նոր հաղթահարած տնտեսությունները թերևս պետք է քայլեր ձեռնարկեն առկա իրավիճակից նվազագույն կորուստով դուրս գալու և խոշոր տնտեսությունների սխալներից դասեր քաղելու համար:

Վերջին տարիներին անցումային փուլում գտնվող երկրների զարգացումը հիմնականում գնահատվել է աննախադեպ՝ տարեկան մոտ 7 տոկոս տնտեսական աճով, և առանձնացել է հարաբերական բարգավաճմամբ: Հայաստանի նման երկրներում արտասահմանից մասնավոր փոխանցումների մեծ ծավալները փոխարինեցին սկզբնական շրջանում օտարերկրյա ուղղակի ներդրումների թույլ հոսքը: Այդպիսով այդ փոխանցումները ապահովեցին և պահպանեցին կայուն ներքին պահանջարկը: Ժամանակի ընթացքում ֆիսկալ կարգապահությունը և բանկային հատվածի վերակառուցումն ու բարեփոխումները հնարավոր դարձրեցին փոխառությունների հետ կապված գործողությունների աճը և նպաստեցին ֆինանսական հաստատությունների նկատմամբ վստահության բարձրացմանը:

Գլոբալ ճգնաժամը կդանդաղեցնի անցումային, կամ այդ փուլը նոր հաղթահարած տնտեսությունների՝ այդ թվում և Հայաստանի տնտեսության զարգացումը: Առկա գլոբալ ճգնաժամը ցույց կտա, թե արդյոք հարաբերական բարգավաճման վերջին ժամանակաշրջանը բավարար չափով է օգտագործվել անհրաժեշտ բարեփոխումներն իրականացնելու, արտադրողականությունը և մրցունակությունը բարձրացնելու համար:

*Առկա գլոբալ ճգնաժամը ցույց կտա, թե արդյոք հարաբերական բարգավաճման վերջին ժամանակաշրջանը բավարար չափով է օգտագործվել անհրաժեշտ բարեփոխումներն իրականացնելու, արտադրողականությունը և մրցունակությունը բարձրացնելու համար:*

Միևնույն ժամանակ, կարծես թե ճգնաժամը ընձեռում է նախատեսվող օրակարգային միջոցառումները վերանայելու, ազատ շուկայի հիմունքների և շուկայական արժեքների մասով հանձնառությունները վերահաստատելու և ողջամիտ (և իրագործելի) բարեփոխումների իրականացումն արագացնելու հնարավորություն:

Եթե սկզբնական շրջանում Հայաստանի կառավարությունը չէր բարձրաձայնում ճգնաժամի ազդեցությունը, ապա այժմ այն փորձում է հստակորեն գնահատել և նվազագույնի հասցնել դրա հետևանքները Հայաստանի

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

համար: Կառավարությունը հայտարարում է, որ պատրաստ է ճգնաժամին դիմակայելուն և ունի դրա համար անհրաժեշտ գործիքակազմ:

Անշուշտ, մի շարք առանցքային ռիսկային գործոններ Հայաստանը լրջորեն խոցելի են դարձնում միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում.

- Ռուսաստանից և ԱՄՆ-ից զգալի փոխանցումների և այլ տրանսֆերտների պակասելը, որտեղ ճգնաժամն արդեն բազմաթիվ կորուստներ է պատճառել ֆինանսական հաստատություններին, անշարժ գույքի շուկաներին, արտադրությանն ու արտահանմանը, և հատկապես կապիտալ շինարարության ոլորտին:
- շինարարության, անշարժ գույքի, արդյունաբերության, բանկային և ծառայությունների ոլորտներում Ռուսաստանյան ներդրումներից առանձնահատուկ կախվածությունը, գերազանցապես արտասահմանից ֆինանսավորվող շինարարության ոլորտի մեծ կշիռը, որը կազմում է ՀՆԱ-ի 28 տոկոսը,
- հայկական դրամի արժևորումը,
- Զգալի մասով ոչ ազնիվ մետաղների և հանքանյութի վրա հենված արտահանման կառուցվածքը, որն այդ հումքի միջազգային գնի թանկացման շնորհիվ անցած տասը տարիներին տնտեսության համար ապահովում էր զգալի եկամուտներ և շահույթ, սակայն այժմ համաշխարհային շուկայում գնանկման պատճառով հասել է ընդհուպ եկամտի և աշխատատեղերի կրճատման :
- տնտեսությունում կրկնակի դեֆիցիտի տևականությունը՝ վճարային հաշվեկշռի և բյուջետային բնագավառներում,
- ֆինանսական միջնորդների թուլությունը, որը նվազեցնում է լիկվիդայնությունը և, հետևաբար, նաև նվազեցնում է տնտեսության իրական հատվածի խթանումը, ներդրումները և ծախսը,
- ՀՆԱ-ի համեմատությամբ ավանդների ցածր տևական կշիռը (մոտ 14 տոկոս. համեմատության համար նշենք, որ այլ անցումային երկրներում այն կազմում է 25, իսկ զարգացած տնտեսությունների պայմաններում՝ 50 տոկոս),
- արդար մրցակցության համար թերի պայմանները, բյուրոկրատական քաշքշուկի հարատևումը և հարկային բարեփոխումների անբավարարությունը,
- Սփյուռքի ռեսուրսները ներգրավելու ուղղությամբ նախաձեռնող, հստակ, հետևողական մոտեցման բացակայությունը:

Հայաստանի տնտեսության համար վերջին ամիսներին արձանագրվել են մի շարք բացասական զարգացումներ, որոնց հանդեպ բավարար ուշադրության բացակայությունը

կարող է ունենալ թե միջնաժամկետ, թե երկարաժամկետ հետևանքներ.

- սեպտեմբեր ամսվա համեմատ հոկտեմբերին տնտեսական աճի կրճատումը 8.3 տոկոսով,
- որոշ հանքերի շահագործման ժամանակավոր դադարեցումը և աշխատավորների բողոքի ելույթները, որոնք հաջորդեցին հանքանյութերի և հատկապես՝ պղնձի միջազգային գների անսպասելի անկմանը,
- փոխանցումների և տրանսֆերտների նվազման միտումը, որի արդյունքում կնվազի գնողունակությունը՝ հանգեցնելով ներքին պահանջարկի անկմանը,
- անշարժ գույքի գործարքների կտրուկ անկումը, որի արդյունքում, ըստ որոշ փորձագիտական տվյալների, գույքի արժեքն ընկել է 10-20 տոկոսով,
- սեպտեմբեր ամսվա համեմատ հոկտեմբերին շինարարության ոլորտի աճի անկումը 41 տոկոսով,
- համընդհանուր զգուշավորությունը բանկային ոլորտում, որը դրսևորվում է վարկերի տոկոսադրույքների աճի, ինչպես նաև ձեռնարկատիրական ու մասնավոր վարկեր ստանալու համար ավելի խիստ պայմաններ սահմանելու տեսքով,
- հայկական դրամի պաշտպանվածության արդյունքում տարադրամի պահուստների արագ կրճատումը,
- 2009 թ. հետագա զբաղվածության անորոշության պատճառով արտագնա աշխատողների վաղաժամկետ վերադարձը:

## Հայաստանի տնտեսության պատկերը

Գլոբալ ճգնաժամի հետևանքով Հայաստանի խոցելիության և դրանից բխող հնարավորությունների մասին պետք է պատկերացում կազմել վերջին 15 տարիների Հայաստանի տնտեսական աճի համատեքստում:

*Գլոբալ ճգնաժամի հետևանքով Հայաստանի խոցելիության և դրանից բխող հնարավորությունների մասին պետք է պատկերացում կազմել վերջին 15 տարիների Հայաստանի տնտեսական աճի համատեքստում:*

Հայաստանի տնտեսությունը փլուզվեց 1991 թ. Խորհրդային Միության փլուզումից հետո՝ 1993 թվականին հասնելով ամենացածր մակարդակին, մինչև դանդաղ վերականգնման փուլ մտնելը: Վերջին տասնամյակի երկնիշ տնտեսական աճը ձևավորվել է երեք հենասյուների վրա. կայուն և հետևողական մակրոտնտեսական քաղաքականությունը, առաջին սերնդի կառուցվածքային բարեփոխումների հաստատուն իրականացումը, այդ թվում՝ ազատ գնագոյացումը, հայկական արժույթի փոխարկելիությունը, ազատականացված առևտուրը և

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ներդրումները, մեծամասամբ սեփականաշնորհման խրախուսումը, և վերջապես՝ ապավինումը մեծածավալ արտաքին օգնությանը, ներդրումներին և փոխանցումներին:

2008թ. նորընտիր նախագահը և նոր ձևավորված կառավարությունը խոստացան պահպանել մակրոտնտեսական կայունությունը՝ ցածր սղաճը և պակասուրդը, և առաջ շարժվել դեպի առավել բարդ՝ երկրորդ սերնդի բարեփոխումները: Դրանք ենթադրում են արդարացի և արդյունավետ կառավարում, մրցակցային քաղաքականություն, հակակոռուպցիոն ջանքեր, ֆինանսական և կապիտալի շուկաների զարգացում, ինչպես նաև՝ նորարարական և գիտելիքների վրա հիմնված տնտեսության հիմքի ձևավորում: Բարեփոխումների այս մակարդակի համար պահանջվում է նաև Հայաստանի տնտեսության առավել ընդգրկուն ինտեգրում համաշխարհային տնտեսությանը:

Մյուս դժվարությունը՝ երկրորդ սերնդի բարեփոխումների խնդիրն է: Դրանք անհրաժեշտ են յուրաքանչյուր անցումային երկրի համար, սակայն պետք է տարբերվեն միմյանցից՝ ելնելով տեղական պայմաններից: Ամեն երկրին բնորոշ են իրեն հատուկ մարտահրավերներ և նույնչափ հատուկ խցանումներ: Բարեփոխումները հաջողությամբ պսակելու համար անհրաժեշտ է վերացնել այդ երկրին բնորոշ խցանումները: Հայաստանի պարագայում այդ խցանումը ստեղծում են կոռուպցիան և մրցակցության բացակայությունը: Այդ երկու խնդիրներին լուծում տալը դժվար է իշխանության ու բիզնեսի սերտաճման պատճառով: Սակայն ներկայիս ճգնաժամի պայմաններում այդ խցանումներն անհրաժեշտ է վերացնել և դրանով ճանապարհ հարթել արդար մրցակցային միջավայրի, ներդրողների համար բարենպաստ պայմանների և կառավարության միջամտության կրճատում ապահովելու ուղղությամբ բարեփոխումների համար: Սակայն, նման արագ և կտրուկ քայլերը, գոնե կարճաժամկետ կտրվածքով, անխուսափելիորեն առաջացնելու են խոշոր տնտեսվարող սուբյեկտների դժգոհությունը, ինչպես նաև հանգեցնելու են բարդությունների և դանդաղեցման այն պարագայում, երբ անհրաժեշտ է շատ ավելի աշխույժ տնտեսական գործունեություն:

Այսպիսով, կառավարությունը սպիտված է ճգնաժամի պայմաններում անդրադառնալ տնտեսական անբավարարության պատճառներին՝ առանց սահմանափակող գործոնները վերացնելու հնարավորության: Այդ գործոններն են զբաղվածության ցածր մակարդակի և դանդաղ ստեղծվող աշխատատեղերի պայմաններում աղքատ սերունդը, անկայուն զարգացումը, մարզերի անհավասարաչափ աճը, թույլ կառավարումը, խոր արմատավորված կոռուպցիան, եկամուտների անհամաչափությունը և թերֆինանսավորված ու չարձագանքող հանրային հատվածը:

2008 թ. առաջին հնգ ամիսների ընթացքում Հայաստանի տնտեսական կատարողականը մոտ էր վերջին մի քանի տարիների բարձր տնտեսական աճի տեմպերին: Միջազգային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունները չէին արտացոլվում հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա մինչև հոկտեմբեր ամիսը, երբ սկսեցին երևան գալ ճգնաժամի առաջին նշանները: Ազդեցությունները չափելի կդառնան 2009թ. սկզբներին, երբ նվազող մասնավոր տրանսֆերտները (Ռուսաստանից և ԱՄՆ-ից) և արտահանման թուլացող հնարավորությունները կսկսեն ծանր հարված հասցնել:

Իրական ՀՆԱ-ի աճը հունվարից սեպտեմբեր

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ժամանակահատվածում 10.4 տոկոս էր, այսինքն՝ 3 տոկոսով ցածր 2007 թ. նույն ժամանակահատվածի 13.5 տոկոսի համեմատ: Տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժերը շարունակեցին մնալ շինարարությունը և ծառայությունները՝ մանրածախ առևտուրը, հյուրանոցները և ռեստորանները, հեռահաղորդակցությունը, անշարժ գույքի և ֆինանսական միջնորդության հետ կապված գործունեության տեսակները: Աճի բարձր տեմպեր են գրանցվել նաև հանքարդյունաբերության, մանրածախ առևտրի, սննդի վերամշակման, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների և ֆինանսական միջնորդության ոլորտներում: Այնուամենայնիվ, Հայաստանի տնտեսությունում ամենանշանակալիցը շարունակում է մնալ շինարարության ոլորտը, որին բաժին է ընկնում ՀՆԱ-ի 28.4 տոկոսը՝ գերազանցելով արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտները:

Արտաքին գործոնների ճնշման տակ գնային կայունությունը 2007 թվականի սկզբներին սկսեց տատանվել, իսկ 2008 թ. գները շարունակեցին աճել: Գնային կայունությունը եղել է Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության հիմնական սկզբունքը: Նախկինում Կենտրոնական բանկին հաջողվում էր հավասարակշռել արտաքին ինֆլյացիոն ճնշումները, այդպիսով նպաստելով ազգային արժույթի արժևորմանը: ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի հզոր տեղաշարժը 2008 թ. շտկվեց, և ամբողջ տարվա ընթացքում փոխարժեքը զգալի փոփոխություններ չկրեց:

2008 թ. ընթացքում գրանցված ինֆլյացիայի աճը (9.7 տոկոս) բացատրվեց արտաքին գործոններով, ինչպիսիք են՝ պարենների գների բարձրացումը, և այդ իսկ պատճառով ակնկալվում էր այդ գների անկում՝ պարենների, սննդի և վառելիքի միջազգային գների նվազեցմանը զուգընթաց: Սակայն Հայաստանի որոշակի պարենային շուկաներում մենաշնորհը, հատկապես՝ ներմուծման մասով, սահմանափակում է մրցակցությունը, այդպիսով թույլ տալով գնային ճկունությունը և զգալիորեն նվազեցնելով միջազգային շուկաների գնանկման ազդեցությունները: Հետևաբար, 2008թ. վերջին սպասվում է ինֆլյացիայի կայունացում մոտ 7-8 տոկոսի չափով:

*Ազդեցությունները չափելի կդառնան 2009թ. սկզբներին, երբ նվազող մասնավոր տրանսֆերտները (Ռուսաստանից և ԱՄՆ-ից) և արտահանման թուլացող հնարավորությունները կսկսեն ծանր հարված հասցնել:*

Ակնկալվում է, որ հարկային և մաքսային գերատեսչությունների (որոնք միավորվեցին՝ կազմելով Հայաստանի պետական եկամուտների կոմիտե) վերակառուցումը և որոշակի բարեփոխումների ներմուծումը կբարելավեն դրանց գործառնությունները և կապահովեն եկամտային մասով կայուն կատարողական: Բյուջետային եկամուտները պայմանավորում են ՀՆԱ-ի 21,1 տոկոսը և ծրագրավորված հարկային եկամուտների 100,2 տոկոսը տարվա առաջին ինն ամիսների համար: Կապված կառավարության կրճատված ծախսերի հետ, որ

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

կազմում է ծրագրավորված մակարդակի 90,2 տոկոսը, արդյունքում սպացվեց ՀՆԱ-ի 0,4 տոկոսի հավելուրդ: Բյուջետային եկամտուտնե-րի մեծ բաժինը (41 տոկոս) ստացվեց ավելաց-ված արժեքի հարկից: Սակայն ուղղակի հարկերի (ինչպիսիք են` կորպորատիվ հարկերը) տեսակարար կշիռը զգալիորեն աճեց` 2008թ. առաջին ինն ամիսներին հասնելով 12 տոկոսի: Այդուհանդերձ, Հայաստանի տնտեսու-թյան համար պատկանշական է, որ չնայած տևական երկնիշ աճին, ղեկավան եկամուտնե-րի առումով չափազանց քիչ է ուղղակի հարկե-րի` եկամտահարկի և շահութահարկի տեսակա-րար կշիռը, փոխարենը մեծ է անուղղակի հարկերի` ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի ծավալը:

Արտաքին պարտքի չափավոր աճը չազդեց Հայաստանի` որպես փոքր պարտքային բեռ ունեցող երկրի կարգավիճակի վրա: 2008 թ. հուլիս ամսվա դրությամբ պարտքը կազմեց 3.1 միլիարդ դոլար, որը 7 տոկոսով բարձր է 2007 թվականի համեմատ: Այդ գումարի միայն կեսն է բաժին ընկնում կառավարական և դրամավարկային մարմիններին (համապա-տասխանաբար` 1.36 մլրդ. ԱՄՆ դոլար և 196 մլն. դոլար), իսկ պարտքի մնացած մասը գոյացել է բանկային և մասնավոր հատված-ներից: Կառավարության պարտքը կազմված է հիմնականում մուլտիլատերալ ֆինանսական հաստատություններից ստացված երկարաժամ-կետ արտոնյալ վարկերից, որոնք երկիրը պաշտ-պանում են զգալի իրացվելիության ռիսկից: Զուտ պարտքին բաժին է ընկնում ընդամենը 1,1 մլրդ. ԱՄՆ դոլարը: Կենտրոնական բանկի արտաքին ակտիվները կազմում են 1,5 մլրդ. ԱՄՆ դոլար: Մնացած 0.5 մլրդ. ԱՄՆ դոլարը պատկանում են կառավարությանը և մասնա-վոր հատվածին:

Արտաքին առևտուրը շարունակեց ընդլայնվել արտահանման համեմատ ներմուծման զգալի գերակշռությամբ, այդպիսով մեծացնելով առևտրային պակասուրդը: Առաջին ինն ամիսներին արտաքին առևտրային պակասուրդը կրկնապատկվեց 2007թ. նույն ժամանակա-հատվածի համեմատ` հասնելով 2,3 մլրդ. ԱՄՆ դոլարի ռեկորդային մակարդակին: Առաջին եռամսյակում գրանցված աննշան աճից հետո արտահանումը գրանցեց ընդամե-նը 0.4 տոկոսի աճ այն դեպքում, երբ ներմու-ծումն զգալիորեն աճեց ` կազմելով 43 տոկոս: Այս միտումը հետևանք էր ավելացված մաքուր եկամտի, արտադրական կարողությունների բարելավմանն ուղղված կապիտալ ծախսերի և ուժեղացված դրամի: Ակնկալվում է, որ արտահանման կատարողականը կշարունակի վատթարանալ կարճաժամկետ հեռանկարում` պայմանավորված ապրանքների և հատկապես ոչ ազնիվ մետաղների միջազգային գների կտրուկ անկմամբ: Քանի որ Հայաստանի արտահանումը մեծապես հիմնված է ռեսուրս-ների վրա, ապա այն զգալի վտանգ է ներկա-յացնում երկրի արտահանման կատարողականի համար: Արտադրանքի ամենամեծ խումբ ներկայացնող ոչ թանկարժեք մետաղները, որոնք կազմում են ընդհանուր արտահանման 35 տոկոսը, զգալիորեն աճեցին 2007թ (մոտ 40 տոկոսով), սակայն այդ աճը չնչին էր (+1.1 տոկոս) 2008թ. առաջին ինն ամիսների ընթացքում: Իսկ երկրորդ ամենամեծ խումբը կազմող թանկարժեք մետաղների և թանկար-ժեք քարերի արտահանումը շարունակում է զգալիորեն նվազել (-13 տոկոս): Ինչ վերաբե-րում է գյուղատնտեսությանը և սննդամթերքի վերամշակման արդյունաբերությանը, ապա այն արտահանման աճի մասով գրանցեց բարձր` ավելի քան 30 տոկոսի կա-տարողական:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի արտաքին առևտրի 70 տոկոսը կատարվում է Եվրոպայի, Ասիայի և Հյուսիսային և Հարավային Ամերիկաների հետ: Հայաստանի ամենամեծ առևտրային անհատական գործընկերը Ռուսաստանն է, որին բաժին է ընկնում առևտրի 19 տոկոսը՝ հիմնականում էներգետիկ ռեսուրսների մասով: Ռուսաստանն առաջին տեղն է նաև որպես արտահանման հասցեատեր երկիր և հանդիսանում է հայկական սննդամթերքի և խմիչքների արդյունաբերության հիմնական շուկան:

Տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժ հանդիսացող արտասահմանից ստացվող մասնավոր տրանսֆերտներն աճեցին տարվա առաջին ինն ամիսների ընթացքում: Այնուամենայնիվ, ակնկալվում է այս միտման շրջադարձում՝ պայմանավորված համընդհանուր իրադարձությամբ: Համաձայն Կենտրոնական բանկի տվյալների, մասնավոր տրանսֆերտների իրական քանակը զգալիորեն գերազանցում է բանկերի միջոցով ուղղորդվող գումարներին: Այդուհանդերձ, ամեն տարի փաստացի և պաշտոնական թվերի տարբերությունները շարունակում են նվազել: Այս տարի ևս ընդհանուր գումարի մասով գրանցվեց 33 տոկոսի զգալի աճ՝ հասնելով 1.205 մլրդ. ԱՄՆ դոլարի, պայմանավորված Ռուսաստանից ստացվող տրանսֆերտների աճով, որոնք կազմում են ընդհանուր տրանսֆերտների 83 տոկոսը: Հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներն արդեն իսկ ցույց են տալիս ԱՄՆ-ից ստացվող ֆինանսական միջոցների շատ փոքր կրճատում՝ 2007 թ. նույն ժամանակահատվածի համեմատ:

Օտարերկրյա ներդրումների մեծ ծավալները մեծապես հիմնավորվում են հատկապես Ռուսաստանի ներդրողների կողմից իրականացվող ընթացիկ ծրագրերով: Հայաստանի իրական հատվածում կատարվող օտարերկրյա ներդրումները (բացառությամբ հանրային և բանկային հատվածներում կատարվող ներդրումների) գրանցեցին նկատելի 65 տոկոսի աճ՝ հասնելով 515 մլն. ԱՄՆ դոլարի: Օտարերկրյա ուղղակի ներդրումները, որոնք կազմում են օտարերկրյա ընդհանուր ներդրումների 70 տոկոսը (այդ թվում՝ պորտֆելների ներդրումները և միջֆիրմային վարկերը) նույն պատկերն ունեին: Ամենամեծ տեսակարար կշիռը՝ ավելի քան 40 տոկոս, ինչպես և նախկինում, բաժին ընկավ ենթակառուցվածքներին, մասնավորապես՝ էներգիայի ստացման և բաշխման ոլորտներին, ներառյալ՝ բնական գազը:

Հեռահաղորդակցության ոլորտը գրավեց ներդրումների մյուս զգալի բաժնեմասը՝ կազմելով մոտ 27 տոկոս: Մնացածը բաշխվեց հանքարդյունահանման և մետաղների վերամշակման, ինչպես նաև՝ սննդամթերքի վերամշակման, ավիացիայի, անշարժ գույքի, տեղեկատվական տեխնոլոգիաների և զբոսաշրջության միջև:

Ենթակառուցվածքների և հեռահաղորդակցության ոլորտներում վերջին մեծ ձեռքբերումների արդյունքում Ռուսաստանը միանշանակորեն դարձել է առաջատար Հայաստանի տնտեսությունում օտարերկրյա ներդրումներ կատարելու գործում: 2008թ. առաջին կեսին բոլոր օտարերկրյա ներդրումների 75 տոկոսը ստացվել է Ռուսաստանից՝ գրանցելով 3.2-պատիկ աճ 2007թ. առաջին կիսամյակի համեմատ: Զգալի ներդրումային տեսակարար կշիռ ունեցող մյուս երկրներն են Լիբանանը, ԱՄՆ-ը, Արգենտինան, Ֆրանսիան և Գերմանիան: 2008թ. միակ ամենամեծ օտարերկրյա ներդրման փաստը Ֆրանս Թելեկոմին տրված արտոնագիրն է՝ Հայաստանում որպես բջջային կապի երրորդ օպերատոր գործելու համար:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի տնտեսական ցուցանիշները տարեց տարի հետնողականորեն աճում էին, բայց ելնելով հենց դրանից, փորձագետները կանխատեսում էին, որ գնալով դժվարանալու է աճի այդ մակարդակի պահպանումը: Ինչպես նախկինում, մեկնարկելով ծայրահեղ ցածր կետից սկզբնական աճը տպավորիչ է: Այնուհանդերձ, երկնիշ աճի պահպանումը մարտահրավեր կլիներ, նույնիսկ եթե չլիներ գլոբալ ճգնաժամը: Տարվա երկրորդ կեսին հիմնականում բոլոր հատվածներն արդեն իսկ զգում էին ճգնաժամի ազդեցությունը:

*Ենթակառուցվածքների և հեռահաղորդակցության ոլորտներում վերջին մեծ ձեռքբերումների արդյունքում Ռուսաստանը միանշանակորեն դարձել է առաջատար Հայաստանի տնտեսությունում օտարերկրյա ներդրումներ առումով:*

Գյուղատնտեսական հատվածի կատարողականը չափավոր էր. 2008թ. առաջին ինն ամիսներին այն գրանցեց 4.3 տոկոսի աճ: Դրան նպաստեցին բարենպաստ եղանակային պայմանները: Սակայն, ֆերմաների չափերը (որոնք հիմնականում փոքր են) և բարոյապես մաշված տեխնիկան սահմանափակում են արտադրողականության աճի պոտենցիալը: Անասնաբուծության ոլորտում արտադրությունն աճեց համեմատաբար դանդաղ՝ ընդամենը 2.9 տոկոսով, մասամբ պայմանավորված խոզերի գլխաքանակի կրճատմամբ, որը 2007 թ. խոզի ժանտախտի բռնկման հետևանք էր: Թռչնաբուծությունը և ձվի արտադրությունն ամենաառաջատար ենթաոլորտներն են՝ պայմանավորված լուրջ տեխնոլոգիական ներդրումներով:

Համաձայն Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցության ընթացքում Հայաստանի ստանձնած պարտավորությունների՝ սկսած 2009 թվականից ԱԱՀ է գանձվելու գյուղատնտեսական ապրանքներից: Մինչև այժմ դրանք ազատված էին ԱԱՀ-ից: Գյուղատնտեսական բիզնեսով զբաղվողներից շատերի կարծիքով, այն զգալիորեն կբարդացնի զարգացման հեռանկարները: Կառավարությունը քննարկում է աջակցող գործիքների ներմուծման հարցը, ինչպիսիք են՝ սուբսիդիաները կամ հարկերի ցածր դրույքաչափերը:

Հայաստանի տնտեսությունում տեղ գտած կառուցվածքային փոփոխությունները զգալիորեն նվազեցրել են արդյունաբերության դերը, որի տեսակարար կշիռը 2008թ. սեպտեմբերի դրությամբ կայուն կերպով նվազել է՝ կազմելով ընդամենը 13.8 տոկոս: Արդյունաբերական արտադրանքը հիմնականում կենտրոնացված է մի քանի արդյունաբերական ճյուղերում. հանքարդյունաբերություն և քարհանքերի շահագործում, էներգիայի ստացում և բաշխում, սնունդ և խմիչքներ, մետաղյա և ոչ մետաղյա ապրանքների արտադրություն: Չնայած ներկայացվող մեծամասշտաբ ներդրումների, հանքարդյունաբերությունը լճացում է ապրել դեռևս մինչև աշնան ընկած ժամանակահատվածում՝ ոչ թանկարժեք մետաղների միջազգային գների անկման արդյունքում: Հիմնական արտադրական ենթաոլորտները (սնունդ և խմիչք, մետաղյա և ոչ մետաղյա հանքային ապրանքների արտադրություն), որոնք միասին վերցրած կազմում են

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ընդհանուր արդյունաբերական արտադրանքի գրեթե 80 տոկոսը, գրանցել են բավականին համեստ՝ 1.5 տոկոսի աճ: Հայաստանում ծաղկող շինարարական ոլորտի պահանջների բավարարմամբ պայմանավորված շինանյութերի արդյունաբերության կայուն աճի տեմպերը զգալիորեն կնվազեն:

Ադամանդի վերամշակման և ոսկերչական արտադրանքի ոլորտներում շարունակվեց 15.8 տոկոսի զգալի անկումը: Ֆինանսական ճգնաժամով պայմանավորված՝ սպասվում է, որ այս անկումը կշարունակվի: Տեքստիլ, քիմիական, կաշվի ու փայտի վերամշակման և մեքենաշինության ենթաոլորտների արտադրանքը նույնպես կրճատվեց:

Հաջորդ տարի, երբ Ռուսաստանը վերացնի բնական գազի համար վճարվող սուբսիդավորված գինը, արդյունաբերությունը կկանգնի լուրջ մարտահրավերների առաջ: Սկսած 2009թ. ապրիլի 1-ից Հայաստանը գազը կգնի 1000 խոր. մետրի դիմաց վճարելով 154 ԱՄՆ դոլար՝ ներկայիս 110 ԱՄՆ դոլարի փոխարեն, որը կշարունակի աճել՝ 2010թ. հասնելով 200 ԱՄՆ դոլարի:

Տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժ հանդիսացող շինարարության ոլորտը մոտ է պարապուրդի վիճակին: Բնակարանային շինարարության ծրագրերի ֆինանսավորումը թուլանում է: Անշարժ գույքի շինարարությամբ զբաղվողների առաջ կանգնած են նոր ընթացիկ ծրագրերի ֆինանսական պրոբլեմները, իսկ մի շարք նոր բնակարանաշինական ծրագրերի թիվը մոտենում է զրոյի: Անշարժ գույքի գործակալությունների տվյալներով նոր բնակտարածքների պահանջարկը նվազել է՝ պայմանավորված հետընտրական միջադեպերով և միջազգային տնտեսական անկմամբ:

Բացի այդ, Սփյուռքի հայերը, որոնք նույնպես իրենց ներդրումն ունեին անշարժ գույքի շուկայում, ավելի քիչ են պատրաստ կամ ունակ վճարելու զգալի գումարներով երկրորդ տուն գնելու համար:

*Սփյուռքի հայերը, որոնք նույնպես իրենց ներդրումն ունեին անշարժ գույքի շուկայում, ավելի քիչ են պատրաստ կամ ունակ վճարելու զգալի գումարներով երկրորդ տուն գնելու համար:*

Այն, ինչ համարվում է երկրում ավելի ծավալուն ենթակառուցվածքային բարելավումների և վերակառուցման հեռանկարային ուղի, նույնպես կենթարկվի բացասական ներգործության: Քըրք Քըրքորյանի Լինսի հիմնադրամը վերջին 10 տարիների ընթացքում ներդրեց մոտ 300 միլիոն ԱՄՆ դոլար, սակայն այս ծրագրի ապագան այժմ անորոշ է, քանի որ նոր նախաձեռնությունների մասով որևէ նոր հայտարարություն չի արվել: Թեև ենթակառուցվածքային հիմնական ծրագրերը կլինեն Ասիական զարգացման բանկի և Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի կողմից ֆինանսավորվող ծրագրերը. այդ կազմակերպությունները վերջին երկու տարիների ընթացքում կատարել են համակողմանի նախագծում, սակայն դեռևս չեն սկսել որևէ նշանակալի շինարարություն:

Վերջապես, ծառայությունների հատվածը, որն ամենաարագ աճ գրանցող հատվածներից է, նույնպես անկում է ապրում: 2008 թ. առաջին ինն ամիսներին այդ հատվածի աճը 14.5

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

տոկոս էր՝ նախորդ տարվա 17 տոկոսի համեմատ: Մասնավոր ոլորտին տնտեսությունններին առևտրային բանկերի կողմից տրվող փոխառությունների զգալի ընդլայնումը (36 տոկոս 2008թ. առաջին ինն ամիսների ընթացքում) ընդունել է հիփոթեքի և սպառողական վարկերի տեսք, որոնք կազմում են բանկերի վարկային պորտֆելների ավելի քան կեսը:

*Ոլորտ ազգային ծրագրերի թիրախային ոլորտներ կառավարությունն առանձնացրել է զբոսաշրջությունը, առողջապահությունը, կրթությունը, բիզնես միջավայրը և ֆինանսական հատվածը: Այնուամենայնիվ, այս ծրագրերի համար նախատեսվող առանձին մեխանիզմները, ինչպես նաև ռեսուրսային պարտավորությունները դեռևս բավականին անհստակ են:*

2008 թ. սեպտեմբերին միջին ամսական աշխատավարձը հասավ 300 ԱՄՆ դոլարի, սակայն տարբեր ոլորտներում դիտվում են զգալի տատանումներ. ֆինանսական ծառայությունների հատվածն առաջարկում է ամենաբարձր, իսկ գյուղատնտեսականը՝ ամենացածր աշխատավարձերը:

Զուտ մաքուր եկամտի աճը (21 տոկոսով) և սպառողական վարկերի ընդլայնումը նպաստեցին մանրածախ առևտրային շրջանառության հետագա աճին: Սակայն միջազգային վարկային ճգնաժամի հետևանքով Հայաստանի բանկերն արագ տեմպերով ավելացրեցին տոկոսադրույքները և դադարեցին ընթացք տալ մեծ վարկերի մասով դիմումներին, ու դա արվում էր ոչ թե սահմանափակ իրացվելիության պատճառով, այլ՝ ելնելով ծայրահեղ զգուշավորությունից:

Կառավարության կողմից զբոսաշրջության՝ որպես տնտեսության առաջնային հատվածի զարգացման նախաձեռնությունները հանգեցրին հյուրանոցային և ռեստորանային բիզնեսի զարգացմանը: 2008թ առաջին կեսին ավելի քան 200000 օտարերկրյա զբոսաշրջիկներ այցելեցին Հայաստան, որը 13 տոկոսով ավելի էր 2007 թ. առաջին կեսի նույն ցուցանիշից: Կառավարության ծրագրի համաձայն՝ Դիլիջանում, Ծաղկաձորում և Ջերմուկում իրականացվող ընթացիկ ծրագրերը կնպաստեն ընդլայնել զբոսաշրջության հետ կապված առաջարկները և կբարելավեն առկա կառույցները, այդպիսով՝ հզորացնելով Հայաստանի դիրքը որպես զբոսաշրջային վայր: Պետական-մասնավոր գործընկերությունը, որի արդյունքում հաջողություն գրանցվեց Ծաղկաձորի զարգացման գործում (ձմռանը՝ դահուկային սպորտաձև, իսկ ամռանը՝ անտառային միջավայրով հանգստավայր) կկրկնվի Ջերմուկում, որը Էկոնոմիկայի նախարարության կողմից պաստասվում է ներկայացվել որպես սպահանգստավայր: Կառավարության պարտավորությունները Ջերմուկի շրջանում կազմում են մոտ 100 մլն ԱՄՆ դոլար:

## Տնտեսական քաղաքականություն

Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ) նոր ընդունված վերանայված տարբերակը, որը կոչվում է Կայուն զարգացման ծրագիր (ԿԶԾ), ակնկալվում է, որ կդառնա Հայաստանի տնտեսական քաղաքականության հիմնաքարը: Այն համարվում է ընդգրկուն ռազմավարական փաստաթուղթ, որը սահմանում է կառավարության բազմաթիվ քաղաքականությունների և ծրագրերի, այդ թվում՝ միջնաժամկետ բյուջետային ծախսերի համաղարփակ շրջանակը: Համարվում էր, որ ԱՀՌԾ-ի նախորդ տարբերակը (2003թ.) հիմնականում անդրադառնում էր քաղաքականությունների նպատակներին, այլ ոչ՝ այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կոնկրետ մեխանիզմներին: Այն չէր անդրադառնում նաև այնպիսի հիմնարար խնդիրների, ինչպիսիք են՝ աճի կայուն շարժիչ ուժերը, հիմնական մրցակցային առավելությունները, թույլ կողմերը և մյուս համաստեխտային խնդիրները:

Կառավարությունը կարծում է, որ ծրագրի նոր անվանումն արտացոլում է կարևոր օրինակելի տեղաշարժ: Մինչև վերջերս տնտեսական քաղաքականության նպատակները հիմնականում ունեին սոցիալական և ենթակառուցվածքային ուղղվածություն: Տնտեսական աճի բարձր տեմպերը և բարելավված բյուջետային հրավիճակը՝ դոնորական զգալի աջակցության հետ միասին հնարավորություն տվեց կառավարությանը ներդրումներ կատարել ֆիզիկական և սոցիալական ենթակառուցվածքներում: Չնայած արդյունքում աստացված նկատելի բարելավումներին, տնտեսական ազդեցությունը եղել է սահմանափակ: Փոխելով իր գլխավոր ռազմավարական փաստաթղթի ուղղվածությունը՝ կառավարությունը փորձում է իր քաղաքականությունների համաստեխտը տեղաշարժել դեպի տնտեսական զարգացում:

Նոր ԿԶԾ-ով տնտեսական զարգացումը նախանշվում է որպես ազգային քաղաքականությունների առաջին հենասյուն, և այն ներառում է առանձին բաժին Տնտեսական զարգացման ռազմավարության վերաբերյալ: ԿԶԾ-ը սահմանում է հետևյալ երեք առաջնահերթությունները.

1. Ապահովել կայուն և բարձր տնտեսական աճ

2. Իրականացնել բնակչության խոցելի խավերին ուղղված ակտիվ սոցիալական քաղաքականություններ:

3. Արդիականացնել կառավարման ոլորտի հաստատությունները:

Ինչպես սահմանվում է ԿԶԾ-ում, Հայաստանի տնտեսական զարգացման քաղաքականության ռազմավարական ուղղվածությունները լինելու են (ա) թիրախային մարզային քաղաքականությունների իրականացում՝ ուղղված մարզային անհամաչափությունների նվազեցմանը կամ գոնե՝ դրանց մեղմմանը, (բ) երկրորդ սերնդի բարեփոխումների խորացում և արագացում՝ հաստկապես կարևորելով ինստիտուցիոնալ զարգացումը և արդիականացումը, և առանձնապես՝ օրենսդրական և ինստիտուցիոնալ ոլորտների համապատասխանեցումը ԵՄ ստանդարտներին, (գ) բիզնես միջավայրի բարելավումը, մասնավորապես՝ ապահովելով ազատ տնտեսական մրցակցություն և մենաշնորհների սահմանափակում, որն իր հերթին հավասար պայմաններ կստեղծի տնտեսական գործունեության համար, (դ) արտահանման

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

խրախուսում և առավել մեծ ներգրավվածություն գլոբալ տնտեսական համակարգում, այդ թվում՝ ԵՄ-ի հետ ինտեգրացիոն գործընթացների խորացում Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում, (ե) հայկական բիզնեսների արտադրողականության և միջազգային մրցունակության բարձրացում, ինչպես նաև՝ գիտելիքների վրա հիմնված տնտեսության տարրերի և հաստատությունների ստեղծում և զարգացում:

ԿԶԾ-ը նպատակաուղղված է Հայաստանում աղքատության մակարդակի աստիճանական նվազեցմանը 2006թ. 26 տոկոսից՝ մինչև 2021 թ. 6.8 տոկոսի՝ հեռանկարում ունենալով ծայրահեղ աղքատության վերացում 2015 թվականին:

Ընդունելով ռազմավարությունների և քաղաքականության գործիքների վերանայման անհրաժեշտությունը՝ Հայաստանի կառավարությունը ակտիվորեն ուսումնասիրում է առանձին քաղաքականությունների նախաձեռնությունները և միջամտության մեխանիզմները: Որպես ազգային ծրագրերի թիրախային ոլորտներ կառավարությունն առանձնացրել է զբոսաշրջությունը, առողջապահությունը, կրթությունը, բիզնես միջավայրը և ֆինանսական հատվածը: Այնուամենայնիվ, այս ծրագրերի համար նախատեսվող առանձին մեխանիզմները, ինչպես նաև՝ ռեսուրսային պարտավորությունները դեռևս բավականին անհստակ են:

Կառավարության բազմաթիվ նախարարություններ և գերատեսչություններ մշակել են հայեցակարգեր և ռազմավարություններ՝ նպատակաուղղված ամենականերնական ծրագրերի մասնանշմանը և դրանց մասով աջակցության ապահովմանը: Դրանց շրջանակներում ձգվում է ՏՏ հատվածի, զբոսաշրջության և արհեստագործության զարգացման հիմնավորումներից և ձևերից՝ մինչև Գյումրին տեխնոպարկ դարձնելը և Դիլիջանում ֆինանսական կենտրոն ստեղծելը: Այս հարցերի նկատմամբ վերաբերմունքները տարաբնույթ էին, հատկապես՝ վերջինիս առնչությամբ:

Համահայկական բանկի ստեղծումը, որի գաղափարը ծագել էր նախկին ներկայիս իրավիճակի հրատապությունը, մեկ այլ հավակնոտ նախաձեռնություն է: Այդ ծրագիրը մեկնարկելու է 2008թ. վերջին կամ 2009թ. սկզբին՝ 100 մլն ԱՄՆ դոլարի երաշխավորված կապիտալով: Այն նախատեսված է բաց բաժնետիրական ընկերության ձևով, համաֆինանսավորվում է կառավարության և աշխարհի առաջատար ֆինանսական հաստատությունների և մասնավոր ներդրողների կողմից: Այս ծրագրի առավելությունն է օգտագործել Հայաստանի առավելությունները՝ Սփյուռքի հետ կապերը և հայկական տրանսնացիոնալ ցանցը, և ստեղծել միջոցներ՝ ֆինանսավորելու գիտատար և նորարարական ծրագրերը, համագործակցելով Հայաստանի Մրցունակության ազգային խորհրդի հետ, որը ստեղծվել է հանրային-մասնավոր համատեղ ջանքերի միջոցով տնտեսական մրցունակությունը բարձրացնելու նպատակով: Խորհուրդն իրենից ներկայացնում է մի խոստումնալից փորձ՝ ստեղծելու հանրային-մասնավոր գործընկերության կայուն ֆորում՝ ռազմավարական ծրագրեր նախաձեռնելու և համապատասխան ֆինանսավորում ապահովելու նպատակով: Առայժմ Խորհրդի գործունեությունը եղել է սահմանափակ, իսկ տեղական բիզնես համայնքի ներկայացուցչական անբավարար մակարդակը՝ դրա հիմնական մտահոգությունը:

## ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Հայաստանի տնտեսական զարգացումը կախված է հին և նոր, մեծ և փոքր ձեռնարկատերերի համար կանխատեսելի և հավասար դաշտի ստեղծումից: Այսօր, ավելի քան երբևէ, սա կառավարության մարտահրավերն է՝ հատկապես ճգնաժամի այս պահին: Եվ նախագահը, և՛ վարչապետը անդրադարձել են այս խնդրին: Սակայն դրա համար պահանջվում են նոր տիպի համարձակ և հետևողական բարեփոխումներ՝ երկրորդ սերնդի բարեփոխումները՝ հաստատությունները վերակառուցելու և Հայաստանի տնտեսությունը պահող բիզնես ավանդույթները համապատասխանեցնելու նպատակով:

Բարեփոխումների իրականացման ճանապարհին ամենալուրջ սպառնալիքը թերևս անբավարար քաղաքական կամքն է և վճռականությունը, անհամապատասխան մարդկային ռեսուրսները (և քանակական, և որակական առումներով), ինչպես նաև՝ այն կողմերի դիմադրությունը, որոնք մտահոգ են իրենց համար այդ փոփոխությունների բացասական ազդեցությունից: Վերականգնման և բարեփոխումների ամենամեծ կարիքն ունեցող հաստատություններն են հարկային, մաքսային, բանկային և արժեթղթային ոլորտի հաստատությունները: Բարեփոխումների իրականացումից հետո այս հաստատությունները դաշտ կստեղծեն բնականոն մրցակցության, արդար հարկման և հավաքագրման, հուսալի կապիտալի և վարկերի համար:

Համաձայն բազմաթիվ միջազգային զեկույցների՝ հարկային և մաքսային խնդիրները մնում են ամենախնդրահարույցը: Թերի հարկային և մաքսային վարչարարությունը լրջորեն խեղաթյուրել է Հայաստանի բիզնես միջավայրը և ստեղծել անհավասար մրցակցային պայմաններ: Կառավարությունը հայտարարել է տնտեսության բարելավման գործում այս երկու ոլորտների բարեփոխումների վճռորոշ նշանակության մասին: Սա բավարար պատճառ է, որպեսզի իշխանությունը նախ և առաջ ձեռնամուխ լինի այս ոլորտների խնդիրների լուծմանը:

*Այս նոր փաստաթղթի քաղաքական ռազմավարությունը զգալի տեղաշարժ է և սովորեցնում է կարևորել հարկատուի կարիքները՝ հարկային եկամուտներն առավել արդյունավետորեն ավելացնելու և միևնույն ժամանակ ձեռնարկատիրության համար խոչընդոտներ չստեղծելու նպատակով:*

Միջազգային լավագույն փորձը և հատկապես՝ Եվրոպական միության փորձը դարձավ նշաձող հարկային վարչարարության բարեփոխումների համար: Վարչական և ինստիտուցիոնալ հզորությունների մանրամասն դիագնոստիկան՝ ԱՄՀ-ի և Համաշխարհային բանկի առաջարկությունների հետ մեկտեղ օգտագործվեցին 2008-2011թ.թ. Հարկային վարչարարու-

թյան ռազմավարության ծրագիրը մշակելու գործում: Այս նոր փաստաթղթի քաղաքական ռազմավարությունը զգալի տեղաշարժ է և սովորեցնում է կարևորել հարկասուի կարիքները՝ հարկային եկամուտներն առավել արդյունավետորեն ավելացնելու և միևնույն ժամանակ ձեռնարկատիրության համար խոչընդոտներ չստեղծելու նպատակով:

Արդյունքում՝ օգոստոս ամսին ընդունվեց հարկային օրենքների մի փաթեթ: Փոփոխություններ կատարվեցին «Ավելացված արժեքի մասին», «Հարկերի մասին», «Շահութահարկի մասին», «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների մասին» օրենքներում: Որպես անմիջական քայլ՝ 2009թ. հունվարին վերացվելու է «Պարզեցված հարկի մասին» հակասական օրենքը: Խնդիրը պարզեցված հարկի կառուցվածքի գաղափարը չէր, այլ դրա իրականացման ուղիները, որոնք հնարավորություն էին տալիս շատ մեծ ձեռնարկություններին դասակարգվելու այդ կատեգորիայում: Փոքր և միջին բիզնեսները պաշտպանեցին այդ փոփոխությունները, հուսով, որ այն կթեթևացնի իրենց հարկային բեռի մի մասը: ՓՄՁ-ի հատվածում տարեկան շրջանառության 100 մլն. հայկական դրամից ցածր լինելու դեպքում ձեռնարկություններն ազատվում են ԱԱՀ-ի ամսական վճարներից և իրավունք ստանում օգտվել շահութահարկի (եկամտահարկի) հարկման պարզեցված մեխանիզմից:

Ավելին, նախատեսվում է արտոնյալ վճարումների պարզ մեխանիզմ այն ինքնազբաղվածների համար, որոնց տարեկան շրջանառությունը 5 մլն. դրամից պակաս է:

ԱԱՀ-ի հետ վերադարձման համակարգը նույնպես վերանայման փուլում է՝ ազատելու արտահանողներին ծանր և խոչընդոտող գործընթացից, որտեղ պետությունն է ստանձնում այդ հարկի վերադարձման ուշացման դեպքում նախատեսված տուգանքի պատասխանատվությունը: Սա իր բնույթով հեղափոխական մոտեցում է և օրենքի տառով իրականացվելու պարագայում կունենա որոշակի և դրական ազդեցություն երկրի բիզնես միջավայրի վրա:

Բիզնես միջավայրի նկատմամբ վստահություն ներշնչող այլ միջոցառումներ ևս կան:

- 2008թ. հուլիսից սկսել է գործել բողոքարկման նոր համակարգ, այդպիսով՝ հարկային ծառայություններում զգալիորեն բարելավելով ընթացակարգերը և թափանցիկությունը: Այնուհանդերձ, կան կասկածներ այս համակարգի անկողմնակալության առնչությամբ:
- Բացի այդ, գործում է նաև հաշվետվությունների ներկայացման պարզեցված ընթացակարգ՝ նվազագույնի հասցնելու կանոնավոր միջանձնական շփումները, մի բան, որ համարվում է արատավոր գործելակերպի պոտենցիալ հնարավորություն:
- Այժմ գործում է հարկային աուդիտի ենթակա հարկասուներին ընտրելու փորձնական համակարգը: Հարկային պաշտոնյայի հայեցողության փոխարեն ռիսկային գնահատման վրա հիմնված ընտրության միջոցով ակնկալվում է, որ այս մեխանիզմը կնվազեցնի ինքնակամ ընտրության գործընթացը, որը հնարավորություն էր տվել, որպեսզի այս գործընթացը

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

դառնար տնտեսվարող սուբյեկտին կամ գործարարին պատժելու գործիք:

- Մաքսային վարչարարության ընդհանուր ինստիտուցիոնալ հզորության ամրապնդմանն ուղղված նմանատիպ լայնամասշտաբ բարեփոխումները նույնպես գործում են: Այս բարեփոխումները նպատակաուղղված են բարելավելու մաքսային գնահատման կանոնները, կիրառելու ռիսկային հիմունքներով, այլ ոչ՝ սեփական հայեցողությամբ մաքսային և ետ-մաքսազերծման ստուգումներ և մեծացնելու մաքսային վարչարարության գործառնական հզորությունները նոր տեխնոլոգիաների և կատարելագործված մասնագիտական հմտությունների միջոցով: Այդ ծրագրի մի մասն է կազմում նաև Մաքսային էթիկայի քաղաքականության ընդունումը:

Չնայած այս նոր մեթոդների մի մասն արդեն իսկ ներմուծվել է, սակայն դրանց ազդեցությունը տնտեսվարման պայմանների բարելավման առումով դեռևս հստակ տեսանելի չէ:

Արդար և մրցակցային միջավայրի բացակայությունը տնտեսության ամենաեկամտաբեր հատվածներում, ինչպիսին է՝ հիմնական ապրանքների, այդ թվում շաքարի, ցորենի, վառելիքի ներմուծումը, լայնորեն ընդունվում է որպես Հայաստանի տնտեսության ամենահիմնական մարտահրավերներից մեկը: Որոշակի գործարար խմբերի գերիշխող դիրքն այս հատվածում վերագրվում է կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների հետ նրանց ունեցած սերտ անձնական կապերին:

Արդար մրցակցային միջավայր ապահովելու կառավարության ջանքերը ներառում են Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտեի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացումը:

> *Որոշակի գործարար խմբերի գերիշխող դիրքն այս հատվածում վերագրվում է կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների հետ նրանց ունեցած սերտ անձնական կապերին:*

Հանձնաժողովը քննեց հակամրցակցային զարգացումները հեղուկ բնական գազի շուկայում այն ժամանակ, երբ գազի գները բարձրացան 2008թ. մայիսին սուբսիդիաների վերացման արդյունքում: Հանձնաժողովը նաև զբաղվեց ֆինանսական հատվածում հնարավոր հակամրցակցային համաձայնությունների գործերով՝ սպառողական վարկերի շուկայում բանկերի և ապահովագրական ընկերությունների գործունեության առնչությամբ: Սա Հանձնաժողովի և Հայաստանի Կենտրոնական բանկի միջև արդյունավետ համագործակցության առաջին դեպքն էր:

Հանձնաժողովն իր մտահոգությունը հայտնեց ալյուրի և հացի շուկայում տիրող իրավիճակի առնչությամբ, որտեղ գործում են շուկայում գերիշխող դիրք ունեցող ուղղահայացորեն ինտեգրված մարմինները: Հանձնաժողովը բացահայտեց նաև հեռահաղորդակցության շուկայում գերիշխող դիրքի չարաշահման

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

դեմք, որի արդյունքում Արմենթել ՓԲԸ-ը պատասխանատվություն կրեց ինտերնետային ծառայությունների մատուցողների մասով մրցակցային կանոնները խախտելու համար:

Այնուհանդերձ, Հանձնաժողովի արդյունավետությունը սահմանափակվում է իր կողմից ընդունված որոշումների կատարման ճանապարհին առկա լուրջ խոչընդոտների և մրցակցային խնդիրներ լուծելու մասնագիտական կարողություն չունեցող դատական գործընթացում համապատասխան հզորության բացակայության պատճառով:

Մեծ ստվերային տնտեսության առկայությունը շուկան թերի է ներկայացնում և ստեղծում է բարենպաստ պայմաններ ընտրյալ տնտեսվարող սուբյեկտների համար: Որոշ պետական մարմիններ կարող են իրենց որոշումներով և իրենց կողմից առաջարկվող օրենսդրությամբ զգալիորեն խեղաթյուրել մրցակցությունը: Այն երկրներում, որտեղ պաշտոնապես չգրանցված ձեռնարկությունները լայն տարածում ունեն, այդ թվում նաև՝ Հայաստանում, ազատ մրցակցության պաշտպանման համար պատասխանատու մարմինները հաճախ բավականին թույլ են արդյունավետ գործելու համար:

Բանկային հատվածը շարունակում է մնալ ինստիտուցիոնալ առումով առողջ և կայուն, սակայն այն շատ փոքր դեր է խաղում տնտեսությունը ֆինանսավորելու գործում: Ներկայում Հայաստանում գործում են 22 առևտրային բանկեր՝ իրենց 364 մասնաճյուղերով:

Բանկային համակարգը շարունակում է զիջել այլ համեմատելի երկրների համակարգերին: 2007թ. կապիտալ-ակտիվներ հարաբերությունը 22.5 տոկոսի մակարդակի վրա էր, որը ցույց է տալիս տեղական բանկերի կողմից ապահովված ավանդային և այլ վարկային ռեսուրսների (այսինքն՝ վարկեր միջազգային բանկերից) անհամապատասխան մակարդակը: Ներքին վարկ-ՀՆԱ հարաբերությունը, որը 2007թ. հավասար էր մոտ 13.5 տոկոսի, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների շարքում ամենացածր ցուցանիշներից է, չնայած վերջին տարիներին փոխառության ծավալների արագ աճին: Սա վկայում է այն մասին, որ իրական հատվածի ֆինանսավորման հարցում բանկային հատվածի դերը չափազանց ցածր է: Տոկոսային սպրեդը կազմում էր 10.8 տոկոս, որը վկայում է բանկային գործառնությունների անարդյունավետության, բանկերի միջև մրցակցության բացակայության, հստակ կանոնակարգող նորմատիվ հենքի (որպես ինֆլյացիոն -թիրախային քաղաքականության արդյունք) և պատվող ռիսկերի ավելորդ բարձր մակարդակի մասին: Ավելին, բանկային հատվածը դեռևս բավականին փոքրամասշտաբ է, որի մասին վկայում է բանկային ակտիվներ-ՀՆԱ ցածր տեսակարար կշիռը (24.3 տոկոս): Չնայած նման հզոր կարգավորումները չեն նպաստում տնտեսական աճին, սակայն պարզվում է, որ դրանք գրավել են զգալի տոկոսներ դրսից և նույնիսկ հնարավորություն տվել այդ հատվածին խուսափելու ֆինանսական գլոբալ ճգնաժամի առաջին ալիքի ազդեցությունից:

Ակնկալվում է, որ մի շարք օտարերկրյա կարևոր ֆինանսական հաստատությունների մուտքը կխթանի արագ աճը: Ֆրանսիական Կրեդիտ Ագրիկոլ, Գերմանական ՊրոԿրեդիտ, Ռուսական Տրոյկա Դիալոգ, ՎՏԲ և Գազպրոմ բանկերն արդեն իսկ մուտք են գործել հայաստանյան բանկային հատված: Սա որոշակիորեն կուժեղացնի մրցակցությունը բանկային համակարգում և հավանաբար կտանի դեպի տոկոսային սպրեդի նվազեցում երկարաժամ-

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

կես հեռանկարում: Այնուհանդերձ, կարճաժամկետ կտրվածքով տոկոսադրույքները արդեն սկսել են բարձրանալ՝ պայմանավորված ֆինանսական ճգնաժամի ազդեցությամբ: Ավելին, ակնկալվում է, որ նման հեղինակավոր բանկերի մուտքը կապահովի գիտելիքների և փորձառության փոխանցում և կօգնի շուկա մտցնել նոր ֆինանսական արտադրանք և ծառայություններ:

Այս տարին նաև նոր ինստիտուցիոնալ զարգացումներ բերեց բանկային և ֆինանսական հատվածներում: Տարվա սկզբին մտցվեց բանկային վերահսկման համակարգը: Պաշտպանված հիպոթեքային վարկերի մասին օրենքը հիփոթեքային շուկայում մտցրեց նոր գործիքներ, որոնք կարող են Հայաստանում խթանել հիփոթեքային վարկավորումը:

Ակտիվների երաշխիքների և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին օրենքը բանկային և ֆինանսական հատվածին հնարավորություն կտա տնտեսվարող սուբյեկտներին առաջարկել ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ: Տնտեսությունն ամբողջությամբ օգուտ կքաղի նման երկարաժամկետ դրամի առկայությունից:

Օրենսդրության որոշ հատվածներ ուժեղացնում են սպառողների պաշտպանությունը և արժեթղթերի շուկայի զարգացումը: Բանկային ավանդներ գրավելու մասին օրենքը սահմանում է ավանդային հաշիվների բացումը կարգավորող կանոնները: Սպառողական վարկի մասին օրենքը կարգավորում է բանկ-հաճախորդ հարաբերությունները վարկային պայմանագրերում: Նույն շարքում՝ Ֆինանսական օմբուդսմենի մասին օրենքը նախատեսված է որպես արագ արձագանքման գործիք սպառողների իրավունքները պաշտպանելու համար: Արժեթղթերի շուկայի և Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին վերջերս ընդունված օրենքները հիմնված են Եվրոպական ստանդարտների վրա և բացել են նոր հնարավորություններ տնտեսության այս հատվածներում: NASDAQ-OMX գրուպը դարձել է Հայաստանի Ֆոնդային բորսայի և Կենտրոնական դեպոզիտարիայի սեփականատերը, իսկ ռուսական ամենամեծ ապահովագրական ՌոսԳոսՍտրախ ընկերությունը մուտք է գործել հայաստանյան շուկա: Այնուհանդերձ, նոր կարգավորումները անբավարար են արժեթղթերի շուկան արագընթաց աճ ապահովող ուղու վրա դնելու համար, քանի որ սա նոր տիպի հաստատություն է Հայաստանում և այն պահանջում է ավանդական մտածելակերպի, բիզնես միջավայրի և կորպորատիվ ընկալման փոփոխություն:

### 2009 թ. հեռանկար

- Գլոբալ տնտեսական ճգնաժամը շարունակելու է խորանալ: Ուստի, այն շարունակելու է էական ազդեցություն ունենալ անցումային՝ այդ թվում նաև Հայաստանի վրա:
- Հայաստանի տնտեսական աճի ցուցանիշները և սպառողական պահանջարկը զգալիորեն նվազելու են ինչպես արտաքին (օրինակ, գումարների, հատկապես՝ արտասահմանից փոխանցումների), այնպես էլ ներքին (օրինակ, կառավարության արգելափակիչ ֆիսկալ քաղաքականության) գործոնների ազդեցությամբ:
- Դրամի փոխանակման խարսխված փոխարժեքի ներկայիս քաղաքականությունը սրում է արտաքին անհա-

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

վասարակշռությունը և դժվար է լինելու այն պահպանել 2009թ. ընթացքում: Ուժեղ ազգային դրամի պահպանումը շարունակելու է հանդիսանալ ներկրման ծավալի աճի պատճառ և հարվածելու է արտահանմանը՝ այդպիսով բարձրացնելով առևտրային դեֆիցիտի ցուցանիշը: Արտահանման նվազումը նաև վատթարանալու է մետաղների գների անկման և թույլ արտաքին պահանջարկի հետևանքով:

- Տարվա սկզբից Կենտրոնական բանկը, ՀՀ դրամը պաշտպանելու իր ծանրակշիռ միջամտությունների հետևանքով, արդեն կորցրել է 200 մլն ԱՄՆ դոլար, որը համարժեք է իր համախառն ակտիվների 12 տոկոսին: Նաև բարձր է Արժույթի Միջազգային Հիմնադրամի չափանիշի մակարդակից ցածր Կենտրոնական բանկի զուտ արտաքին ակտիվների անկման հավանականությունը, հատկապես եթե վճարային հաշվեկշռի ներկայիս միտումը շարունակի վատթարանալ:

- Սղաճն օգոստոսի 12 տոկոսի համեմատ նվազել է մինչև 9 տոկոս: Այն այլևս չի լինելու հիմնական քաղաքական խնդիր, քանի որ տնտեսության աճը դանդաղում է և գներն ընկնում են միջազգային ապրանքային շուկայում: 2009թ. սղաճը չի գերազանցի 6 տոկոսը և հնարավոր է, որ նույնիսկ կտեղավորվի բյուջեով նախանշված 4 տոկոսի սահմաններում:

- Ամենայն հավանականությամբ, 2009թ. բյուջեի ռիսկերն առարկայական են: Նոյեմբերին Ազգային ժողովի կողմից հաստատված 2009թ. բյուջեի մակրոէնթադրույթները, ինչպես, օրինակ, 9.2 տնտեսական աճի սպասելիքը, իրատեսական չեն արդի պայմաններում: Գալիք տարվա կեսին կառավարությունը կարող է ստիպված լինել բյուջեի լուրջ լրացումներ առաջարկել, չի բացառվում նաև բյուջեի սեկվեստրը, սակայն դա կարող է արդեն ուշ լինել հարկերից տանջահարված ձեռներեցների համար:

- Հարկահավաքության խստացումը կարող է հանգեցնել կապիտալի արտահոսքի, ձեռներեցության միջավայրի էլ ավելի վատթարացմանը, ինչպես նաև գների նոր աճի:

- Նոյեմբերին վարչապետի կողմից հայտարարված կառավարության հակաճգնաժամային գործողությունները նախատեսում են այնպիսի կարճաժամկետ ձեռնարկներ, ինչպիսիք են կայունության ամրապնդումը, աճի նախանշված մակարդակին հասնելու նպատակով նոր խթանիչների ստեղծումը, արտահանման խրախուսումը և վճարային հաշվեկշռի բարելավումը:

- Կառավարությունը նաև նախատեսել է աջակցություն ցուցաբերել նոր ձեռնարկություններին պետական երաշխիքներ տրամադրելու և կանոնադրային կապիտալին մասնակցելու միջոցով: Սակայն այդ աջակցության մեխանիզմները պարզաբանված չեն:

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հանքարդյունաբերության բնագավառում իրավիճակը կարող է բարելավվել միայն այն դեպքում, եթե կառավարությունն ուժային և էական քայլեր ձեռնարկի: Հաշվի առնելով բյուջետային սահմանափակումները՝ դա, իհարկե, դժվար է լինելու:

## Լուծումների տարբերակներ

Հայաստանի տնտեսությանը սպառնացող վտանգներից խուսափելու, ինչպես նաև զարգացման նախադրյալներ ապահովելու ու որակապես նոր տիպի տնտեսական հարաբերությունների ստեղծելու համար անհրաժեշտ են հետևյալ մակրո- և միկրոբնույթի քայլերը.

- 2009թ. սկզբին տնտեսության խրախուսման ներդաշնակ փաթեթի ներկայացում, որը պետք է կենտրոնանա պետության կողմից ֆինանսավորվող աշխատանքների վրա, որպեսզի դրա միջոցով խթանի տնտեսվարողների գործունեությունը և ստեղծի նոր աշխատատեղեր,

- Կենտրոնական Բանկի կողմից դրամի փոխարժեքի ավելի ճկուն քաղաքականության իրականացում, որը նաև կարտացոլի պահանջարկի և առաջարկի դրությունը և կնպաստի արտահանմանը, ինչպես նաև կբարձրացնի այն մարդկանց գնողունակությունը, ովքեր կտուժեն արտասահմանից փոխանցումների կրճատումից,

- էլ ավելի ամրապնդել ՀՀ դրամով բանկային հաշիվների ապահովագրումը. դա իրատեսական նպատակ է, քանի որ հաշիվների ընդհանուր ծավալը ՀՆԱ-ի 15 տոկոսից պակաս է, իսկ բանկերն էլ վճարունակ են. դա նաև կմեղմի բոլոր մտահոգությունները դրամի արժեզրկման պարագայում բանկերի հնարավոր փախուստի շուրջ,

- սեփականության ինստիտուտի լիարժեք պաշտպանության գործուն մեխանիզմների ապահովում, ինչպես նաև սեփականության անօրինական (քաղաքական դրդապատճառներով) վերաբաշխման բացառում,

- հարկային համաներման իրականացում և, միևնույն ժամանակ, ազատական և պրոգրեսիվ հարկման համակարգի ներդրում,

- ներդնել դիֆերենցված հարկային քաղաքականություն, որը ենթադրում է խթանման, այլ ոչ թե միայն ֆիսկալ ֆունկցիա,

- գործարքների փաստաթղթաշրջանառության ապահովման և ստվերային տնտեսության դեմ պայքարը սկսել խոշոր բիզնեսից և ոչ թե փոքր ու միջինից, և հետևաբար փոքր ձեռներեցության համար առավելապես կիրառել հաստատագրված հարկ և ոչ թե շահութահարկ,

- հաշվի առնելով ֆինանսական միջոցների սպասվելիք սղությունը բիզնեսի տարբեր շերտերի համար՝ օրենսդրորեն փոփոխության ենթարկել ՀՀ սահմանի վրա ավելացված

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

արժեքի հարկի գանձման նորմը՝ այդպիսով հնարավորություն տալով գործարարներին չզրկվել շրջանառու միջոցներից՝ դեռևս ապրանքի իրացումը տեղի չունեցած,

- մաքսային համակարգում ամբողջությամբ անցնել ներմուծողների կողմից ներկայացվող փաստաթղթերի հիման վրա գանձումների իրականացման համակարգին (իհարկե, միևնույն ժամանակ ուժեղացնել ներքին իրացման հարկման համակարգը) և հրաժարվել չհիմնավորված բարձր գներով մաքսազերծումների պրակտիկայից, ինչը նպաստում է գների բարձրացմանը և և բիզնեսի ծավալների կրճատմանը,

- հակամենաշնորհային օրենսդրության ընդունում, ինչը նաև ենթադրում է անկախ հակամենաշնորհային մարմնի ստեղծում,

- ազատ մրցակցության և ազատ գնագոյացման ապահովում բիզնեսի բոլոր ոլորտներում,

- հրավիրել դոնորների կոնֆերանս, որի ընթացքում անհրաժեշտ է ներկայացնել այն խոցելի դիրքը, որի մեջ հայտնվեց Հայաստանը ռուս-վրացական բախման հետևանքով: Չնայած այդ հակամարտության կարճատևությանը՝ այդ կոնֆերանսի ընթացքում անհրաժեշտ է ներկայացնել Եվրոպայի և Ռուսաստանի հետ Հայաստանի առևտրի համար դրա բոլոր բացասական հետևանքները:

# ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայերը երջանիկ չեն: Իրականում, ըստ Միչիգանի համալսարանի Սոցիալական հետազոտությունների ինստիտուտի «երջանկության ինդեքսի»[1], հայերը գործնականում ամենատխուր ժողովուրդն են աշխարհում: Հետազոտված 97 երկրների ցանկում միայն Զիմբաբվեի բնակիչներն են՝ 1.92 ցուցիչով, որ ավելի ընկճված են, քան հայաստանցիները՝ 1.80 ցուցիչով, և այդ իմաստով հայերը «զիջում» են միայն մոլդովացիներին, որոնց ցուցիչը 1.74 է:

Հարց է ծագում՝ ի՞նչն է «միավորում» այս երեք ազգերին՝ զիմբաբվեցիներին, հայերին ու մոլդովացիներին, և ինչ ընդհանուր բան ունեն այս երեք ժողովուրդները, որ նրանց այդչափ ընկճված է դարձնում: Այն հանգամանքը, որ երեք երկրներն էլ ծովի ելք չունեն՝ իհարկե, բավարար բացատրություն չէ: Ցամաքային Շվեյցարիան տեղ է զբաղեցնում երջանկագույն սանդղակում, 3.96 ցուցիչով, և անգամ Ղրղզստանն ավելի ժպտադեմ է՝ 1.59 ցուցիչով:

Արդյո՞ք այս ամերջանիկ եռյակի հուսահատությունը ուղղակի հետևանքն է այն բանի, թե որքան աղքատ և թերզարգացած են նրանք: Դարձյալ, սա էլ չի հավանական բացատրություն: Ասենք, Զիմբաբվեի ու Մոլդովայի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ները[2] շատ ցածր են, մոտավորապես 200 ամերիկյան դոլարի չափ Զիմբաբվեում և 2000 դոլար՝ Մոլդովայում: Սակայն նույնանման վիճակում է «երջանիկ» Ղրղզստանը, որը, Մոլդովայի ու Զիմբաբվեի նման, դասակարգված է Մարդկային զարգացման ինդեքսի դասակարգումների[3] ստորին, եռանիշ սանդղակում: Մյուս կողմից, սակայն, Հայաստանի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ավելի քան երկու անգամ բարձր է, համարյա 5000 ԱՄՆ դոլար, և այդպիսով Հայաստանի «կատարողականը» Մարդկային զարգացման ինդեքսում մեր երկիրը փոխադրում է երկնիշ ցուցանիշների ակումբ՝ 83-րդը 177 երկրների շարքում:

## Հարավկովկասյան հարևանները

Մարդկային զարգացման ինդեքսի երկնիշ սանդղակում տեղավորվել են նաև Հայաստանի հարավկովկասյան հարևանները՝ Վրաստանն ու Ադրբեջանը (որոնք զբաղեցնում են 96-րդ և 98-րդ տեղերը, համապատասխանաբար, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի 5.000 և 2.000 ԱՄՆ դոլարի ցուցանիշներով): «Երջանկության» չափանիշներով Հայաստանն ինչպե՞ս է մրցակցում իր հարևանների հետ: Պարզվում է, վրացիները հայերից ընդամենը մի փոքր են երջանիկ: Հետաքրքրական է, որ նրանց «երջանկության ինդեքսը» նույնական է ռուսների հետ՝ 1.01: Ադրբեջանցիները, մյուս կողմից, նշանակալիորեն ավելի երջանիկ են և փաստորեն «ճեղքում» են ընկճվածությունը +0.13 ցուցիչով:

**Գծապատկեր 1.** *«Հայերը երջանիկ չեն իրենց զարգացմամբ»*




Դատելով ադրբեջանցիների համեմատական խանդավառվածությունից, աղքատությունը, ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը ամենևին էլ երջանկության խթանիչներ չեն, համենայն դեպս, Հարավային Կովկասում:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

## Իրավունքներ, ազատություններ և արդյունավետ կառավարում

«Ֆրիդոմ հաուսի» «Ազատությունն աշխարհում» զեկույցը աշխարհի երկրներում քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների հեղինակավոր ցուցիչ է, սակայն որոշ հաղաղումով է արտացոլում այս ոլորտում առաջադիմությունն ու հետընթացը՝ ներքաղույց միտումներին խորամուխ լինելով հիմնականում այն դեպքերում, երբ դրանք դրսևորվել են նշանակալի իրադարձությունների տեսքով: Ուստի գերադասելի է որոշես հաշվարկային հիմք ընդունել վերջին մի քանի տարիների ցուցանիշները, քան հետազոտել տարեցտարի արձանագրված արդյունքները: 2008 թվականի զեկույցում[4] Հայաստանն ու Վրաստանը բնութագրվում են որպես «մասնակիորեն ազատ», իսկ Ադրբեջանը՝ «ոչ ազատ», ընդ որում, այս գնահատականները դադրմանվում են արդեն մի քանի տարի՝ ամրագրելով Վրաստանի առաջատար (սակայն նահանջող) դիրքերը, իսկ Ադրբեջանին վերապահելով վերջապահի կարգավիճակը:

Առավել մասնագիտացված՝ Համաշխարհային մամուլի ազատության ինդեքսը, որը հրապարակվում է «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության կողմից, համահունչ է «Ֆրիդոմ հաուսի» գնահատականներին, ըստ որոնց մամուլի ազատության ոլորտում Հարավային Կովկասը բավականին ցածր ցուցանիշներ է հանդես բերում: 2008 թվականի դասիչների[5] համաձայն, վերը նշված երեք երկրները տեղ են զբաղեցնում աղյուսակի «հարավային կիսագնդում», ընդ որում, նաև ցուցահանվում է վերջին տարիների այն հուսալ միտումը, որ երեք երկրներն էլ շարունակում են գլորվել դեպի «հարավ»: Այս պարագայում, սակայն, 173 երկրների ցանկում, Հայաստանը համեմատաբար ավելի շահեկան տեղ է զբաղեցնում՝ 102-րդը, քան Վրաստանը (120) և Ադրբեջանը (150):

«Էկոնոմիստ»-ի հետազոտական բաժանմունքը այս ընդհանուր կատեգորիայում նույնպես ունի իր դասակարգումները, մասնավորապես, ժողովրդավարության ոլորտում, որի բաղադրիչներից են ընտրական գործընթացները, բազմակարծությունը, արդյունավետ կառավարումը, քաղաքական համամասնակցությունը, քաղաքական մշակույթը և քաղաքացիական ազատությունները: Ծվեյցարիան, որն ընդգրկված է աշխարհի 10 երջանկագույն երկրների վերին հորիզոնականներում, 2008թ. ժողովրդավարության ինդեքսում[6] նույնպես գտնվում է «լիիրավ ժողովրդավարություններ» դասաբաժանման մեջ, որին հաջորդում է «թերարժեք ժողովրդավարություններ» դասաբաժանումը: Հարավկովկասյան երկրներից Վրաստանին ու Հայաստանին տեղ է հասկացվել էլ ավելի ստորին դասաբաժանման մեջ, որը կոչվում է «հիբրիդ վարչակարգեր». այս դասաբաժանման մեջ են նաև տարածաշրջանային հարևաններ Թուրքիան ու Ռուսաստանը: Ադրբեջանը հաստատուն տեղ է զբաղեցրել ինդեքսի ամենաստորին՝ «ավտորիտար վարչակարգեր» դասաբաժանման մեջ, ուր կողք-կողքի է հայտնվել տարածաշրջանային հարևան Իրանի հետ: Ինչպես և «Ֆրիդոմ հաուսի» դասակարգումների դեպքում, Վրաստանն այստեղ 104-րդն է 149 երկրների շարքում, և շրջանցում է ինչպես Հայաստանին (113), այնպես էլ Ադրբեջանին (135):

Եվ, վերջապես, անդրադառնանք կոռուպցիային, որն արտացոլված է *«Թրանսփերենսի ինթերնեյշընըլ»-ի Կոռուպցիայի ընկալման ինդեքսում[7] :* Ըստ այս ինդեքսի, Վրաստանն առաջ է անցել իր հարավկովկասյան հարևաններից 180 դասակարգված երկրների թվում իր համար ապահովելով 67-րդ հորիզոնականը, մինչդեռ Հայաստանը գտնվում է 109-րդ տեղում (նույն ցուցանիշով, ինչ «ղժբախտ» Մոլդովան), իսկ Ադրբեջանը

**Գծապատկեր 2.** *«Ազատությունն ու ժողովրդավարությունը Հարավային Կովկասում. ծուռկող հարևանություն»*




միայն 158-րդն է: Վրաստանի առաջընթացը կոռուպցիայի դեմ պայքարում տպավորիչ է և հատկապես նկատելի Հայաստանի ու Ադրբեջանի նահանջողական միտումների բաղդատությամբ: Մինչդեռ Հայաստանն ու Ադրբեջանը իրենց 2006 և 2008թթ. ցուցանիշների համեմատականում նահանջել են շուրջ 20%-ով, Վրաստանն, ընդհակառակը, ավելի քան 20%-ով առաջադիմել է:

**Գծապատկեր 3.** *«Ազատություն կոռուպցիայից. Վրաստանն անցնում է առաջ»:*




## Եկամուտ վաստակելու ազատությունը

Վերջին տարվա ընթացքում «Էկոնոմիստ» ամսագրում զետեղված մի շարք նյութեր գալիս էին հավաստելու, որ գործարարության և ձեռնարկչության այս կամ այն ոլորտում Վրաստանը շատ ավելի շահեկան վիճակում է, քան, ասենք, Գերմանիան կամ Ճապոնիան: Սա հիմնված է Համաշխարհային բանկի գործարար խմբի (World Bank Doing Business Group) զեկույցի[8] վրա, որը «տրամադրում է օբյեկտիվ տվյալներ գործարար ոլորտի կանոնակարգումների և 181 երկրներում դրանց կիրարկման վերաբերյալ»: 2008 թվականի զեկույցը Վրաստանին տեղ է հատկացնում աշխարհի բարեփոխումներ իրականացրած երկրների վերին հորիզոնականներում մի շարք ցուցանիշների հաշվառմամբ և արձանագրում է այդ երկրի արագ վերընթացը ըստ Գործարար խմբի դասակարգումների: 2008թ. կեսերին նախորդած երեք տարիների ընթացքում Վրաստանը գործարար ոլորտի բարեփոխումների առումով 37-րդ տեղից բարձրացել է մինչև 18-րդ հորիզոնականը, մինչդեռ Հայաստանը, որ զարմանալիորեն բարձր տեղ էր զբաղեցնում այդ դասակարգման մեջ, 34-ից նահանջել է մինչև 44-րդ հորիզոնականը: Բացված «վակուումը» լրացրել է Հայաստանի մյուս հարևանը՝ Ադրբեջանը, որը նույն շրջանում 99-րդ տեղից «հրթիռահարել է» 33-րդ հորիզոնականը: Նման զգալի վայրիվերումները դժվարըմբռնելի են, հատկապես, հարավկովկասյան երկրների գործարար աշխարհի մարդկանց համար, ովքեր տարակուսում են, թե ինչու իրենք չեն նկատում այս ահռելի փոփոխությունները իրենց ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնելիս:

Պատկերն ավելի խճողված է դառնում, եթե փորձում ենք Գործարար խմբի տվյալները համեմատել մեկ այլ՝ *Տնտեսական ազատության ինդեքսի*[9] հետ, որը տվյալներ է տրամադրում է

## ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

151 երկրներում վարվող տնտեսական քաղաքականության վերաբերյալ և հրատարակվում է Հերիթիջ հիմնադրամի և Ուոլ Սթրիթ Ջորնըլ օրաթերթի կողմից: 2008թ. տվյալների համաձայն, Հայաստանն այստեղ 28-րդ մեծության աստղ է, թեև, ճիշտն ասած, վայր ընկնող աստղ, քանի որ 2006-ին զբաղեցնում էր 14-րդ հորիզոնականը: Այդուամենայնիվ, Հայաստանին տեղ է հատկացվել «հիմնականում ազատ» դասաբաժանման մեջ, որտեղ գտնվում է նաև Դանիան (ի դեպ, աշխարհի ամենաերջանիկ վայրը, ըստ «երջանկության ցուցիչի»), մինչդեռ Վրաստանը միայն «համեմատաբար ազատ է» և զբաղեցնում է 34-րդ տեղը, իսկ Ադրբեջանը «հիմնականում» անազատ է և ծվարել է 107-րդ հորիզոնականում:

**Գծապատկեր 4ա.** *«Գործարարության դյուրությունները»*




**Գծապատկեր 4բ.** *«...Ընդհեմ տնտեսական ազատությա՞ն»*




### Վարկունակության գնահատումը

2006 թվականին առաջին անգամ քննարկվեց Հայաստանին վարկունակության սուվերեն վարկանիշ շնորհելու հարցը: Նկատի ունենալով այդ ժամանակվա դոլարիզացիայի բարձր մակարդակը, որը զուգորդվում էր ֆինանսական ծառայությունների թերզարգացածությամբ և Լեռնային Ղարաբաղի հակամարտության չկարգավորվածությամբ, Հայաստանն ստացավ Ֆիթչի նախնական «Ոչ-ներդրումային աստիճանակարգի» երկարաժամկետ վարկունակության BB- վարկանիշը: 2008-ին Հայաստանը վարկանիշը բարձրացվեց BB նշաձողին՝ «կայուն հեռանկար» բնութագրմամբ, որը Ադրբեջանի BB+ վարկանիշից ցածր էր, սակայն Վրաստանի B+ նիշից բարձր, որին այժմ հավելակցվել է «բացասական հեռանկար» բնութագրումը:

Հարավկովկասյան երեք երկրները դասակարգված են նաև Մուդիի ցուցիչներով, որոնք համահունչ են Ֆիթչի վարկանիշներին, այն է, Ադրբեջանն ունի Ba1 «ոչ-ներդրումային մակարդակ»՝ կայուն հեռանկարով, Հայաստանը Ba2 դասակարգում՝ կայուն հեռանկարով, իսկ Վրաստանը՝ նույնպես Ba2-ում է, սակայն այս դեպքում հեռանկարը գնահատվում է որպես ոչ կայուն:

Ոչ-մասնագետի համար վերոնշյալ սուվերեն դասակարգումների խճապատկերում ակնհայտ է մի բան՝ չնայած ըստ Գործարար խմբի և Տնտեսական ազատության ինդեքսների հարավկովկասյան երեք հարևանների համարումը վատը չէ, իսկ վերջին մի քանի տարիների տնտեսական աճը տպավորիչ է, Հարավային Կովկասը փաստորեն շարունակում է մնալ ոչ-ներդրումային համարվող տարածաշրջան՝ գործարարության բարձր ռիսկայնությամբ, բայց նաև փոխհատույցի բարձր ներունակությամբ:

## Վերադարձ իրականությանը

Հայաստանի հարաբերականորեն ռիսկային վարկունակության գնահատումը ընկալելի է շատերի համար: Արդյո՞ք նույնը կարելի է ասել մյուս գնահատականների մասին: Հայաստանն, իհարկե իր փաստացի մենաշնորհների հետ կապված լուրջ խնդիր ունի, բայց արդյո՞ք դրանց հայկական շուկայում գերիշխող դիրք ունենալու հանգամանքը ավելի բացասական է, քան աշխարհի երկրների 99 տոկոսում, ինչպես որ նշվում է մրցունակության ինդեքսում: Մյուս կողմից, ճիշտ է արդյոք, որ Հայաստանում աշխատելը զգալիորեն ավելի հեշտ է, քան Իսպանիայում, Իսլանդիայում կամ Լեհաստանում, ինչպես նշվում է Գործարար ազատության մասին զեկույցում: Շատ դիտորդներ կհամաձայնեն, որ Հայաստանի ժողովրդավարական ինստիտուտները հեռու են կատարյալ լինելուց, բայց արդյոք նրանք հեշտությամբ կհամաձայնեն «Էկոնոմիստ»-ի զեկույցի այն պնդման հետ, որ Հայաստանը նույնիսկ չի կարող հավակնել «թերի ժողովրդավարական» երկրների շարքում լինել: Ու թեև քչերը հայերին կբնութագրեն որպես կենսուրախ ժողովուրդ, բայց և հայերին աշխարհի ամենատխուր ժողովուրդների շարքին դասելը թվում է իրականությանն այնքան էլ համահունչ չէ: Բայց այն հանգամանքը, որ այս վարկանիշները կարող են հակասել մեր ընկալումներին, չի նշանակում, որ դրանք օգտակար չեն: Իրականում, մի կողմ թողնելով համեմատությունները մյուս երկրների հետ, այս թվերը մեզ ցույց են տալիս, որ Հայաստանի առաջ կան ծառացած շատ լուրջ խնդիրներ, որոնց պետք է լուծումներ տալ: Հայաստանը պետք է կարողանա զսպել մենաշնորհ ունեցողներին, վերացնել կոռուպցիան, ազատություն տալ լրատվամիջոցներին, բարելավել արդյունավետությունը, կուտակել գործուն ժողովրդական ինստիտուտների կրիտիկական զանգված և պայմաններ ստեղծել ապահով և շահութաբեր ներդրումների համար:

Եվ վերջապես, արդյո՞ք հայերն այս պահին ուրախանալու պատճառ ունեն: Միգուցե՝ դեռևս ոչ: Նրանք հավանաբար տխուր են, որովհետև նրանց սպասումները համահունչ չեն իրականությանը: Այս կուտակվող անբավարարության իրավիճակը կարող է էներգիայի պոտենցիալ աղբյուր լինել, որը կարող է լիցքավորել երկրի առաջընթացը:

---

[1] http://umich.edu/news/happy–08/HappyChart.pdf

[2] http://www.imf.org/external/pubs/ft/weo/2008/02/weodata/index.aspx,

[3] http://hdr.undp.org/en/media/HDR–20072008–Tables.pdf

[4] http://www.freedomhouse.org/uploads/fiw08launch/FIW08Tables.pdf

[5] http://www.rsf.org/IMG/pdf/cl–en–2008.pdf

[6] http://a330.g.akamai.net/7/330/25828/20081021185552/graphics.eiu.com/PDF/Democracy%20Index%202008.pdf

[7] http://www.transparency.org/news–room/in–focus/2008/cpi2008/cpi–2008–table

[8] http://www.doingbusiness.org/EconomyRankings/

[9] http://www.heritage.org/research/features/index/countries.cfm

# ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ՝ ԹՎԵՐՈՎ

## Հայաստան

ՀՆԱ աճ
7.5 տոկոս

Սղաճ
8.5 տոկոս

ՀՆԱ
$9.2 մլրդ

ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝
$3068
(գնողունակությամբ կշռված՝ $5900)

Բնակչություն
3.2 մլն

**2009թ. հեռանկար.**
տնտեսությունը վստահաբար կդանդաղի 2009թ.: Թե որքանով՝ զգալիորեն կախված կլինի Ռուսաստանի և ԱՄՆ-ի զարգացումներից: Դրական զարգացումների դեպքում հնարավոր է դրական տնտեսական աճ: Վատագույն դեպքում հնարավոր է տնտեսական անկում՝ բացասական ցուցանիշով, ինչը կառաջացնի սոցիալական դժգոհություն և կնպաստի քաղաքական առճակատման խորացմանը: Մարտի 1-ի քաղաքական հետևանքները, հատկապես ընդդիմադիր առաջնորդների դատավարությունները, կշարունակեն լարվածության աղբյուր մնալ: Կառավարությունը կշարունակի իրեն փակուղային իրավիճակում զգալ՝ իշխանությունը կորցնելու մտավախությունից անընդունակ լինելով լուրջ գործողությունների: Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատումը դրական ազդեցություն կունենան ներքին տնտեսական և քաղաքական ճգնաժամի վրա: Իշխանությունը նաև լուրջ ուշադրություն կբևեռի Ղարաբաղյան հակամարտության վրա, սակայն այստեղ շատ բան է կախված փոխզիջման գնալու Ադրբեջանի ցանկությունից:

## Ադրբեջան

ՀՆԱ աճ
18.6 տոկոս

Սղաճ
19.4 տոկոս

ՀՆԱ
$2.4 մլրդ

ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝
$3521
(գնողունակությամբ կշռված՝ $6260)

Բնակչություն
8.4 մլն

**2009թ. հեռանկար.**
նավթի գների անկումը և համաշխարհային ֆինանսական ճգնաժամը զգալիորեն կազդեն Ադրբեջանի տնտեսության վրա: Ներքին իրավիճակը կմնա կայուն, քանի որ Կովկասի մյուս երկրների համեմատ ընդդիմությունը գրեթե լիովին ջախջախված է: Ադրբեջանը ուշադիր հետևելու է հայ-թուրքական հարաբերությունների զարգացմանը, և փորձելու է ամեն ինչ անել, որ հարաբերություններում ձնհալը չհանգեցնի հայ-թուրքական սահմանի բացմանը: Ռուսաստան-Ադրբեջան հարաբերություններն ավելի կկարևորվեն: Ինչ վերաբերում է Ղարաբաղի խնդրին՝ Ադրբեջանը կշարունակի ներգրավված մնալ բանակցային գործընթացում, բայց նաև կփորձի թուլացնել բանակցային սեղանին գտնվող փոխզիջումային փաթեթը՝ փոխարենը փնտրելով ավելի հեշտ և ավելի քաղաքականացված ամբիոն՝ ինչպիսին է ՄԱԿ-ը:

## Վրաստան

ՀՆԱ աճ
2 տոկոս

Սղաճ
11.2 տոկոս

ՀՆԱ
$10.2 մլրդ

ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝
$2315
(գնողունակությամբ կշռված՝ $4770)

Բնակչություն
4.5 մլն

**2009թ. հեռանկար.**
տնտեսական ճգնաժամը իր ազդեցությունն է ունեցել նաև Վրաստանի վրա, սակայն, տրամադրվելու դեպքում, հետհակամարտային զգալի միջազգային ֆինանսական օգնության փաթեթը որոշակիորեն կփոխհատուցի տնտեսական կորուստները: Ռուս-վրացական հարաբերությունները, սակայն, չեն փոխհատուցվի, քանի որ լարվածությունը կշարունակվի: Վրաստանում միջազգային մոնիտորինգային և դիտորդական առաքելությունների երկարացման շուրջ լուրջ բանավեճերը կթուլացնեն միջազգային ներկայությունը երկրում: Օգոստոսյան իրադարձություններին բացատրություն տալու վերաբերյալ ներքին ճնշումները Սաակաշվիլու վրա, ինչպես նաև նրա հրաժարականի պահանջները կավելանան: Այդ ընթացքում ի հայտ կգան նոր քաղաքական ուժեր՝ փորձելով համախմբել դժգոհ զանգվածը և առաջարկելով այլընտրանքային երկրորդ բևեռ:

## Ռուսաստան

ՀՆԱ աճ
7.3 տոկոս

Սղաճ
14.5 տոկոս

ՀՆԱ
$1297.5 մլրդ

ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝
$9131
(գնողունակությամբ կշռված՝ $14400)

Բնակչություն
142.2 մլն

**2009թ. հեռանկար.**
Ռուսաստանը իր տնտեսական և քաղաքական աննախադեպ վերելքով հանդերձ ծանր կրեց համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամը: Ռուս-վրացական հակամարտությունը ավելի բարդացրեց տնտեսական իրավիճակը և ավելի մեծ վնաս հասցրեց առանց այդ էլ անկայուն ներդրումային դաշտին: Հեռանկարները մշուշոտ են, քանի որ ակնկալվում է, որ նվազող համաշխարհային պահանջարկը կհանգեցնի նավթի ցածր գների պահպանմանը: Ռուսաստանը դեռևս ակնկալում է գերակայություն ունենալ արևելքից արևմուտք էներգետիկ տարանցիկ ուղիների հանդեպ, թեև միևնույն ժամանակ փորձում է վերականգնել հարաբերությունները Եվրոպայի հետ: Վրաստանի հետ լարվածությունը կպահպանվի, միևնույն ժամանակ Ռուսաստանը կներգրավվի կովկասյան գործընթացներում՝ հատկապես Լեռնային Ղարաբաղի կարգավորման գործընթացում միջնորդի դերում:

## Թուրքիա

ՀՆԱ աճ
4 տոկոս

Սղաճ
10.3 տոկոս

ՀՆԱ
$657.1 մլրդ

ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝
$9309
(գնողունակությամբ կշռված՝ $12350)

Բնակչություն
72.6 մլն

**2009թ. հեռանկար.**
համաշխարհային և տարածաշրջանային նվազող պահանջարկը, ինչպես նաև ուղղակի արտաքին ներդրումների հոսքի անկումը կդանդաղեցնի տնտեսությունը 2009թ. Այդուհանդերձ Թուրքիայի հիմնական խնդիրը կմնա ներքին պայքարը իշխող կուսակցության և ավանդական ազգայնական գաղափարախոսության միջև:

Թուրքիան կփորձի նոր դեր ստանձնել տարածաշրջանում, ինչը նաև կարևոր կլինի երկրի Եվրամիությանն անդամակցելու գործընթացի համար: Թե ինչ դիրքորոշում կունենա Թուրքիան ռուս- վրացական հակամարտության, Հայաստանի հետ դեռևս փակ սահմանի, Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային գործընթացում Ադրբեջանին աջակցելու հարցերում՝ կկանխորոշի թե որքանով մեծ դերակատարում կունենան Թուրքիան տարածաշրջանում: Թուրքիան կշարունակի շրջանառել Կովկասյան անվտանգության և համագործակցության պլատֆորմի գաղափարը՝ տարածաշրջանում ներգրավված լինելու համար:

## Իրան

ՀՆԱ աճ
5.5տոկոս

Սղաճ
18.5 տոկոս

ՀՆԱ
$270 մլրդ

ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝
$3939
(գնողունակությամբ կշռված՝ $9852)

Բնակչություն
72.9 մլն

**2009թ. հեռանկար.**
Իրանի մեկուսացված տնտեսությունը զգալի հարվածներ կկրի առկա ճգնաժամի պատճառով՝ հանգեցնելով նավթի և շուկայական ապրանքների գների անկման: Լայնածավալ պետական ծախսերը նույնպես կկրճատվեն: Չնայած միջազգային ճնշմանը, Իրանը, ամենայն հավանականությամբ, կշարունակի իր միջուկային ծրագիրը՝ դրանով իսկ կանգնելով տնտեսական պատժամիջոցների վտանգի առաջ: Սա իր ազդեցությունը կթողնի նաև հարևանների՝ մասնավորապես Հայաստանի վրա: Խուսափելու համար հետագա մեկուսացումից, Իրանը կփորձի ավելի ներգրավվել տարածաշրջանային գործընթացներում՝ միևնույն ժամանակ պահպանելով հավասարակշռված դիրքորոշումը հակամարտությունների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հարցում:

---

ՀՆԱ աճը և սպառողական գների սղաճի ցուցիչները ներկայացնում են 2008թ. համար նախատեսված տվյալները: ՀՆԱ և ՀՆԱ մեկ շնչի հաշվով տվյալները ներկայացված է 2007թ. հիման վրա:

Աղբյուրներ. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն, Հայաստանի հանրապետության կենտրոնական բանկ, «Էկոնոմիստ» պարբերական, Ֆիթչի վարկանիշ , Արժույթի միջազգային հիմնադրամ, համաշխարհային բանկ, Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկ, Սոսիետե Ժեներալ:

DFID Department for International Development

**DFID, the Department for International Development:**
leading the British government's fight against world poverty

ՍԻՎԻԼԻԹԱՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ

THE CIVILITAS FOUNDATION